



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ԿՐԵԱՏԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԵՐԵՄԱԿԱՐԴԱԿԱՆ ԿՈՍ-  
ՍՈՒՆՆՈՍԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱ-  
ՑԻՈՆԱԼԻ ԾՐԱԳԻՐԸ ՅԵՎ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929



# ԿՈՄԱՅԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԵՐԵՄԱԿԱՐԴՎԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԵՐԱԳԻՐԸ

864

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

A I/8130

16391



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂՄԱՆՅԱ - 1929

ՊԵՏՐՈՎԻ Բ ՏԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆՈՒԽ

Գալ. № 846 Հրամ. № 1018

Գրան. № 2707р. Տիրամ 6,00

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՏՈՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԾՐԱԳԻՐԸ

(Ընդունված ԿՄԴ-ի V կոնգրեսում)

Կապիտալիզմն արտադրության պրոցեսս ներգրավեց բանվոր դասակարգի յերիտասարդության և յերեխաների հոկյական մասսաներ, անխնա շահագործան լինթարկելով նրանց Բանվոր դասակարգի մասներից ամենաշատ շահագործման լինթարկվում ե բանվոր յերիտասարդությունը: Եթ զարգացման իմպերիալիստական շրջանում կապիտալիզմն ավելի ուժեղացրեց ճնշումը բանվոր յերիտասարդության վրա, բայց միաժամանակ նա նոր ուժեր սթափեցրեց նրա շարքերում: Նա պայմաններ ստեղծեց բանվոր յերիտասարդության մարտական կամքի և պրոլետարական դասակարգային զիտակցության զորեղ զարգացման համար, նա ուժեղացրեց նրանց միանալու ձգտումը: Պրոլետարական դասակարգային պայքարի շրջանակներում ծագեցին առաջին պրոլետարական յերիտասարդական կազմակերպությունները:

Առաջին պրոլետարական յերիտասարդական միությունները կազմակերպվեցին իմակերիալիզմի ծագման հետ ՏՕՀ դարի վերջում՝ Եվ ՏՏ դարի սկզբում՝ հակամազերիտական պայքարի, բանվոր յերիտասարդության տնտեսական շահերի պաշտպանության

յեվ կազմակերպության անդամների սոցիալիստական դաստիարակության նշանաբանի տակ:

Բանվորական շարժման մեջ իր ազգեցության ընդլայնման հետ զուղընթաց, ռեֆորմիզմը փորձ արեց իր ձեռքը զցել և պրոլետարական յերիտասարդությունը Արևոտության վորտեհի նրան հաջողվում եր արդ վորոշ չափով, նա ձգաւում եր յետ պահել յերիտասարդությունը բոլոր տեսակի պայքարից և վերածել նրա կազմակերպությունները զուտ լուսավորական միությունների: Սակայն նրա համար դժվար եր սահմանարել տարերային ուժով առաջ ընթացող յերիտասարդության մարտական եներգիան: Սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունները դեռ մինչ համաշխարհային պատերազմը հենարան եյին հանդիսանում բանվորական շարժման հնդավիուսական ձախ թերթի համար:

Կապիտալիզմի գիմ պայքարն անհրաժեշտություն և դարձնում բանվոր դասակարգի միջազգային գործունեյությունը և նրա կազմակերպությունը առանձին պետությունների սահմանների վրայից: Հեղափոխական պրոլետարական յերիտասարդությունը նույնպես ընդունեց շուտով, վոր նրա պայքարը կարող է հաջող ընթանալ միայն այն դեպքում, յեթե նա մղվի միջազգային մասշտարով: Զնալած սոցիալ-դեմոկրատիակի ռեֆորմիստական եկեմենուների դիմադրության, բանվոր յերիտասարդությունը, միջազգային պրոլետարիատի լավագույն մարտիկներից մեկի՝ Կարլ Լիբկնեխտի ղեկավարությամբ, ստեղծեց իր Յերիտասարդական Խոտերնացիոնալը:

Դեռ 1907 թվին պրոլետարական յերիտասար-

դական միությունները միացան սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների միջազգային համախմբման մեջ:

Շտուտգարտում հրավիրված նրա սահմանադիր կոնգրեսում, հեղափոխական մարքսիզմի վուով, սահմանվեցին պրոլետարական յերիտասարդական շարժման հիմնական պրինցիպները: Նախապատերազման շրջանում սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների միջազգային միությունը մեծ ոգնություն ցուցաբերեց բանվոր յերիտասարդության նվաճման և սոցիալիստական դաստիարակության գործում, հատկապես միլիտարիզմի դեմ պարբերում:

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և միջազգային հեղափոխության եպոխան, վորի սկիզբը հանդիսացավ այդ պատերազմը, սթափեցրին և շարժման մեջ դրին քաղաքի և գյուղի աշխատավոր յերիտասարդությունը: Նրանք արթնացրին գաղութներում միլիոնավոր յերիտասարդ վարձուստրուկներ իրենց ծանր քնից և միացրին նրանց հեղափոխական մարտական ֆրոնտին:

Բանվոր յերիտասարդությունը քաղաքական պայքարի բարձրանալով, պատերազմի և համաշխարհային հեղափոխության բոցերում, մասսայաբար համախմբվեց կոմմունիզմի դրոշների տակ:

Այն ժամանակ, յերբ իմպերիալիստական պատերազմի շրջանում 1914—18 թ. թ. համարյա վողջ սոցիալ դեմոկրատական կուսակցություններն անցան բուրժուազիայի կողմը, պրոլետարական յերիտասարդական կազմակերպությունների մեծամասնությունը և Յերիտասարդական Խնտերնացիոնալը հավատարի

մնացին հեղափոխական դասակարգային պայքարի սկզբունքներին։ Հրդ ինտերնացիոնալի կուսակցությունների կողմից ամոթանքի լենթարկված և վոտնահարված հեղափոխության դրոշը նորից բարձրացվեց պրոլետարական յիրիտասարդության կողմից բայց էիկիների հետ միասին։ Անզամ այնտեղ, վորանդ յիրիտասարդական միությունների պաշտոնական ղեկավարությունը հետեւում էր դավաճանական սոցիալգեմոկրատիային, անզամ այդ միություններում ըստեղծվում եյին ուժեղ ուղղակիցին խմբեր։ Իմպերիալիստական պատերազմի զառող ու մաքրող կրակում պրոլետարական յիրիտասարդական շարժումն ավելի ու ավելի էր ազատվում իր սկզբնական թուլությունից և առաջ էր ընթանում գեղի խսկական բալլարկությունները։ Քանի վոր բանվոր դասակարգը յիրելը ընթանական մեծ մասում չուներ իր հեղափոխական կուսակցությունները, յիրիտասարդական կազմակերպություններն ինքնուրույն քաղաքական ոլալքար եյին մզում ընդգեմ իմպերիալիստական պատերազմի, ընդգեմ բուրժուազիայի և նրա սոցիալգեմոկրատական սպասարկուների, դգալի չափով հող պատրաստելով պրոլետարական հեղափոխական կուսակցությունների կազմակերպման համար։

Պրոլետարական դիկտատուրայի հաստատումը Ռուսաստանում և Խորհրդային Միության ծագումը հսկայական չափով նպաստեցին հեղափոխական յիրիտասարդական շարժման զարգացմանը ամբողջ աշխարհում։

Յիրիտասարդական ինտերնացիոնալը, վորը պատերազմի ժամանակ բարձր էր պահել հեղափոխության

զրոշը, առաջիններից մեկը լեզավ Կոմմունիստական Ինտերնացիոնալ մանողներից և վերածվեց Կոմմունիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալին Բանվոր ու աշխատավոր յերիտասարդության միլիոնները կտպիտալիստական յերկրներում, Խորհրդավոր Միության մեջ և գաղութներում ներկայումս պալքարում են Յերիտակոմինտերնի զրոշի տակ և նրա լոկունգների համար:

Յերիտակոմինտերնը Շտուտտոգարտում հիմնադրված յերիտասարդական Ինտերնացիոնալի որինական ժառանգն եւ Նա վողջ յերկրի տասնչակ հազար յերիտասարդ պլութատարների ձեռքի գործն եւ, վորոնք մարդասպան համաշխարհային պատերազմի ժամանակ պալքարում ելին հանուն հեղափոխության և ծանր աշխատանքի մեջ, զեմ առ զեմ զնալով բոլոր դավաճաններին, կտուցում ելին Յերիտասարդական Ինտերնացիոնալը: Յերիտակոմինտերնը մարմնացումն ե յերիտասարդ մարտիկների հերոսական պայքարի, վորոնք զոհարերել են իրենց ազատությունն ու կյանքը հեղափոխության մարտերում, միլիտարիզմի և սպիտակ տերրորի զեմ ուղղված պալքարում, հանուն իրենց դասակարգի մեծ գործի: Յերիտակոմինտերնը կազմակերպում և զեկավարում ե բոլոր յերկրների բանվոր և չքավոր զյուղացի յերիտասարդությունը, գաղութների աշխատավոր յերիտասարդության միասնական պայքարն ընդդեմ կապիտալիստական շահահագործման և իմպերիալիստական ճնշման: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի զրոշի տակ, լինելով աշխատավոր յերիտասարդության իսկական համաշխարհական կազմակերպություն, Յերիտակոմինտերնը

գործում ե և պալքարում կոմմունիստական ինտեր-  
նացիոնալի շարքերում, Նրա խոշոր խնդիրը կալա-  
նում ե նրանում, վոր կոմմունիստական ինտերնա-  
ցիոնալի հոմար ապահովի յերիտաստրդությունը, հե-  
տեազիս և ապագան, քանի վոր այն շարժումը, վորն  
իր հետ ունի աշխատավոր յերիտաստրդությունը, չի  
կարող վոչնչացվել, նրան և պատկանում ապագան և  
հաղթանակը:

Իր ծրագրով Յերիտկոմինտերնը հայտարարում  
ե իր աշխարհայացքը, իր սկզբունքները, իր նպա-  
տակները:

Յերիտկոմինտերնը հանդիսանում է կոմինտերնի  
սեկցիա յեվ աշխատում ե նրա ծրագրի յեվ կանոնա-  
դրության հիմունքներով, Այդ հիման վրա յել կառուց-  
ված ե նրա սեփական հատուկ ծրագիրը, վորը և ուսմա-  
նում ե նրա առանձնատուկ խնդիրները կոմմունիս-  
տական ինտերնացիոնալի պալքարի շրջանակներում  
հանուն կոմմունիզմի:

### ԽՊԵՐԻԱԼԻԶՄԻ, ԳԱՏԵՐԾԱՄՆԵՐԻ ՅԵԼ ՄԻԶԱԿԱՑԻՒՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՐԱԽԱՆ

Կապիտալիզմը, վորի լուծը ներկայումս ծանրա-  
ցած ե մարդկության ճնշող սհծամտանության վրա,  
ծագում առավ մասնավոր սեփականության և ապրան-  
քային արտադրության զարգացման հիման վրա: Կա-  
պիտալիստական հասարակությունը բնորոշվում է  
նրանով, վոր այնտեղ արտադրության կարեոր և վըճ-  
ռական նշանակություն ունեցող միջոցները կապիտա-  
լիստների գասակարգի և խոշոր հոգատերերի սեփակա-  
նությունն (մոնոպոլիան) են կազմում, վորոնք շահ-

գործում են արտադրության միջոցներից զուրկ և դրա համար ել ստիպված իրենց բանվորական ուժը ծախող վարձու բանվորների (պրոլետարների) դասակարգը:

Արտադրությունը հանուն շահի և առանձին կապիտալիստների միջև տեղի ունեցող մրցությունը (կոնկուրենցիան) տանում են դեպի անպլանայնություն և արտադրության անիշխանություն։ Կապիտալիստական հասարակությունը, ինչպես և մասնավոր սեփականության և շահագործման վրա հիմնված ամեն մի այլ հասարակությունը, բաժանված է դասակարգերի, վորոնցից յերկու դասակարգ—պրոլետարիատը և բուրժուազիան հանդիսանում են հիմնական դասակարգերը։ Նրանց միջև մշտական պայքար և տեղի ունենում, վորն արդյունք և նրանց բաժանող անհաշտ հակասությունների։ Շահագործման հարաբերությունները, կապիտալիստական դասակարգի (բուրժուազիալի) տնտեսական տիրապետությունն իրենց քաղաքական արտահայտությունն են դանում բուրժուական պետության մեջ։ Պետությունն իր բոլոր ձեերով հանդիսանում է տիրող դասակարգի իշխանության և բռնության կազմակերպություն։ Բուրժուական պետությունը, ինչքան ել բազմազան լինեն նրա ձեվերը (միապետություն, հանրապետություն), իրենից ներկայացնում է վոչ այլ ինչ, քան տիրող կոպիտալիստական դասակարգի ճնշման կազմակերպություն, նրա շահագործական տիրապետության պահպանման յեվ իրենց ազատազրմանը ծգտող բանվոր դասակարգի յեվ ամբողջ աշխատավորության կեղեքման համար։

Կապիտալիզմի զարգացման որենքները բերին հանգեցրին կապիտալի մշտական աճող միախմբման (կոնցենտրացիայի, ցենտրալիզացիայի), կապիտալիստական հզոր միությունների կազմակերպման (կարտելներ, սինդիկատներ, արեստներ), վորոնք բացառիկ տիրապետության հն հասնում (մենաշնորհներ) ամրող ինդուստրիաների և արտադրության ամրող ճյուղերի վրա:

Արդյունաբերական կապիտալը միահուսվում և բանկային կապիտալի հետ, վորպես ֆինանսական կապիտալ վորը և կապիտալիստական տնտեսության տիրապետող ձեն և գառնում: Դրա հետեանքով արդյունաբերական կապիտալի տիրապետության հալուխան իր գերակշռող «աղատ մրցակցությամբ» 20-րդ դարի սկզբից վեր և ածվում կապիտալիզմի վերջին պատմական եպօխային ընդհանրապես—իմակերիալիզմի, ֆինանսական կապիտալի մենաշնորհային տիրապետությամբ հանդերձ:

Արդյունաբերական կապիտալիզմի շրջանում տիրապետող՝ ապրանքների արտահանության փոխարքն, իմակերիալիզմի ընորոշ հատկությունը, կապիտալների արտահանումն և, վորը և կապված և կապիտալիստական խմբավորումների միջև սրվող պարտարի հետ, վոր մղվում և հումուկթի հժան աղբյուրների, վաճառահանման շուկաների և կապիտալի գործադրման շրջանների համար: Յեթե կապիտալիստական պետությունները, մինչ իմակերիալիստական եպօխայի զարգացման շըրջանում, արդին քաղաքականապես և տնտեսապես լինթարկեցին իրենց լերկըազնդի մեծագույն մասը՝ զաղութների, կիսադաղութների և աղղեցության շրջան-

ների մըջի, տպա զարգացման իմպերիալիստական աստիճանի վրա աշխարհի բաժանումն արդեն կատարված է, և պայքար և ծաղում նրա վերտրաժանման համար:

Առանձին տղային կապիտալիստական իմբարդութեանները կատաղի պայքար են տանում աշխարհի վերաբաժանման, զաղութների, վաճառահանման շուեկաների, կապիտալի գործազրման տեղերի, հումույթի և վառելանյութի համար, այդ նպատակներին ողտագործելով պետական իշխանությունը: Այդ մշտական պայքարն անխուսափելիորեն առաջ և բերում զինված ընդհարութեան և իմպերիալիստական կափման, վորոնք տանում են դեպի համաշխարհային պատերազմներ:

Իմպերիալիզմի մեջ կապիտալիստական սիստեմը հասնում է իր զարգացման բարձրագույն աստիճանին: Իմպերիալիզմը հսկայական չափերով բարձրացնում է համաշխարհային տնտեսության արտադրական ուժերը և իր ազդեցությանն է լենթարկում ամբողջ աշխարհը: Սակայն միաժամանակ իմպերիալիզմը պարագիտային վերասիրման, քայլքայման, կապիտալիզմի անկման նշաններ և հայտնաբերում. նա հսկայական չափերով սրում և կապիտալիզմի ներքին հակասություններն ու կոնֆլիկտները և գրանով անխուսափելիորեն դեպի կործանում և տանում վողջ կապիտալիստական սիստեմը: Ֆինանսական կապիտալը, վորը բոլոր ասպարեզներում ավելի մեծ չափերով և հասնում մոնոպոլիայի, հենց դրա հետեւանքով կծկում և խանգարում է կապիտալիստական հասարակակարգի շրջանակներում արտադրական ուժերի ավելի բարձր զարգացման հնարավորությունները: Ամբողջ իշխանությունը գրա-

Նըվում ե մի փոքրաթիվ ֆինանսական մտղնատների (Փինանսական ոլիգոպիսիա) ձեռքին, վորոնք ինչպես պարագիտներ կպած են հասարակության մարմնին: Իմպերիալիզմը ծալրահեղորեն սրում ե շահագործողների և շահագործվողների միջին ընկած հակասությունները, իմպերիալիստական պետությունների և գաղութների հակասությունները, բաժանում ե մարդկությունը ճնշող և ճնշվող ազգերի, ալդ հակասությունների բազմությունների մեջ ճնելով համաշխարհային հեղափոխություն:

Ընդսմին իմպերիալիզմն առաջ ե բերում արտադրության միջոցների այնքան հեռու գնացող կոնցենտրացիա, աշխատանքի հասարակայնացում, բանվոր զասակարգի և նրա կազմակերպության աճում, շահագործվողների լայն խավերի հեղափոխականացում, վորդրանով իսկ նա ստեղծում ե բոլոր նախադրյալները սոցիալիզմի հաղթանակի համար:

Ալդ հիմնական հեղափոխական տեհնղենցիան, սակայն, ժամանակավորապես կանգնեցվում ե բանվոր զասակարգի վորոշ մասերի զնմամբ իմպերիալիստական բուրժուազիայի կողմից, զաղութների և կիսագաղութների մասսաների հեղափոխական շարժումներից վախեցած ազգային բուրժուազիայի դավաճանությամբ: Իմպերիալիստական մեծ պետությունների բուրժուազիայի տիրապետող դրությունը համաշխարհային շուկայում և զաղութների ու կիսագաղութների թալանումը բերում ե գերշահ, վորը նա ոգտագործում ե՝ բարձրացնելու համար «իր» բանվորների վորոշ մասի աշխատավորձը, վորպեսզի դրանով շահագրգոհի նրանց «հալրենական» կապիտալիզմի զարգացման, գաղութ-

հերի կողոպտման համար և գրավի նրանց իմպերիալիստական պետության կողմը։ Արդ ճանապարհով իմպերիալիզմը բանվոր դաստակարգի մեջ ստեղծում է կինսական բարձր մակարդակով և կոնսերվատիվ դիրքավորմամբ մի շերտ—բանվորական արիստոկրատիայի շերտը։ Այդ բանվորական արիստոկրատիան և բանվոր դաստակարգի այն բյուրոկրատական վերնախավերը (պրոֆմիությունների զեկավար կազմը և այլն), վորոնք միահյուսվում են կապիտալիստական պետական հիմնարկների հետ, բանվորական շարժման մեջ կազմում են ունիորմիզմի և սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական հիմքը։ Սոցիալ-դեմոկրատիան ալգափուզվ կապված է իմպերիալիզմի հետ և յերեան և բերելի բեն վորպես բուրժուազիայի անմիջական գործակալը բանվոր դաստակարգի շարքերում և կապիտալիստական հասարակության լավագույն հենարանը։ Բայց միաժամանակ իմպերիալիստական հակասությունների սրումը, բանվորների լայն մասսաների զրության վատթարացումը, ռազմական կոնֆլիկտների հոկաբական ծախսերն ու լուծը, միքանի պետությունների դերակշուղ զրության վոչնչացումը համաշխարհային շուկայում, գաղութների բաժանումը և այլն, — խախտում են ոճֆորմիզմի հիմքերը մասսաների մեջ։

Իմպերիալիզմը քայլայվող յեվ մեռնող կապիտալիստականն եւ Նա կապիտալիստական զարգացման վերջին եռապն եւ ընդհանրապես, Նա նախադուռն եւ համաշխարհային սոցիալիստական հեղափոխության։

Կապիտալիզմը բնորոշում է տռանձին յերկրների և շրջանների տնտեսական յեվ քաղաքական զարգացման անհամաչափությունը։ Իմպերիալիզմն ավելի է

սրում այդ անհամաչափությունը, դրա համար ել համաշխարհացին հեղափոխությունը լեզակի և մի անգամ տեղի ունեցող ակա չի հանդիսանում: Նա ընդդըրկում և մարդկացին պատմության մի ամբողջ եպոխա, վորը լի չե հսկայական սոցիալական մարտերով, պատերազմներով և հեղափոխություններով: Դրա համար ել սոցիալիզմի հաղթանակը հնարավոր և սկզբում միքանի, փոքրաթիվ յերկրներում և անգամ մեկ տասնամյակին յերկրում, վորապես գեղի սոցիալիզմի համաշխարհացին հաղթանակը տանող մի ետապ:

Առաջին համաշխարհային խմբերիալիստական պատերազմը 1914—1918 թ. նոտեց տասնյակ միլիոն սպանվածներ և վիրավորներ: Նա ամենուրեք տատանեց և կազմալուծեց ֆինանսները, արդյունաբերությունը, տրանսպորտը և աշխատավորների լայն մասսաները մատնեց սովի և կարիքի: Այդ պատերազմը չտեսնելով ցնցեց ամբողջ կապիտալիստական սիստեմը և սկիզբ հանդիսացավ նրա ընդհանուր կրիզիսի, անկման, վորը հղի լի նոր հղոր պատերազմներով, վորը կրոլորվի համաշխարհային կապիտալիստական սիստեմի խորտակմամբ և միջաղղային հեղափոխության հաղթանակով:

Միջաղղային հեղափոխությունն սկսվեց սուսական պրոլետարիատի հոկտեմբերյան հաղթական ապջատամբությամբ: Յեվրոպայի և Ասիայի հսկայական տերրիտորիայի վրա, վորն աշխարհի մեկ վեցերորդ մասն և կազմում, բանվոր դասակարգը նվաճեց իշխանությունը և կազմեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: Խորհրդային Միության մեջ կառուցվում և սոցիալիզմ: ԽՍՀՄ դա-

ուավ այսպիսով միջազգային բանվոր դասակարգի հենարանը, վորը ունի հիմա նաև պետական հենարանն ԽՍՀՄ կենդանի որինակը հեղափոխականացնող ազգեցություն և ունենում աշխատավոր մասսաների վրա միայն նրա գոյությունը վկարում և խմբերիութղմի մահացու հիվանդության մասին:

Ներկայումս համաշխարհային տնտեսության շրջանակում մեկ մեկու հակառակված են յերկու անհաշտ հակասությունների մեջ զտնվող հասարակական սիստեմներ—իմպերիալիզմի սիստեմը յեվ սոցիալիզմի սիստեմը: Մինչև առանձները զինված ներսից դասակարգային պայքարով և արտաքին հակասություններով ջլասվող իմպերիալիստական պետությունները կոփում են միասնական ֆրոնտ ընդդեմ ԽՍՀՄ-ի, առաջին պրոլետարական պետության, վորի շուրջը համախմբվում են ամբողջ աշխարհի հեղափոխական ուժերը:

Իմպերիալիզմը ձգտում է նոր անտեսական բլոկադալի և հականեղափոխական վասնձգությունների, ինտերվենցիալի և պատերազմների միջոցով վոչնացնել ԽՍՀՄ: Սակայն նա դըբանով իսկ փորում և իր զերեզմանը, վորի մեջ պիտի գլորեն նրան ամբողջ աշխարհի հեղափոխական ուժերը:

Ռուսական հեղափոխության հետեւյ հեղափոխությունը Ֆինլանդիայում և հեղափոխությունների ալիքը Միջին Յեվրոպայում, նաև և առաջ Գերմանիայում, Ավստրիայում և Հունգարիայում: Հեղափոխության առաջին ալիքը Խորհրդային Միությունից դուրս 1918—1921 թ.թ. վերջացավ պրոլետարիատի պարտությամբ, սոցիալ-դեմոկրատիայի դավաճանու-

թյան և ուժեղ ու փորձված կոմմունիստական կուսակցությունների բացակայության շնորհիվ։ Սակայն միշտագույն բանվոր զասակարգը դուրս էնկավ նրանից հոկայական նվաճումներով—Խորհրդացին Միությամբ և կոմմունիստական Խնտերնացիոնալով։

Հեղափոխության առաջին մեծ, հետպատերագոյան ալիքից հետո կապիտալիստական զասակարգին հաջողվեց մեծամաս լերկրներում ուժեղ քաղաքական և սոցիալական ռեակցիաների ու մասսաներին ճնշող տնտեսական ձեռնարկումների միջոցով իրագործել կապիտալիզմի մասնակի և ժամանակավոր ամրացումը (կապիտալիզմի ստարիլիզացիան)։ Բայց այդ ստարիլիզացիայի պայմաններում բարձրանում են նոր հոկայական, մինչև առաջին համաշխարհային պատերազմը չտեսնված չափեր ընդունող հակասություններ։ Բանվոր զասակարգն ու աշխատավորությունը փորձում են նոր, հզոր մարտերում վոչ միայն յետ մղել կապիտալիզմի հարձակումը, այլև հարձակողականի անցնել նրա գեմ։ Գերմանիան, վորը նորից վերաձգիլ և իմադերիխալիստական պետության, թատերաբեմ և հանդիսանում նոր ու մեծ չափեր ընդունող զասակարգային կոփմերի։ Հանքագործների 1926 թվի ընդհանուր գործադրությունը ցույց տվեց անդիխական իմունիտալիզմի խոր կրիզիսը։


Վիեննայի բանվոր զասակարգի ապստամբությունը 1927 թ. հուլիսին հայտնարեց հեղափոխական զարգացման պրոցեսաներ լիվրոպակտն պրոլետարիատի մասսաներում։ Զորեղ զործադրությունների և չտեսնը վածան սոցիալական մարտերը ցնցում են վողջ կապիտալիստական լերկրները։ Գաղութների և կիսա-

գաղութների ճնշված ժողովուրդները միլիոնավոր  
մասսաներով պալքարի լելան աղքալին ու սոցիալա-  
կան կեղեքումից տղատակրվելու համար։ Զինատա-  
նում բռնկեց հեղափոխությունը, վորը ամենալուրջ  
սովորնալիք դարձավ իմալերիալիստական պիտություն-  
ների հիմքերի համար։ Սիրիան, Մարոկկոն, Խոզոնե-  
զիան պարզեցին ապստամբության դրոշը։ Միջին և  
Հարավային Ամերիկայում, Մեքսիկայից մինչև Արգեն-  
տինա ամբողջը լիռում ու տարածվում է։

8/30  
Սպառնալիքի տակ դրված կապիտալիստների  
դասակարգը, իր տիրապետության համար, ավելի յե-  
սկառում գործադրել անքողարկ դիկտատուրայի մե-  
թոդներ։

16391  
«Ֆեմոկրատական» իրավունքները վերացվում  
կամ կրծատվում են, պարլամենտարիզմը դեպի ան-  
կումն և զնում, կատարողական իշխանության դիրքը  
պետության մեջ ավելանում ե, իշխանության ապա-  
րատն ուժիղացվում ե ճնշման նոր կազմակերպություն-  
ներով։ Առանձնահատուկ պարմաններում, բուրժուա-  
կան իմալերիալիստական ռեակցիայի այդ զարգացումն  
ընդունում ե ֆաշիզմի ձև։ Թաշիզմն ոգտվում ե սո-  
ցիալական զեմանուգիւմի միջոցներով, ոգտագործում  
ե աղքատացող մանր բուրժուազիայի և գյուղացիու-  
թյան դժգոհությունները, ոգտագործում ե նաև պրո-  
լետարիատի զանազան ընկած (ապագասակարգայնո-  
ցած) ելեմնները, վորապեսդի խեղդի հեղափոխական  
բանվորական շարժումը։

Նա ներկայացնում ե իրենից վոչ այլ ինչ, յիթե  
վոչ խոշոր կապիտալի տերրորիստական դիկտատու-  
րայի նորագույն ձևը։



Բուրժուադիան գործադրելով ֆաշիզմի մեթոդները, հարկավոր գեպքում քողարկում և նրանց սոցիալ-գեմոկրատիայի հետ կուլիցիա կազմելով, կուլիցիա, վորը նպատակ ունի մեկուսացնելու աշխատավորության մարտական կամքը և հեշտացնելու բուրժուադիայի համար նրանց խեղդելու խնդիրը:

Սակայն յուրաքանչյուր քայլ, վոր անում և կապիտալիզմի իր տնտեսության վերականգնման ուղղությամբ, գնվում և աշխատավորության շահագործումն ուժեղացնելու գնով և այդպիսով տանում և գեղի կապիտալիզմի անմիջական հիմքերը խախտող զանակարգային հակոսությունների նոր սրումը՝ Միաժամանակ, ամեն մի նոր փոփոխություն, վոր աեղիք ու ունենում առանձին կապիտալիստական պետությունների ուժերի փոխհարաբերությունների մեջ, որում և իմպերիալիստական հոկասությունները նրանց միջեւ, վորը նոր իմպերիալիստական պատերազմների վտանգ և բերում իր հետ և դրանով իսկ վողջ կապիտալիստական հասարակակարգի նոր ցընցումները՝ իմպերիալիզմի ճնշման ուժեղացումը կաղութներում և կիսագաղութներում հզոր խթան և հանդիսանում ազգային ազմատագրական շարժումների և հեղափոխությունների համար, վորոնք ուղղվում են իմպերիալիզմի դեմ՝ իմպերիալիզմը փակուղու առաջդրեց մարդկությունը՝ Նրան ազատազրել կարող և միայն պրոլետարական համաշխարհային հեղափոխությունը՝ Կապիտալիզմի խորտակումը դառավայսպիսով միջազգային քանվոր դասակարգի անմիջական մարտական խնդիրը՝ Այդ խնդիրը կարող է լուծվել միմիայն բոնի հեղափոխության միջոցով:

Հաջորդական, աստիճանական գեմոկրատական դարպացումը կապիտալիզմից սոցիալիզմ, վորի մասին բարբաջ և և սոցիալ-դեմոկրատիան, հակասում և հասարակական դարպացման հիմնական փաստերին և որենք ներին և հանդիսանում և վոչ այլ ինչ, յեթե վոչ իառերայություն, վորի յետեւում թագնվում և ամենաամութալի համագործակցությունը բուրժուազիայի հետ կապիտալիստական սիստեմի ամրացման և պահպանման գործում:

Համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը բաղկացած և մի շարք բազմատեսակ պրցեսներից—զուտ պրոլետարական հեղափոխություններ, բուրժուա-դեմոկրատական հեղափոխություններ, վորոնք ներանում են սոցիալիստական հեղափոխությունների, ազգային ազատագրական կուիլսեր յեզ գաղութային հեղափոխություններ։ Իրենց ամբողջությամբ նրանք տանում են դեպի պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրա։

«Սոցիալական հեղափոխությունը չի կարող տեղի ունենալ այլ կերպ, քան վորպես մի եպոխա, վորը միացնում և պրոլետարիատի քաղաքացիական պատերազմը բուրժուազիակի դեմ տռաջավոր կապիտալիստական յերկրներում և մի շարք գեմոկրատական և հեղտափոխական, վորոնց թվում և անզարդացած հետամնաց և ձնշված ազգությունների ազգային ազատագրական շարժումների հետ» (Լենին)։

Բանվոր գասակարգն առանց կապիտալիստական սիստեմի տապալման չի կարող ազատագրել իրեն և դրանով իսկ ազատագրել բոլոր ձնշված և շահագործվող աշխատավորներին։ Դրա համար ել նա

հանդիսանում և մինչեւ վերջը հեղափոխական դաստիարակ:

Բանվոր դասակարգը պետք և պայքարի հանի քաղաքի և գլուզի աշխատավորությունն ընդդեմ կապիտալիզմի: Նա պետք և չքավոր գյուղացիության և գաղութների ճնշված աշխատավորական մասսաների հետ գաշինք կնքելով խորսուկի բուրժուազիայի իշխանությունը, հաստատի պրոլետարիատի դիկտուրա (խորհուրդների իշխանություն), եքսպորպրիացիայի ցննթարկի խոշոր հողային սեփականությունը, բանկերը, արգունաբերությունը, տրանսպորտը, պետական սեփականություն գարձնելով՝ նրանց (պրոլետարական ազգայնացում): Պրոլետարիատն իր դիկտուառայից ոդտվում եւ անողոքաբար փշրելու համար շահագործող դասակարգերի դիմադրությունը և խորհուրդների միջոցով իրագործելու պրոլետարական դիկտուառաւան: Այդ ամուր քաղաքական և սոցիալական հիմքի վրա բանվոր դասակարգը միություն կազմելով աշխատավոր գյուղացիական մասսաների հետ, կկառուցի սոցիալիզմ և հնարավորություն կտա մարդկությանը հասնել կոմմունիստական հասարակության:

Բանվոր դասակարգը կարող և հասնել այդ նըսպատակին միմիայն այն դեպքում, յեթե նա ունի դեկավար հանճինս կոմկուսակցության, վորը կազմակերպում և իր շարքերում պրոլետարիատի ամենաառաջավոր, զոհողությունների ամենից ավելի պատրաստ, ամենազիտակից յեվ փորձված ելեմենտները յեվ ներկայացնում և բանվոր դասակարգի շահերն ու նպատակներն իրենց ամբողջությամբ վերցրած:

Կոմմունիստական կուսակցությունների գոյությունը յուրաքանչյուր յերկրում պրոլետարական դիկտատուրայի համար մղվող հաջող պալքարի նախապայմանն և հանդիսանում:

Համաշխարհային հեղափոխության հաղթանակի համար նյութական պայմաններն ակներեվ են. Այդ հաղթանակը կախված է բանվոր դասակարգի յեվ նրա հետ միություն կնքած աշխատավորության և ճնշված խավերի մարտական կամքից յեվ հզորությունից. Դրա համար հարկավոր և զիրջնականապես ազատազրել բանվոր դասակարգը ոեֆորմիստական իլլուզիաներից, վոչնչացնել սոցիալ-դեմոկրատիալի ազգեցությունը և կոմմունիստական կուսակցության և կոմինտերնի դեղավարությամբ պալքարի հավաքել աշխատավոր մասսաները. Իշխանության նվաճման հիմնական նախապայմանը հանդիսանում է բանվոր դասակարգի մեծամասնության նվաճումը կոմմունիզմի սկզբունքների ու նպատակների շուրջը. Կոմինտերնի ստրատեգիան և տակտիկան պրոլետարիատին ցուլց են տալիս հաղթանակի ճանապարհը:

## ԲԵՆՎՈՐ ՑԵՐԻՑԵՍՏՐԴՈՒԹՅՈՒՆՆԵԼ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՑԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԹՔԱՆՈՒՄ

Կապիտալիստական հասարակակարգի դասակարգային բնույթը լիակատար պարզությամբ իր արտահայտությունն է գտնում նաև բանվոր յերիտասարդության ներկա կացության, հասարակության մեջ նրա ունեցած տեղի մեջ:

Դասակարգերի բաժանումն իր լիակատար արտահայտությունն է գտնում նայեվ յերիտասարդության

մեզ։ Շահագործվող դասակարգի յերիտասարդությունը և տիրապետող դասակարգի յերիտասարդությունը իրար միջիվ ունեն նույնքան բան բնդիանուր, վորքան շահագործվող յևլ շահագործող յերկու դասակարգերը։

Այս ժամանակ, յերբ տիրապետող դասակարգի յերիտասարդությունը դատարկապորտ և արտոնչալիսավի դիրք և դրավում, ոգավում և բոլոր տեսակի տռավելություններով, արտօնություններով, խնամքով սովորելու հնարավորությամբ, յերբ նաև ստանում և կուլտուրայի, գիտության, գեղարվեստի բոլոր բարիքներն ու պատրաստում իրեն շահագործող և կեղեքող դասակարգի գերի համար, նույն այդ ժամանակ քաղաքի և գյուղի աշխատավոր յերիտասարդությունը կտպիտալիստական յերկբներում և գաղութներում—համահավասար բաժանում և հասակավոր բանվորների հետ դաժան վիճակը, անողոք կեղեքման առարկա անդիսանում։ Բանվոր յերիտասարդության դաստիարակության ալին չնշին պայմանները, վոր կան բուրժուական հասարակակարգում, միջոց և ծառայում նրանց ապագա շահագործման համար, վորին նրանք յենթակա յեն ամբողջ իրենց կրանքում, վորպես կապիտալի գարձու սարուկներ և մեքենանի հասարակ հավելվուծներ։

Յեթի հասակավոր բանվորների դրությունը կապիտալիզմի որոք չափաղանց ծանր և, ապա բանվոր յերիտասարդության դրությունն ուղղակի անտանելի յէ։

Դեռ վտղ յերիտասարդական հասակում բանվորական ընտանիքի տղաներն ու աղջիկները կապիտալիս-

տական շահագործման առարկա յին հանդիսանում է Բացի Խորհրդավին Միությունից, յերեխաների աշխատանքը զիռ տարածված և ամբողջ աշխարհում ամենասարսափելի չափերով ու անողոք ձևերով:

Հին ժամանակների տշակերտը, վորը վարպետին փոխարինող թեկնածուն եր, կորավ անհետ։ Աշակերտությունը ներկայումս միայն առիթ և յերիտասարդության ուժեղ շահագործման և կապիտալիստական յերկրներում անհետանալու վրա յի։ Արգյունաբերական տեխնիկայի զարգացման շնորհիվ կապիտալիստները հնարավորություն ստացան արդյունաբերություն ներդրավել յերեխաների և անշափահասների մասսաներ, վորպես անուսում, պրոֆմիությունից զուրկ ըանվորներ։ Պրոֆեսսիոնալ կրթություն ստանալը հատկապես դժվար և ազջիկների համար։ Գոյություն ունեցող բուրժուական-ռեակցիոն նախապաշտամբները կանանց աշխատանքի հանգեց արտադրության մեջ՝ կապիտալիստներն ոգտագործում են նրա համար, վորպեսողի հեռու պահեն ազջկան պրոֆեսսիոնալ դաստիարակությունից և ուժեղ շահագործեն նրան։ Բայց նույնիսկ այն գեղքերում, իերք պրոֆեսսիոնալ կրթության հնարավորություն և բացվում ազջիկների համար, աշտկերտելու ժամանակամիջոցը նրանց համար յերկար և, իսկ աշխատավարձը պատանիների վարձից ավելի ցածը կ։ Կապիտալիզմը պրոֆեսսիոնալ կրթություն և տալիս պրոլետարական յերիտասարդության մի փոքրիկ վերնախավին, նպատակ ունենալով այդ խավի ներկայացուցիչներից պատրաստել վարպետներ, հսկողներ և տեխնիկապես բարձր վորակ ունեցող բանվորներ։ Բայց անգամ այդ բարակ խավը, վորի պրո-

Փեսսիոնալ կրթությունը տեղի յե ունենում իհաշիվ  
բանվորների լայն խավերի, կապիտալիզմի զարգաց-  
մամբ ավելի կծկում ե, չնայած մի շարք տեղերում  
արդ կրթությունն ավելի բարձր վորակավորման ձեւ ե  
ընդունում։ Բանվոր յերիանասարդության մեջ բառի  
բուն իմաստով բանվորական արիստորիքատիա չկա։

Եերիխանների և պատանիների աշխատանքը հա-  
սակավորների աշխատանքներից եժան ե։ Սակայն յե-  
րիտասարդության աշխատանքի արտադրողականու-  
թյունը սովորաբար այնքան ել ցածր չե հասակավոր-  
ների արտադրողականությունից։ Արտադրության ժա-  
մանակակից մեթոդները հանգեցնում են նրան, վոր  
արդիունաբերության շատ ճյուղերում յերիտասարդու-  
թյան աշխատանքը հայլառարվում ե մեծահասակների  
աշխատանքին։ Սակայն մեծ մասամբ, յերը յերիտա-  
սարդ բանվորները կատարում են մեծահասակների  
նույն աշխատանքը, նրանք քիչ են ստանում կամ թե  
յերիտասարդությանը զանազան պատրվակներով ստի-  
պում են կատարել նույն աշխատանքը առանց փոխ-  
հատուցման (կեղծ աշկերտություն, կողմնակի աշխա-  
տանքներ և այլն)։ Բայց նույնիսկ այն դեպքում, յերը  
յերիտասարդության աշխատանքի արտադրողականու-  
թյունը ցածր ե մեծահասակներից, կապիտալիստը,  
շնորհիվ յերիտասարդության աշխատանքի չափազանց  
ցածր աշխատավարձին, դուրս ե բերում աշխատան-  
քից համեմատաբար ավելի շատ հավելվալ արժեք։ Կա-  
պիտալիստն ողտագործում ե յերեխանների և յերիտա-  
սարդության անկազմակերպվածությունը, թույլ դիմա-  
դրությունը, նաև հետամնաց, ցեխալին հայացքները  
պրոլետարիատի շարքերում, վորապեսզի իջեցնի լրի-

տասաբդության աշխատանքի զինը։ Իր Փիզիկական  
 թուլության հետևանքով և՝ դաստիարակություն, և կը ը-  
 թություն ստանալու անհրաժեշտության տեսակետից, լի-  
 րիտասարդությունը պետք է աշխատանքի հասուկնպաս-  
 տավոր պայմաններով ոգտվեր. սակայն կապիտալիստը  
 միանգամայն հակառակն և անումն չենց նրա համար,  
 վոր ըանվոր լերիտասարդությունը թույլ և և անզար-  
 գացած, կապիտալիզմը նրան ոգտագործում և շահա-  
 գործում և ավելի մեծ չափերով։ Յերկար շարունակվող  
 բանվորական որը (կողմանակի աշխատանքներ կատա-  
 րելիս, գպրոց գնալու, աշակերտելու և այլն պատճառնե-  
 րով) գերազանցում և մեծահասակների բանվորական  
 որվան, և ապա ցածր աշխատավարձը, գիշերային աշ-  
 խատանքը, առողջության համար մնասակար հիմնարկ-  
 ներում աշխատելը, աշխատանքի բոլորովին անբավա-  
 րար պաշտպանությունը դժբախտ գեղքերից, լիակտուար  
 անտարբերությունը գեպի լերիտասարդության լայն  
 մասսաների արտադրական կրթությունը, ձեռնարկա-  
 տերերի և վարպետների բարբարոսական վերաբերմուն-  
 քը, մասսայական զործազրկությունը և ինարկե, մեծամա-  
 սամբ առանց վորեն նպատակի, — ահա բանվոր յերի-  
 տասաբդության տիսուր վիճակը կապիտալիզմի որոք։  
 Բարձր աշխատավարձի և աշխատանքի լավ պար-  
 մանների համար մզվող պայքարի խոշորագույն խո-  
 չընդոտներից մեկը հանդիսանում է շատ հասակավոր  
 բանվորների ցեխային յելակետը, վորը ամենայն կերպ  
 պաշտպանվում է պրոֆմիության ոեֆորմիստական դե-  
 կավարների կողմից։ Նրանք համախ հանձինս յերի-  
 տասաբդ բանվորների տեսնում են միայն կոնկուր-  
 բենտների (մրցակիցների) և սառնասիրտ վերաբերմունք

հն հանգես բերում զեղի նրանց վիճակը։ Կապիտալիզմը  
հմտորեն ովտագործում և այդ ցեխային տրամադրու-  
թյունները՝ յերիտասարդ և հասակավոր պրոլետարնե-  
րին անջատելու համար, մյուս կողմից ել նրա աշխա-  
տավարձը ցած պահելու և վատթարացնելու աշխատան-  
քի պայմանները և մյուս կողմից՝ ավելի եժան յերիտա-  
սարդական աշխատանքի ողնությամբ ճնշում գործա-  
դրելու հասակավոր բանվորների աշխատավարձի և այլ-  
բուսափ մտկարգակի վրա։ Հատկապես ծանր են յերի-  
տասարդության աշխատանքի պայմանները մանր ար-  
դյունարերության և արհեստի մեջ, վորոնք փորձում  
են իրենց ազատել խոշոր արդյունարերության մըր-  
ցակցությունից աշակերտության անխնա շահագործման  
ճանապարհով։ Այս արդյունարերություններում զրա-  
համար ել լայն տարածված և «աշակերտությունը»  
վորպես շահագործումը քողարկող միջոց։ Դա վերա-  
բերում է հատկապես հետամնաց յերկրներին և զաղութ-  
ներին։ Արհեստի և մանր արհեստանոցներում աշխա-  
տող աշակերտությունը համարյա ամրողջովին հան-  
ձընված և ձեւնարկատերերի և վարդետների քմահա-  
ճույքին։

Յերիտասարդ բանվորունիները կապիտալիզմի  
համար առանձնապես անողոք և անամոթ շահագործ-  
ման առարկա յեն հանդիսանում և նրանց դրությու-  
նը ավելի վատ և, քան անգամ յերիտասարդ բանվոր-  
ների զրությունը։ Արհեստի և արդյունարերության մի  
շարք ճյուղեր գործադրում են համարյա բացառապես  
կանացի աշխատանքը և հատկապես տղջիկների աշխա-  
տանքը (տեքստիլ արդյունարերության, տնային բան-  
վորունիներ), այն ել յերկարատև բանվորական ժամա-

նակով և յերիտասարդներից ավելի ցածր չնշին աշխատավարձով։ Աղջիկների աշխատանքի գործադրութիւն աճում է, դրա թվում և առողջության համար միանգամայն միասնակարգ արդյունաբերություններում։ Յերիտասարդ բանվորուհիներին առանձնահատուկ ամսթալի կախման մեջ են գնում ձեռնարկատերերից և վարպետներից։ բանվոր դասակարգի և դյուզացիութիւն շարքերից հաղարակոր աղջիկներ, անտանելի անտեսական պայմաններից ստիպված բռնում են պունկության ճանապարհը։

Համաշխարհային պատերազմի շրջանում և հետագա տարիներին բանվոր յերիտասարդության կարգն զգալի չափով արվեց։ Անչափահասների լայն մասսաներ քշվեցին ճակատ վորպես թնդանոթային միս, իսկ նրանց և հասակավոր բանվորներին փոխարինելու համար զինվորական արդյունաբերության մեջ ելին ներգրավված յերկանու յերիխաների և յերիտասարդության նոր բանակներ։ Չստանալով կրթություն՝ նրանք անխնաշահագործման ելին լինթարկվում արգատեղ, և հաշվի չելին առնվում աշխատանքի պաշտպանության չնչին որենքները ձիւշտ ե, համաշխարհային պատերազմից հետո բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը նվաճեց բուրժուազիալից մի շարք ձեռնարկութեր սոցիալական ազահովության և բանվոր յերիտասարդության պահպանության որենքների ուղղությամբ, սակայն այդ որենքները չելին պահպանվում բուրժուազիալից կողմից կամ հետազայում յետ ելին վերցված։ Կրիզիսը հաղթահարելու, կապիտալիզմի ստարիլազացիալին հասնելու և համաշխարհային պատերազմի ավելումների ծախսերը բանվոր դասակար-

կի ուսերին բարդելու ցանկությամբ բուրժուազիան ուժեղացնում և պրոլետարիատի, հատկապես նրա լեռիտասարդության շահագործումը և անհամար գրոհներով փորձում և վատթարացնել նրանց դրությունն ու ապրուստի մակարդակը վազուց արդեն չտեսնված յածր աստիճանի հասցնելու համար:

Կապիտալիստական ռազիոնալիզացիան իր վասակար հետիւանքներով (աշխատավարձի իջեցում, մասսայական գործազրկություն, բանվորական որվա յերկարացում, սոցիալական պաշտպանության վատացում, աշխատանքի լարվածության չտեսնված լարում և բարձրացում) հատկապես շատ ծանր և աղդում բանվոր յերիտասարդության վրա: Նրա հատուկ հետեանքը յերիտասարդության համար արդյունաբերության մեջ աշակերտության թվի հետագա կրծատումն ե, վորովհետեւ ռազիոնալիզացիան ավելի շատ մեծ չափերով և փոխարկում սովորած բանվորներին չսովորած և կիստոսովը բանվորներով: Միաժամանակ նա ավելացնում և բանվոր յերիտասարդության գերը արդյունաբերություն ընդհանուրը պլրոցեսում: Կոնվելերի մոտ աշխատող յերիտասարդ բանվորների և անցյալ ժամանակների աշակերտների մեջ հսկայական տարբերություն դոյլություն ունի: Յերիտասարդ բանվորը ներկայումս զգալիորեն խոշոր գեր և խաղում և դառավ ավելի քան յերբեք անհրաժեշտ ու հիմնական մասը արտադրական պրոցեսսի: Բայց դա յերբեք չի հակառակ պարբերական, մասսայական անզործության յերիտասարդության և հատկապես զպրոցավարտ յերիտասարդ բանվորության մեջ, վորոնք հենց սկզբից արտադրության պրոցեսում իրենց ուժերը դոր-

ծաղրելու հնարավորություն չեն գտնում և ապադասակարգախնանում են:

Աշխատավոր գլուղացի լերիտասարդությունը կապիտալիզմի լերկրներում նույնպես հեծում ե անխնա շահագործումից: Յերեխաների աշխատանքը գյուղում ընդհանուր լերեռութ ե: Տնտեսական վատթար գրությունը վոչ միայն ստիպում ե չքավոր գյուղացիներին աշխատանքին մասնակից գարձնել իրենց լերեխաներին. լերեխաների աշխատանքը գյուղում տարածվում ե նաև վորպես վարձու աշխատանք: Բատրակ յերիտասարդության կյանքի և աշխատանքի պայմաններն ավելի վատ են, քան բանվոր լերիտասարդության պայմանները: Բատրակ և չքավոր լերիտասարդությունը ծանր աշխատանքի լի դատապարտված, չի ստանում վոչ մի կրթություն և հաճախ ստիպված ե քաղաքներում աշխատանք փնտոել Այնքան, վորքան կապիտալիզմի որոք, նրա անկման ներկա շրջանում տիրում ե պարբերական մասսայական անգործություն, այդ լերիտասարդությունը հաճախ լրացնում ե անգործների շարքերը, կամ ստիպվում բանակ մտնել կամ գաղթել ուրիշ լերկիր:

Միլիտարիզմը, վորը ծառայում ե իմպերիալիստական պատերազմների և սեփական լերկրի և գաղութների աշխատավորական մտսաւների կեղեքման նպատակին, իր համար զինվորներ և հավաքում նախ և առաջ բանվոր և գլուղացի յերիտասարդությունից: Միլիտարիզացիան նպատակ ունի թնդանոթային մսի վերածել լերիտասարդությունը իմպերիալիստական պատերազմների համար և շատ լերկրներում ընդդրկում ե յերիտասարդությունը նախադինակոչային պատ-

բաստության մեջ զեռ դպրոցական հասակում։ Կապիտալիստական զորանոցը ձգտում է ավտոմատի վերածել լերիտասարդ բանվորներին, վորոնց կարելի լինի հլու կերպով ուղղել իրենց դասակարգային լեզբայրակիցների դեմ թե յերկրի ներսում և թե զրսում։ Բանվոր և գյուղացի լերիտասարգության արյունով են ներկված իմպերիալիստական պատերազմների սաղմագաշտերը։

Դադութներում յեկ կիսագաղութներում բանվոր յերիտասարդության դրությունն զգալիորեն ավելի փառ ե, քան կապիտալիստական յերկրներում։ Այնտեղ յերիտասարդ պրոլետարիատը տառապում է ոտարերկրյա և տեղական շահագործման չլսված կըրկնակի լծի տակ, վորը հաճախ կրում է ֆեոդալական և նահապետական ձեւեր։ Մանը արհեստների և մանը տուերի լայն տարածումը, վորոնք ծանը պայքար են մղում իրենց գոլության համար, բերում ե իր հետ այնպիսի անողորմ շահագործում, վորի նմանը չգիտե՞թեզրոպալի և չյուսիսային Ամերիկակի աշխատավոր յերիտասարգությունը։ Այնտեղ յերեխաների աշխատանքն ընդհանուր յերեսույթ ե,

Արդյունաբերության (ամենից առաջ թեթև արդյունաբերության) զարգացման հետ կապված գաղութներում շարունակ յերեխաների և լերիտասարգության ավելի մեծ մասսաներ անխնա կերպով ներգրավվում են արտադրության մեջ։ Յերեխաները 4—5 տարեկան հասակից աշխատում են որական 15—18 ժամ ֆաբրիկաների խոնավ շինքերում, զուլնակի դազգյանների առաջ, հալվելյալ արժեք արտադրելով լոնդոնի, նյու-Յորկի յեկ Պարիզի բանկիրների հա-

մար: Աշխատավարձն արյունոտ ծաղր և նրանց հասցեին:

Լայնորեն տարածված և նաև յերեխաների և յերիտասարդության վայրագ ծեծը վարպետների և ձեռնարկատերերի կողմից:

Հուսահատական և զյուղացի յերիտասարդության վիճակը դադութներում և կիսազաղութներում: Իմպերիալիզմի իր հետ բերում և զյուղատնտեսական ազգաբնակության շարունակ աճող ազգատացում, չքավոր և հողագուրկ գյուղացիությունը և զյուղացի յերիտասարդությունը վեր և ածում պառւպերների (մուրացիկների), վորոնք քաշ են տալիս իրենց խղճակի մուրացկանային գոյությունը, իսկ նրանցից շատերը հաճախ փրկություն են զանում վարձու բանակներում կամ բանդիտների շրջանում: Խոշոր կալվածներում և պլանտացիաներում բատրակների տշխատանքի պայմանները շատ բանով չեն, ասսրբերգում ստըրկությունից:

Այն ժամանակ, յերբ կապիտալիզմը բանվոր յերիտասարդությունից պահանջում և այնպիսի ըսկած գոհեր աշխատանքի լեզ արյունի ծեփով, նա միաժամանակ մերժում և նրան ամենատարրական բաղարական իրավունքներ տալ: Ընտրություններին մասնակցելու համար բարձր հասակային ցենզ սահմանելով՝ նա զրկում է աշխատավոր յերիտասարդությունը ակտիվ և պասսիվ ընտրական իրավունքից բուրժուական դեմոկրատիալի հիմնարկներում: Յերիտասարդությանը չի թուլատրվում նաև ներկայացուցիչներունենալ գործարկութիւններում, վորակ նրանք լեզար կերպով գոյություն ունեն: Աշակերտը, մանավանդ ար-

հեստների մեջ՝ բացառիկ կախման մեջ և զտնվում  
 ձեսնարկատիրոջից։ Շատ յերկրներում ռեակցիոն ար-  
 գելք և զրված և չի թուլատրվում, վոր յերիտասարդ  
 բանվորները մինչև վորոշ հաստկը կազմակերպվեն  
 արհմիություններում։ Արգելված և աշակերտների մաս-  
 նակցությունը գործադուլներին, ինչպես նաև յերի-  
 տասարդ բանվորներին՝ մանել քաղաքական կազմա-  
 կերպությունների մեջ և մասնակցություն ունենալ քա-  
 ղաքական ժողովներին և դեմոնստրացիաներին և այլն։  
 Շատ յերկրներում առանձին բացառիկ որենքներ գո-  
 յություն ունեն յերիտասարդական յեկ պատանեկա-  
 կան կոմմունիտատական շարժման դեմ։ Մակարն ա-  
 ռանց առանձին որենքների յել կոմյերիտմիությունը  
 շատ յերկրներում մշտական հալածանքների հետեան-  
 քով գտնվում և կիսալեզար գրություն մեջ։ Այսպես  
 կոչված «յերիտասարդությունը խալտուրալից» և պոռ-  
 նոգրաֆիալից» պահպանելու որենքները կապիտալիս-  
 տական իշխանություններին հարուստ հնաբերավորու-  
 թյուններ են տալիս հետապնդելու յերիտասարդական  
 հեղափոխական մամուլը և յերիտասարդական կազմա-  
 կերպությունները։ Զեռնարկատերերին անխնա իերապով  
 ձեռնարկություններում հետապնդում են բանվոր յե-  
 րիտասարդական ակտիվ տարրերին։ Դաստկարգային  
 արգարադատությունը և կապիտալիստական պետու-  
 թյան ճնշման այլ որգանները վայրագորեն ճնշում են  
 հեղափոխական բանվոր յերիտասարդությանը։ Դաստ-  
 կարգային հակասությունների որման հետ միասին  
 շարունակ ուժիղանում և ոհակցիոն հարձակումը բան-  
 վոր յերիտասարդության և նրա կազմակերպություն-  
 ների վրա։ Ֆաշիզմը և սպիտակ տերրորը հարձակում

են կազմակերպում վորհի վոչ ֆաշիստական յերիտասարդական կազմակերպության վրա, նրան վոչնչացնելու նպատակով։ Դասակարգաբանություն գիտակից պրոլետարական զինվորները և նավաստիներն իմադերիալիտական բանակներում յենթարկվում են զազանացին հալածանքների։ Անթիվ են այն զոհարերությունները, վոր աշխատավոր յերիտասարդությունն ստիպված և կրել իր հիմնական և ամենատարրական պահանջների և իրավունքների համար ճղած պայքարում։

Բանվոր յերիտասարդության տնտեսական ստրրկացման հետ մերտորեն կապված են բուրժուազիայի ծգութմները իդեոլոգիապես նրա վրա գերիշնելու նկատմամբ։ Բուրժուազիան սիստեմատիկ պայքար և մղում իդեոլոգիապես ստրկացնելու բանվոր յերիտասարդությունը։ Բուրժուական գողոցը միայն այն գիսի գիտելիքներ և տալիս բանվոր յերիտասարդությանը և միայն այնպիսի չափերով, վորոնք թույլ են տալիս գործնել նրան կապիտալիզմի ընդունակ և հլու ըստրուկտոր ձեռնարկության մեջ, հիմնարկության մեջ, բանակում և հասարակական կյանքում։ Այդ նպատակին են ծառալում ժողովրդական գպրոցը և պրոֆդպրոցը։ Ընդհանուր առմամբ միջնակարգ և բարձրագույն գպրոցները մուտք ունեն միայն բուրժուազիայի և մանր բուրժուազիայի մի մասի լերեխաները։ Այդ դպրոցները, համաձայն դասավանդման ամբողջ գիրքավորման և սիստեմին, հանդիսանում են սոսկ բուրժուական հասարակության տնտեսական և քաղաքական բնագավառների հրամանատարների և սպաների և կադրերի։ Դաստիարակության հիմնարկություններ, Գաղութներում, ինչպես նաև բազմաթիվ հետամմաց

կապիտալիստական յերկըներում, պրոլետարական լեռնաների համար առնաստրակ գողոցներ գոյություն չունեն:

Կապիտալիզմին հլու հնազանգության վոգով յերիտասարդությունը գաստիտրակելու նպատակներին են ծառայում նաև ընդարձակ գրականությունը, բուքութուական մասուլը, կրոնը, բուքժուական գեղարվեստը, բուլվարացին գրականությունը, կինոն, զվարճության նիմարկները յեվ այլն։ Հատուկ բուքժուական յեվ ոեմորմիտական յերիտասարդական կազմակերպությունները գործում են բուքժուազիայի առաջադրանքներով յեվ նրա վոզով աշխատավոր յերիտասարդության մեջ՝ նրան զաղափարապես թունավորելու համար։ Այդ կազմակերպությունները հանդես են զալիս ամենարազմազան ծեվերով (կրթական, զվարճության, տուրիստական, սպորտային, ուղղմական, քաղաքական, կրօնական, մինչև անգամ ազատամտական կազմակերպություններ, գործարանային սպորտային ընկերություններ, բոյ-սկառուաններ)։

Կապիտալիզմի ճգնաժամը, վորը ծալրահեղորեն մեծացնում է աշխատավոր յերիտասարդության շահագործումը և տառապանքները, միաժամանակ պայմաններ և ստեղծում՝ նրան իր հասակավոր յեղբայրների հետ միասին գասակարգային պատրարի մեջ գրավելու համար, ինչպես նաև հանուն իր առանձին պահանջների պայքարելու նպատակով համախմբվելու համար։

Այս պայքարում բանվոր յերիտասարդությունը, վորպես բանվոր գասակարգի մի մասը և համաձայն արտադրության պըոցեսում ունեցած իր գրությանը, նույնպիսի գեր և խաղում, ինչպես յեվ բանվոր դա-

սակարգն աշխատավոր մասսաների շրջանում. նա կոչված ե առաջնորդ լինելու, նրա խնդիրն և նվաճել աշխատավոր լերիտասարդության հետամեաց խավերը, ամենից առաջ չքավոր գյուղացի լերիտասարդությունը և գաղութների աշխատավոր լերիտասարդությունը, պալքարելու համար իմպերիալիզմի դեմ, կազմակերպել նրանց և տանել նրանց դեպի հաղթանակ:

### ԱԵՐԻՑԿՈՄԻՆՑԵՐՆԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՆԳԱՅԱԿ ՀԱՄԱԹԽԱՇՎԱՅԻՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄՆ Ե

Կոմինտերնի և Յերիտկոմինտերնի վերջնական նպատակն է համաշխարհացին կոմմունիզմը: Կոմմունիզմի ժամանակ վոչնչանում և մասնավոր սեփականությունը, և վերանում են դասակարգերը: Նրանց տեղը գրավում են ընդհանուր աշխատանքային կոլլեկաբիվը և տնտեսության ծրագրացին հասարակական կազմակերպությունը: Պետությունը մեռնում և դասակարգերի հետ միասին: Մարդուն մարդու ձեռքով շահագործելու վորեկցի ձև վերացվում եւ Ծնորհիվ դասակարգերի վերացման և արտադրական ուժերի հսկայական դարգացման կոմմունիտական կարգերում վոչնչանում և գոլության անապահովությունը, անհետանում և բաժանումը հալստի և աղքատի, առհասարտկ անհետանում են աղքատությունը և չքավորությունը: Անհետանում են ազգային և ցեղալին անհավասարության բոլոր մնացորդները, ինչպես նաև սեռերի միջև յեղած սոցիալական անհավասարությունը: Վերանում է հակասությունը ֆիզիկական և մտավոր աշխատանքի մեջ, աիրում և ընդհանուր բարեկեցություն և կուլտուրայի ծաղկումն, իրականացվում է կոմմունիտ-

տական սկզբունքը՝ «Ամեն մեկից իր ընդունակությունների չափով և ամեն մեկին իր պահանջների չափով»։ Միասնական հառարակական տնտեսական կարգն ընդուրկում և ամբողջ աշխարհը։ Պալքարը դասակարգիրի և ժողովուրդների միջն, պատերազմները մտրդկային անհամար կյանքերի վաչնչացմամբ և անգնահատելի հարստավթյունների վոչնչացմամբ, անհետանում են միանգամ ընդմիշաւ։ Մարդկությունն իր բոլոր ուժերը գործ և դնում բնաւթյան դիմ պայքարելու համար, ծրագրված արտադրության, գիտության և կուլտուրայի հետագա զարգացման և բարձրացման համար։ Մարդկությունը թուիչը և գործում անհրաժեշտության թագավորությունից ազատության թագավորությունը։

Իր հասակավոր ընկերների հետ միտսին բանվոր յերիտասարդությունը ձգտում և այս նպատակին Նրա ամբողջ պայքարը, նրա բոլոր ջանքերը վերջին հաշվով գնում են այս նպատակի իրազործման ուղղությամբ։ Համաշխարհային կոմմունիզմը յերիտասարդության համար ևս ապահովում և այնպիսի վարչուն ապագա, վորի հետ համեմատած՝ ներկայիս իմպերիալիզմի կողմից շահագործվող և ճնշվող աշխատավոր յերիտասարդության զրությունը թվում և մոայլ ստվեր կամ անհագատալի չար յերազ։

Սակայն սոցիալիզմի ժամանակ արդեն, այսինքն հառարակության զարգացման այն աստիճանում, դեպի վորը տանում և պրոլետարական դիկտուտրան, յեվ վորը նախորդում և լիակատար կոմմունիզմին, յերիտասարդության դրությունը յենթարկվում և արմատական փոփոխության։ Սոցիա-

լիզմը կոմմունիզմի նախադուռն եւ Սոցիալիզմի ժամանակ արտադրական ուժերը գեռես այնքան զարգացած չեն, վորպեսզի հնարավոր լինի աշխատանքի արդյունքների բաշխումը յուրաքանչյուրի պահանջների համեմատ։ Բաշխումը շարունակում ե կատարվել համաձայն կատարված աշխատանքի։ Սոցիալիզմի ժամանակ, չնայած դասակարգերի վերացմանը, գեռես, գոլություն ունեն դասակարգային բաժանման մնացորդները, բուրժուական իրավահասկացողության և պրոլետարական դասակարգային պետության մնացորդները, գեռես վերջնականապես չի հաղթահարված տարբերությունը քաղաքի և գյուղի միջև։ Մակայն հին հասարակության այդ մնացորդներն անհետանում են աստիճանաբար, յերբ մարդկությունն աղատագըրված կապիտալիզմի կապանքներից՝ լենթարկում ե իրեն բնության ուժերը, դաստիարակում ե իրեն կոմմունիստական վորով և սոցիալիզմից առաջ ե գնում գեպի լիակատար կոմմունիզմ։

Սոցիալիստական հասարակության հաստատումը պահանջում ե յեվ հնարավոր ե դարձնում յերիտասարդության աշխատանքի պայմանների փոփոխումը, նրա սոցիալիստական վերակազմակերպությունը։ Յերիտասարդության աշխատանքի սոցիալիստական վերակազմակերպում նշանակում ե արտադրական աշխատանքի շաղկապումը ուսման և դաստիարակության հետ և յերիտասարդության ամրող աշխատանքի վերակազմակերպությունը սոցիալիստական հասարակության բազմակողմանիորեն զարգացած անդամներ դաստիարակելու տեսակենտից և նպատակով։ Դրա հետ կապված՝ սոցիալիզմն իրականացնում

և յերիտասարդության վարծու աշխատանքի վերացումը յեզ նրա հաստիակական ապահովումը:

Այս նպատակը մատնանշել են մեզ պրոլետարիատի մեծ ուսուցիչներ Մարքսը և Լենինը: Մարքսն ասել ե. «Դործարանային սփառեմից տճեց ապագայի դաստիարակության սաղմբը, վորը բոլոր յերեխաների համար վորոշ հասակից սկսած կշաղկապի արտազրական աշխատանքը ուսման և գիմնաստիկայի հետ, վոչ միայն վորպիս հասարակական արտադրության բարձրացման մեթոդ, այլև վորպես լիարժեք դարգացած մարդկանց արտադրության միակ մեթոդ»: Իսկ Լենինը սովորեցրել ե. «Չի կարելի պատկերացնել ապագա հասարակության իդեալը առանց յերիտասարդ սերնդի ուսուցումն արտադրական աշխատանքի հետ միավորելու: Վոչ ուսուցումը և կրթությունն առանց արտադրական աշխատանքի և վոչ ել արտադրական աշխատանքն առանց զուգընթաց ուսուցման և կրթության չեն կարող զբվել այն բարձրության վրա, վորը պահանջվում ե տեխնիկայի ներկա մակարդակի և գիտական գիտելիքների ներկա զրությամբ»:

Սյդպիսով, բանվոր յերիտասարդությունը, վորը կապիտալիզմի ժամանակ հանդիսանում եր սոսկ շահագործման առարկա, սոցիալիզմի ժամանակ բոլորովին այլ հասարակական զրություն և դեր ե ձեռք բերում: Սոցիալիստական հասարակությունը խնամքով հոգում ե բանվոր յերիտասարդության պաշտպանության և ապահովության համար: Յերիտասարդության թուլությունը և անգարգացած լինելը ֆեղիկական և հոգեկան տեսակեալից, վորոնք կապիտալիզ-

մի ժամանակ նրա առանձին շահագործման պատճառ  
ելին հանդիսանում, սոցիալիստական հասարակության  
մեջ կղառնան առանձին պաշտպանության առարկա:  
Արտազրության սոցիալիստական կաղմակերպության  
ժամանակ այն պատճառները, վորոնք կապիտալիզմի  
ժամանակ պատճառ ելին գառնում նրա բանվոր յե-  
րիտասարդության ամենախորունք կարիքի—աշխա-  
տանքի պրոցեսսների պարզացումը մեքենայի շնոր-  
հիվ և գիտության ու տեխնիկայի նվաճումները, — սո-  
ցիալիզմի ժամանակ նոյն չափով դառնում են նրա  
դաստիարակության և զրության բարելավման միջոց-  
ներ: Աշխատանքի պրոցեսսների շարունակական  
պարզացումը հնարավորություն և ստեղծում ժամա-  
նակ առ ժամանակ փոխել աշխատանքը և ուսուցումն  
առանձին մեքենաների վրա և արդյունաբերության  
առանձին բնագավառներում և այդպիսով բազմակող-  
մանիորեն զարգացնել և դաստիարակել յերեխաներին:  
Ֆիզիկական և մտավոր աշխատանքի ճակատագրական  
բաժանումն անհետանում ե: Փոխանակը տարեցտարի  
կպած մնալու մի մասնակի ձանձրացնող և հյուծիչ  
աշխատանքի, ինչպես կապիտալիզմի ժամանակ եր,  
և արդ կարող և պարզ պատկերացում ունենալ հասա-  
րակական արտազրության տմբողջ ընթացքի մասին  
և գիտակցորեն իշխել նրա վրա: Մեքենայի հասարակ  
հավելված լինելուց յերիտասարդ բանվորն այդպի-  
սով դառնում ե նրա տերը, դառնում և ազատ  
մարդ:

Յերիտասարդության աշխատանքի սոցիալիս-  
տական վերակառուցման, նրա լիակատար պաշտպա-  
նության և սոցիալիստական դաստիարակության ա-

սաջին հիմնական քալլերը բանվոր դաստիարակը կտարում և իշխանությունը վերջնելուց հետո միայն Այս հիմնական միջոցները գնալով ավելի զարգանում են սոցիալիստական շինարարության ընթացքում։ Կապիտալիստական հասարակության խորտակումը, պրոլետարիատի դիկտատուրան հանդիսանում են աշխատավոր յերիտասարդության վերջնական ազատազրման նաևապարհը, սոցիալիզմի յեզ կոմմունիզմի նաևապարհը։

### ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԸԵՐԻՑԱՑՈՒԹՅԱՆ ՄԻԱԽՅՈՒՆ ԱՆՀԲ- ՓԵՇՏԱԽՅՈՒՆԻՔ ՅԵԶ ԴԵՐԼ

Բանվոր դասակարգը խորապես շահագրգռված և նրանում, վորպեսզի բանվոր յերիտասարդության մեջ արթնացնի դասակարգային գիտակցություն, գրավի նրան դասակարգային պալքարի և ապահովի իր համար նոր և թարմ ուժերի շարունակական հոսանքը, վորոնք պետք և շարունակեն պալքարը մինչև բանվոր դասակարգի լիտկատար ազատազրումը։

Կոմմունիստական կուսակցությունը, բանվոր դասակարգի ղեկավարն առանձնապես կարիք ունի այնպիսի ուղղերգի, վորն ապահովի նրա շարքերի ամրապնդումը յեզ փոխարինումը յերիտասարդ ուժերով, կարիք ունի մի նախնական դպրոցի, վորը դաստիարակի յերիտասարդ պրոլետարական սերունդը կոմկուսակցության համար, կարիք ունի կազմակերպության, վորն աշխատավոր յերիտասարդության մասսաներին պայքարի առաջնորդի հանուն կոմմունիզմի։

Բանվոր դասակարգի ընդհանուր քաղաքական և  
տնտեսական պայմաններն, ինչպես նաև բանվոր յե-  
րիտասարդության առանձին դրությունը կապիտալիզ-  
մի ժամանակ վերջինիս ևս մղում են ակտիվ մասնա-  
կցության պրոլետարիատի դասակարգակին պայքա-  
րին և պահանջում են նրանից ընդհանուր պրոլետա-  
րական մարտական խնդիրների իրավործման շրջա-  
նակներում նաև առանձին պայքար իր սեփական աշ-  
խատանքի յեվ դաստիարակության պայմանների  
մեջ հեղաշրջում կատարելու համար։ Յերիտասար-  
դության ֆիզիկական և հոգեկան առանձնահատկու-  
թյունները պահանջում են նրա դաստիարակությու-  
նը և աշխատանքը առանձին կազմակերպություննե-  
րում, վորոնք հնարավորություն տան բազմակողմա-  
նիորեն զարգացնել նրա նախածեռնությունը յեվ ինք-  
նագործունեյությունը։ Այս բոլոր հանգամանքներն  
անհրաժեշտ են դարձնում կոմմունիստական յերիտա-  
սարդական միության ստեղծումը լուրաքանչյուր  
յերկրում։

Միայն կոմմունիստական յերիտասարդական  
միությունը կարող է համաշխարհային հեղափոխու-  
թյան ներկա եպօխայում իրավործել բանվոր յերի-  
տասարդության դասակարգային կազմակերպություն  
լինելու խնդիրը։

Յերիտասարդության և առևասարակ յերիտասար-  
դական կազմակերպությունների գերի ըմբռնման  
հարցում սկզբունքային տարբերություն կա մի կող-  
մից կոմմունիստների և մյուս կողմից սոցիալ-դեմո-  
կրատիակի և բուրժուազիակի միջև։ Բուրժուազիայի  
և սոցիալ-դեմոկրատիայի միջև այս հարցում առան-

ձին, վոչ եյական տարբերություններ կան, սակայն հիմնական հայացքներում նրանք միաբան են: Սոցիալդեմոկրատիան սովորաբար բնորոշում ե յերիտասարդական կազմակերպության դիրք, վորպես «զուտ» դաստիարակչական կամ կուլտուրական կազմակերպության: Նա՝ ժխտում ե նրա ակտիվ մասնակցությունը քաղաքական պայքարին, այսինքն դասակարգերի պայքարին: Նա չի ընդունում այս պայքարում նրա ունեցած վոչ ընդհանուր և վոչ ել մասնավոր խնդիրները: Նա հայտարարում է, վոր յերիտասարդությունը չի հասունացել քաղաքական պայքարին ակտիվ մասնակցելու համար: Սոցիալդեմոկրատիան դասակարգային պայքարը փոխարինել և դասակարգային համագործակցությամբ և դրա համար ձգտում է բանվոր յերիտասարդությունը ևս դաստիարակել դասակարգային խաղաղության վոգով:

Ֆաշիզմը և ֆաշիստական կազմակերպությունները բացորոշ կերպով հանդես են գալիս հոգուտ հակապրոլետարական ռազմական դաստիարակության և հոգուտ իրենց յերիտասարդական կազմակերպությունների գործունեյության, վորպես բռնության ջոկատների: Սակայն այնքան, վորքան բուրժուական յերիտասարդական կազմակերպությունները չեն հանդիսանում դուտ ռազմական և բացորոշ մարտական կազմակերպություններ, նրանք հայտարարում են, վոր իրը թե իրենք նաև ժխտում են յերիտասարդության ակտիվ մասնակցությունը քաղաքական պայքարում: Իրականում այդ միայն քողարկում է հանդիսանում: Այս «տեսության» հիմքը, վորը բնորոշ ե ինչպես այս «դաստիարակության», նույնպես և բուրժուական

ամբողջ գպրոցական և դաստիտրակչական սիստեմի համար, հանդիսանում և կազիտալիստական կարգերում յեղած դասակարգային բաժանման և դասակարգային տիրապետության իրական ելության քողարկումը և աշխատանք հոգուտ «համաժողովրդականության», հոգուտ «հայրենիքի» և այլն, այսինքն հոգուտ բուրժուազիային Բուրժուական և սոցիալ-դեմոկրատական յերիտասարդական կազմակերպությունների կեղծ և սուսանդունքներն ազադակող հակասության մեջ են դասակարգային համարակության և դասակարգային պալքարի ուսալ իրականության նըկատամբ և բուրժուազիայի սպասարկուները հանդիսացող այդ կազմակերպությունների իսկական դերի նկատմամբ:

Սոցիալ-դեմոկրատիան չի ցանկանում, վորքանվոր յերիտասարդությունը ծանոթանա դասակարգային հասարակության մեջ գոյություն ունեցող իրական դրությանը և դասակարգային պալքարի դաժան փաստերին: Նա ցանկանում է թույլ չտալ, վոր յերիտասարդ բանվորներն աճեն, դառնան գիտակից դասակարգային մարտիկներ և ցանկանում է ամբողջապես գերել նրանց իր դաստկարգային համագործակցության քաղաքականության համար Դրան համապատասխանում է նաև այն հանգամանքը, վոր սոցիալ-դեմոկրատիան նպաստում և դատարկախոսությանը «յերիտասարդության մասին» առհասարակ, առանց դասակարգերի տարբերության, վորը, սակայն, միայն նպատակ ունի ծածկել նրա համագործակցությունը բուրժուական կազմակերպությունների հետ: Դրան համեմատ սոցիալ-դեմոկրատներն իրենց յերի-

տասարդական կազմակերպությունների առաջ դնում  
են կապիտալիստական հասարակակարգի գոյության  
շրջանում յերիտասարդական կազմակերպության ներ-  
սում կուլտուրական աշխատանք կատարելու ճանա-  
պարհով, այսինքն անկախ դասակարգավին հասարա-  
կությունից և իրականությունից առնասարակ անոր  
մարդ» ստեղծելու ուսուցիչական և մտնը բուրժուա-  
կան խնդիրը։ Փաստորեն այդ կազմակերպություննե-  
րը կատարում են մանր-բուրժուական դաստիարակչա-  
կան աշխատանք, վորոշ քաղաքական ուղղությամբ,  
վորը նպատակ ունի յերիտասարդներին դարձնել սո-  
ցիալ դեմոկրատներ, այսինքն բուրժուազիավի սպա-  
սարկուներ, և հեռացնել նրան դասակարգավին պայ-  
քարից։

Կոմյերիտմիությունը վճռականորեն մերժում է  
բուրժուազիայի յեվ սոցիալ-դեմոկրատիայի կեղծա-  
վոր լոգունզը, թե՝ «յերիտասարդությունը չպետք և  
խառնվի քաղաքականությանը»։ Հասարակական ար-  
տադրության կարևոր ֆակտոր հանդիսացող քանվոր  
յերիտասարդության ինուանդուն մասնակցությունն իր  
դասակարգի քաղաքական պալքարին նշանակում է  
պրոլետարիատի դասակարգավին պալքարի ուժերի  
հզոր աճում և հանդիսանում է բանվոր յերիտասար-  
դության կոմմունիստական դաստիարակության հիմ-  
նական լծակը։

Կոմյերիտմիությունը հանդիսանում է քաղաքա-  
կան կազմակերպություն։ Կոմյերիտմիությունը մար-  
տական դաստիարակության կազմակերպություն և  
Նրա աշխարհայացքը, մարքսիզմի և լենինիզմի աշ-  
խարհայացքը չի թույլ տալիս թեորիալի և պրակտի-

շապի վորեմ անջատում, նա զոչ մի հակասություն չի  
տեսնում դաստիարակության և պալքարի միջև։ Կոմ-  
մունիստական դաստիարակության հիմքը հանդիսա-  
նում ե պայքարը։ Կոմյերիտմիության ամենաընդ-  
հանուր խնդիրը կայանում ե նրանում, վոր նա «սո-  
վորի կոմմունիզմը» (Լենին), Կոմյերիտմիությունը  
հանդիսանում ե կոմմունիզմի դպրոց աշխատավոր  
յերիտասարդության համար, սակայն յերիտասար-  
դությունը կարող ե սովորել կոմմունիզմը միայն «իր  
ուսման, դաստիարակության յեվ կրթության յուրա-  
քանչյուր քայլը կապելով պրոլետարիների յեվ աշխա-  
տավորների կողմից հին շահագործող հասարակու-  
թյան դեմ մղվող անընդհատ պայքարի հետ... Կոմ-  
մունիստական բարոյականության հիմքում դրված ե  
պալքարը կոմմունիզմի ամրապնդման յեվ լիակատար  
իրազործման համար։ Ահա թե ինչումն ե նայեվ կոմ-  
մունիստական դաստիարակության, կրթության յեվ  
ուսման հիմքը։ Ահա թե ինչումն ե կայանում այն  
հարցի պատասխանը, թե ինչպես պետք ե սովորել  
կոմմունիզմը» (Լենին)։

Այս պալքարը կոմյերիտմիության կազմակերպ-  
ված մասնակցությունն ե պրոլետարիտափի և աշխա-  
տավորության ընդհանուր դասակարգագին պալքարին  
և նրա շրջանակներում աշխատավոր՝ յերիտասարդու-  
թյան առանձին պահանջների և շահերի պաշտպանու-  
թյունը նրա կյանքի և պալքարի բոլոր բնագավառ-  
ներում և դրանց թվում ամենից առաջ միլիտարիզմի  
և իմպերիալիստական պատերազմի դեմ մղած պայ-  
քարում և բանվոր յերիտասարդության տնտեսական  
պահանջների հարցում։

Կոմիերիտմիությունը դեմ և արտահայտվում է յերիտասարգական սինդիկալիզմից գաղափարին, վորը հնարավոր և համարում բանվոր յերիտասարգության ինքնուրուցն և մեկուսացած պալքարը։ Կոմյերիտմիությունն ամբողջ կոմմունիստական շարժման մի մասն և կոմկուսակցությունը հանդիսանում է կոմմունիստական շարժման և բանվոր դասակարգի դեկավարն, իրենց ամբողջությամբ վերցրած։ Կրկնակի գեկավարություն, յերկու կոմկուսակցությունների զուգընթաց գոյություն լինել չի կարող։ Կոմյերիտմիությունը, վորը կազմակերպչորեն ինքնուրույն և, աշխատում ե կոմկուսակցության յեվ կոմինտերնի դեկավարությամբ յեվ ընդունում և կոմինտերնի յեվ կոմկուսակցությունների ծրագիրը յեվ տակտիկան։ Կոմյերիտմիությունը յենթարկվում է կոմկուսակցության և կոմինտերնի՝ համաշխարհային կոմմունիստական շարժման բարձր ինստանցիալի ցուցմունքներին։ Կոմյերիտմիության եյությանը, վորպես կոմմունիզմի մասսայական դպրոցի աշխատավոր յերիտասարդության համար, համապատասխանում ե յեվ այն, վոր կոմյերիտմիության յուրաքանչյուր անդամը դրանով իսկ դեռ կոմկուսակցության անդամ չի հանդիսանում։ Մակայն կոմյերիտմիությունը նրա համար ել կոչվում է կոմմունիստական, վոր նա թեյեվ ծեվականորեն վոչկուսակցական, սակայն կոմմունիստական կազմակերպություն ե։

Կոմյերիտմիության ելությունից, վորպես կոմմունիստական դաստիարակության կազմակերպության, ինքնըստինքլան բղխում ե, վոր նա չպետք է

նա՞մն լինի «յերիտասարդության կոմկուսակցության»։ Նրա գաստիտրակալական խնդիրները և նրա եյությունը, վորպես գաստիտրական կազմակերպության, վորոշումնեն այն տարբերությունը, վոր գոյություն ունի նրա աշխատանքի մեթոդների և առանձին խընդիրների և կոմկուսակցության խնդիրների և մեթոդների միջի, ու միության գործունեյությանը տալիս են վորոշակի «յերիտասարդական» (յերիտասարդությանը հարմարեցրած և նրա համար հասկանալի) ընույթ։

Կոմյերիտմիությունն ընտրյաների կազմակերպություն չի, նա մասսայական կազմակերպություն եւ Նրա խնդիրն եւ իր սևական շարքերում կազմակերպչորեն համախմբել վոչ միայն աշխատավոր յերիտասարդության մասսաների առաջավոր ելեմենտները, այլև լայն մասսաները։ Կոմյերիտմիության կազմակերպչական ընդդրկման սահմաններից դուրս զանազան միջոցների ոգնությամբ (ազիտացիա և պրոպագանդա, մամուլ, լելություններ, զանագան ոժանդակ կտղմակերպություններ և ալլն) նա պետք է մասսաների վրա տարածի իր ազդեցությունը և ղեկավարությունը։ Նա պետք է ձգտի նվաճել բանվոր յերիտասարդության մեծամասնությունը և յերիտասարդ աշխատավորների այլ վճռական խավերը։ Դա պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պալքարի անհրաժեշտ պայմաններից մեկն եւ Միության մասսայական ընույթն ավելի շեշտվում է պրոլետարիատի դիկտատուրայի պարմաններում։ Այդ ժամանակ կոմյերիտմիության առջ դրվում է ամբողջ բանվոր յերիտասարդությունը և առհասարակ աշխատավոր յերիտասարդության լավագույն մասն իր շարքերում կազմակերպելու խնդիրը։

Բոլոր պայմաններում կոմյերիտմիությունը վորպես կամմունիտական դաստիարակչական կտզմակերպություն և կուսակցական նախապատրաստական դըստրոց, հանդիսանում է զգալիորեն ավելի լայն կազմակերպություն, բան կոմկուսակցությունը՝ կեզալ պայմաններում նրա շարքերը բաց են յուրաքանչյուր յերիտասարդ բանվորի յեվ բանվորությունը համար նույնիրիտմիությունը դրա համար ել պետք է ձգտի թվականորեն գերազանցել կոմկուսակցությունը, նույնիրիտմիությունն իր սոցիալական կազմի տեսակետից յեվս ավելի լայն դիրքավորում ունի, քանի վոր, վորպես դաստիարակչական կազմակերպությունն, նա կարող է և պետք է ավելի մեծ չափով, քան կուսակցությունը, ձգտի իր շարքերում ընդգրկել քաղաքի և գյուղի կենապրոլետարական և այլ աշխատավոր տարրերը:

Իր քաղաքական զերով կոմյերիտմիությունը հանդիսանում է քաղաքի յեվ զյուղի պրոլետարական յերիտասարդության կազմակերպությունը Դրա համար ել կոմյերիտմիությունը ձգտում է ապահովել պրոլետարական տարրերի զեկավար դերը միության մեջ և արգունաբերություն ու բանվոր դասակարգ ունեցող յերկրներում ընդգրկել իր անդամների շարքում բանվոր յերիտասարդության մեծամասնությունը՝ թյու. թյան այս պրոլետարական մեծամասնությունը պետք է առանձնապես ապահովված լինի ակտիվի մեջ, նույնիրիտմիության մեջ պրոլետարական տարրերի դիկավարող դերն ապահովելու դեպքում կոմյերիտմիությունը ձգտում է միության մեջ ներգրավել աշխատավոր յերիտասարդության և այլ սոցիալական խավերից, մասնավորապես գյուղացի չքավոր յերիտա-

սարդության հեղափոխական մասը։ Առա կոմյերիտ-միությունն իր շարքերում ընդունում և նաև պրոլետարականացող մանր բուրժուազիայի և միջակ գյուղացիության յերիտասարդության շրջանից այն տարրերը, վորոնք իրենց գործունելությամբ ապացուցում են իրենց նվիրվածությունը հեղափոխությանը։ Միայն պրոլետարիատի գիլտատառայի օրոք, յերբ մեր խընդիրը միջակ գրուղացիության նկատմամբ հանդիսանում է վաչ միայն նրա չեղոքացումն, այլ գայինքը նրա հետ, կոմյերիտամիությունը կարող ե ավելի լայն չափով իր շարքերն ընդունել անդամներ միջակ գրուղացիությունից։ Յեթե կոմյերիտմիությունն անդամ իր շարքերում ընդունում ե մտնր-բուրժուական միջին շերտից առանձին փորձված տարրեր, նա պետք ե այնուամենայնիվ, վորոշ աշխատանք կատարի՝ իրագործելու համար իր ազդեցությունը նրանց նկատմամբ, ներառյալ նաև միջին շերտերի սովորող յերիտասարդությունը (ուսանողությունը):

Այն հանգամանքը, վոր կոմյերիտմիությունը հանդիսանում է մասսայական կազմակերպություն, այնուամենականիվ չի բացատրում բանվոր յերիտասարդության և առհասարակ աշխատավոր յերիտասարդության անկուստկցական մասսայական կազմակերպությունների գործության նպատականարմարությունը։ Հենց մասսաները նվաճելու յեվ կոմյերիտմիությունը մասսայական կազմակերպությունն դարձնելու համար վորոշ պայմաններում անհրաժեշտ ե յերիտասարդության հատուկ ոժանդակ կազմակերպությունների ստեղծումը աշխատանքի վորոշ թնագավառների համար յեվ վորոշ խնդիրներ կատարելու համար։ Այս ոժանդակ կազ-

մակերպությունները հանդիսանում են իր տեսակի հա-  
 ղորդող փոկեր, վորոնք ավելի ամուր կերպով կոմիե-  
 րիամիությունը կապում են մասսաների հետ: Նրանք  
 կարող են լինել կամ ինքնուրուցյն կազմակերպու-  
 թյուններ, կամ կարող են հարել ամբողջ բանվոր գո-  
 սակարգի մասսայական կազմակերպություններին և  
 աշխատել վերջինների շրջանակներում (յերիտասար-  
 դական կարմիր-ճակատայինների կազմակերպության  
 տիսլը, յերիտասարդության պրոֆեսօնալ կազմակեր-  
 պության առանձին ձևեր, յերիտասարդական կոմիսարիա-  
 ներ կամ յերիտասարդական սեկցիաններ, սպորտային  
 կազմակերպություններ, անաստվածների պրոլետարա-  
 կան կազմակերպություններ, զանազան կուլտուրա-  
 կան կազմակերպություններ, գյուղացի յերիտասար-  
 դության կազմակերպություններ և այլն): Այսպիսի  
 ոժանդակ յերիտասարդական կազմակերպությունների  
 կամ ամբողջ պրոլետարիատի մասսայական կազմա-  
 կերպություններին (պրոֆմիություններ, սպորտային  
 կազմակերպություններ, կարմիր-ճակատայինների միու-  
 թյուններ և այլն) կից կազմակերպությունների ստեղ-  
 ծումը չպետք է բաժանի յերիտասարդությունը հասս-  
 կավոր բանվորներից: Ոժանդակ կազմակերպություն-  
 ները չեն սահմանափակում կոմյերիտմիության աշխա-  
 տանքը վորպես մասսայական կազմակերպության և  
 ամբողջ աշխատավոր յերիտասարդության ղեկավարի:  
 Կոմյերիտմիությունն աշխատում ե իրապես ղեկավա-  
 րել նրանց (Փրակցիաների, համաձայնությունների, հա-  
 մագործակցության և այլ միջոցներով), այնպես վոր  
 կազմակերպչորեն կոմյերիտմիության մեջ ընդգրկի նը-  
 րանց մեջ գտնվող յերիտասարդությունը: Այդպիսի որ

մանդակ կազմակերպություններում կատարվելիք աշխատանքի հիմնական նոպատակը յեվ խնդիրը հանդիսանում ե իր՝ կոմյերիտմիության զարգացումը յեվ աշխատավոր յերիտասարդության մասսայական կազմակերպություն դառնալը:

Կոմյերիտմիության կոնկրետ խնդիրները կուսակցության աշխատանքի նկատմամբ հանդիսանում են աննկուն ազիտացիան կոմինտերի մարտական նոպատակների ուժուին, ոժանդակությունը կոմկուսակցություններին՝ իրենց առորյա ամբողջ աշխատանքի և պայքարի մեջ, կոմյերիտմիության մասնակցությունը պրոլետարիատի բոլոր հեղափոխական չելութներին, հրատապ քաղաքական դեպքերի և պրոլետարիատի մոտակա խնդիրների քննությանը և պարզաբանմանը և ակտիվ մասնակցությունը կուսակցական դիսկուսիաներին, կոմյերիտմիությունը մերժում ե կուսակցության մեջ տեղի ունեցող քաղաքական պայքարի նըկատմամբ յերիտասարդական միության «չեզոքության» թեորիան: Կոմյերիտմության մասնակցությունը կուսակցության ամբողջ կյանքին միաժամանակ ծառայում ե ինչպես կուսակցական աշխատանքի ամրապնդման խնդրին, նույնպես և կոմյերիտմիության անդամներից կուսակցության անդամներ դաստիարակելու խնդրին: Քաղաքական ակտիվությունը չի կարող սահմանափակվել միայն կոմյերիտմիության վերին խավերով, այլ պետք ե ընդգրկի ամբողջ կազմակերպությունը:

Վոչ մի հակասություն չկա կոմյերիտմիության կողմից կուսակցության կյանքին ունենալիք մասնակցության յեվ առանձին յերիտասարդական խնդրինե-

րի միջեվ։ Ընդհակառակը, կոմյերիտմիությունը բանվոր յերիտասարդության առանձին պահանջների, լուզունդների և նպատակների համար իր պայքարը մղում ե, վորպես ամբողջ կոմմունիտական պայքարի մի մասը, վորպես ընդհանուր քաղաքական գործունելության մի մասը։ Կոմյերիտմիությունը, սակայն, չի բավարարվում ընդհանուր քաղաքական հարցերն աշխատավոր յերիտասարդության մասսաների մեջ փոխադրելով։ Նա ուսումնասիրում ե, թե ինչպես ընդհանուր քաղաքական մոմենտանելն անդրադառնում են յերիտասարդության վրա և, յենիկով դրանից՝ սահմանում ե բանվոր յերիտասարդության և աշխատավոր յերիտասարդության մյուս խավերի կոնկրետ քաղաքական, տնտեսական կրւլտուրական կարիքները և պահանջները։ Կոմյերիտմիությունը զարգացնում ե «յերիտասարդական քաղաքականությունը», առանձին պայքարը յերիտասարդական հարցերի շուրջը՝ կենդանի կերպով կտպելով՝ այն ամբողջ բանվորական մասսային և առհասարակ աշխատավորությանը շահագրգուռ խոշոր, ընդհանուր քաղաքական հարցերի հետ։ Նա իր գլխավոր ուշադրությունը դարձնում ե միլիտարիզմի և իմպերիալիտական պատերազմի դեմ և բանվոր յերիտասարդության տնտեսական պահանջների համար պայքարելու վրա։

Կոմյերիտմիությունն անխոնջ կերպով պարզարում ե բանվոր և չքավոր գլուղացի յերիտասարդության, զինվորների և նավատօփիների, գաղութների աշխատավոր մասսաների անմիջական մասնակի պահանջների համար, իր պահանջներն ամենասերտ կերպով շաղկապելով կոմմունիզմի ընդհանուր քաղաքական, լու-

զունդների և վերջնական նպատակների համար մղվող պալքարին: Այդպիսով նա ոգտագործում ե պայքարը մասնակի պահանջների համար, համախմբելով բանվոր յերիտասարդության մասսաներին, մոբիլիզացիալի յենթարկելու նրանց՝ հեղափոխական պայքար մղելու համար հանուն կոմմունիստական լողունգների:

Այդպիսով կոմյերիտմիությունը կոմկուսակցության հետ միասին պայքարում ե բոլոր այն բացառիկ որենքների դեմ, վորոնք ուղղված են աշակերտների, անչափահասների և աշխատավորության յերիտասարդական կազմակերպությունների դեմ, այն որենքների դեմ, վորոնք սահմանափակում են նրանց քաղաքական և տնտեսական իրավունքները: Նա պայքարում ե հոգուտ ժողովների, մամուլի, բանվոր յեվզյուլացի յերիտասարդության, զինվորների յեվնավաստիների քաղաքական յեվ տնտեսական կազմակերպությունների ազատության: Նա յերկու սեռերի համար ել, սկսած 18 տարեկան հասակից, պահանջում ե պարլամենտներում, քաղաքային վարչություններում յեվ այլն ընտրելու ակտիվ յեվ պաստիվ իրավունքը:

Իմպերիալիզմի և համաշխարհային հեղափոխության եպօխայում, յերբ պայքար ե մղվում իմպերիալիզմի համաշխարհային սիստեմի դեմ և պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար, բանվոր դասակարգի կազմակերպումը միջազգային մասշտաբովն նրա պայքարի դեկավարությունը վճռական նշանակություն ունին: Դրա համար ել բանվոր յերիտասարդության համար ևս առանձնապես անհրաժեշտ ե ձուլվել միջազգային մարտական ֆրոնտին, ինչպես նաև միջազ-

գային մասշտաբով իր եփական ջանքերը և կորիմները  
միաձուլել պրոլետարական դասակարգային պայքարի  
շրջանակներում, Դրա համար ել ըոլոր յերկրների կոմ-  
մունիստական յերիտասարդական միությունները  
համախմբվում են Յերիտասարդական Կոմմունիստա-  
կան Ինտերնացիոնալի մեջ, վորն ինքը հանդիսանում  
ե կոմմունիզմի համաշխարհային կուսակցության—  
Կոմմունիստական Ինտերնացիոնալի մի մասը:

### ԿԱՐՄԱԿԵՐՊՉՈՎԱՆ ԿԱՌԱՑՎԱԾՔԻ ԱԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Կոմմունիստական կազմակերպությունների կաղ-  
մակերպչական կառուցվածքը համապատասխանում է  
նրանց հեղափոխական դերին և դասակարգային պայ-  
քարում ունեցած նրանց խնդիրներին։ Սոցիալ-դեմո-  
կրատական կազմակերպությունները, վորոնք դեռևս  
նախապատերազմյան շրջանում հրաժարվում ենին դա-  
սակարգային պայքարի հեղափոխական մեթոդներից,  
ստեղծել են այնպիսի կազմակերպչական կառուցվածք,  
վորը համապատասխանում եռեֆորմիստական դիրքա-  
վորման և առանձնապես պարլամենտական ընտրու-  
թյուններին և գրա համար ել համախմբում և կաղ-  
մակերպության անդամներին ըստ ընակավայրի։ Այս-  
պիսի կազմակերպչական ձևը չի ապահովում բանվո-  
րական կորիզի դեկավարող դերը, հարմար չի հեղափո-  
խական մասսայական պայքարի դեկավարության հա-  
մար։ Ռեֆորմիստների այս ամբողջ դիրքավորմանը հա-  
մապատասխանում ե և այն հանգամանքը, վոր սոցիալ-  
դեմոկրատական կազմակերպությունների կառուցված-  
քը չի հիմնված կենտրոնացման և ամուր դիսցիպլինայի-  
վրա և միաժամանակ չի նոպաստում ներկուսակցական

դեմոկրատիայի ծավալմանը. Կոմմունիստական յերիտասարդական միությունը վճռականապես մի կողմեց շպրտում այս հնացած ծեփերը յեվստեղծում եւ այնպիսի կազմակերպություն, վորն ընդունակ եւ համախմբել աշխատավոր յերիտասարդության ամենալայն մասսաները յեվ պայքարի հանել նրանց, ինչպես նայեվ ապահովել Միության մեջ բանվորական տարբերի ղեկավարող դերը: Դրա համար ել կոմյերիտմիության հիմքը հանդիսանում են արտադրական բջիջները, վորոնք համախմբում են միության անդամներին ըստ իրենց աշխատանքի վայրի և կատարում են միության կազմակերպության հիմնական միավորի բուլոր խնդիրները ինչպես մասսաներում կատարվող աշխատանքի տևակետից, նույնպես ել ներմիութենական աշխատանքի տևակեաից: Կոմյերիտմիության այն անդամները, վորոնք իրենց աշխատանքի պայմանների հետեանքով չեն կարող համախմբվել արտադրական բջիջներում, կազմակերպվում են բջիջներում ըստ փողոցների:

Ըստ փողոցների կազմված բջիջները ես հանդիսանում են միութենական կազմակերպության հիմնական միավորներ, սակայն ծանրության կենարոնն ընկնում եւ արտադրական բջիջների վրա, և գլխավոր դերը պատկանում են նրանց:

Կոմմունիստական յերիտասարդական միության կազմակերպությունը կառուցված եւ դեմոկրատական կենտրոնացման սկզբունքի համաձայն: Այն շաղկապում եւ կազմակերպության անդամների ինչքան կարելի յելայն ինքնագործունեյությունը յեվ ակտիվությունը խիստ դիսցիպլինայի հետ: Ներմիութենական

գեմոկրատիայի հետեւանքով Միության բոլոր անդամ-ները մասնակցում են նրա կլանքին և նրա գործու-նելության գիծը վորոշելուն Ալդ կատարվում է (յիթե դրան չի խանգարում խիստ անլեզարությունը) ղեկա-վարող որդանների ընտրության, միութենական լայն կոնֆերենցիաներ և համագումարներ անցկացնելու մի-ջոցով, վորոշ հարցերի շուրջը միության վորոշումները նախապատրաստելու համար զիսկուսսիաններ կազմա-կերպելու միջոցով։ Ստորին որդանները յենթարկվում են բարձր որդաններին։ Ղեկավարությունը միության մեջ փաստորեն կենտրոնացված է, և բոլոր անդամները պարտավոր են իրագործել կազմակերպության վորո-շումները և կատարել իրենց պարտականությունները նրանց նկատմամբ։ Միայն փաստորեն կենտրոնաց-ված կազմակերպություն լինելով, կոմյերիտմիությու-նը կարող է կոմկուսակցության հետ միասին հեղափո-խական պայքար մղել բանվո՞յ յերիտասարդության շահերի և կոմմունիզմի ընդհանուր նպատակների հա-մար։ Կոմյերիտմիության մեջ աիրող պրոլետարական դեմոկրատիան փաստորեն հակասում է սոցիալ-դեմո-կրատական կազմակերպությունների մեջ աիրող բյու-րոկրատիային։

Թեե կոմյերիտմիությունը կազմակերպչորեն ինք-նուրուլն է, սակայն նրա յեվ կոմկուսակցության մեջ կա սերտ կազմակերպչ, կապ, Այս կապը հաստատվում է փոխադարձ ներկալացուցչության միջոցով կազմա-կերպության բոլոր աստիճաններում։ Կուսակցության կողմից կոմունիստական յերիտասարդական միություն-ների ղեկավարությունն ապահովելու համար անհրա-ժեշտ է բավարար կուսակցական կորիզ կոմյերիտմիու-

թյան մեջ։ Այդ իրազործվում և նախ և առաջ նըանով։ Վ. ո տկտիզի (կաղըերի) գերակշռող մեծամասնությունը հանդիսանում է կոմկուսակցության անդամներ։

Համաձայն իր քաղաքական դերի և իր սոցիալական եյության, վորպես բանվոր յերիտասարդության կազմակերպության, կոմյերիտմիությունն ապահովում է բանվորական կորիզի ղեկավարող դերը և բացի այն յերկըներից, վորտեղ արդյունաբերություն չկա՞ նաև բանվորական մեծամասնությունը միության մեջ։ Հատկապես գաղութային յերկըներում և մեծաթիվ զյուղացիությունուն ունեցող յերկըներում միության ղեկավար որդաններում բանվորական կորիզի ղեկավարող դերն ապահովելը վճռական նշանակություն ունի։

Պրոլետարիատի մասսայական կազմակերպություններում (պրոֆմիություններ, սպորտային միություններ, առանձին ոժանդակ կազմակերպություններ և այլն) աշխատավոր յերիտասարդության վրա իր ղեկավարող ազգեցությունն ապահովելու համար կոմյերիտմիությունը կոմյերիտական ֆրակցիաների մեջ համախմբում և այդ կազմակերպություններում յեղած իր անդամներին։ Ֆրակցիաները հանդիսանում են կոմյերիտմիության հաղորդիչը և զլիսավոր զենքը։ Այդ կազմակերպությունների կոմյերիտմիության ֆրակցիաներում տիրում ե խիստ դիսցիպլինա, վորն այստեղ առանձնապես անհրաժեշտ է, քանի վոր ֆրակցիան աշխատում ե անկուսակցական և անգամ թշնամական շըրջապատում։ Ֆրակցիաները լիովին յենթակա յեն կոմմունիստական յերիտասարդական միության կազմակերպությանը։

Կոմյերիտմիությունն իր զործունելիությունը չի

սահմանավակում այն Շորինականության շրջանակներում, վոր սահմանում և բուրժուազիան նրա համար: Կապիտալիզմի գեմ մղած իր պայքարում կոմյերիտմիությունը միշտ ստիպված ե իր բացարձակ լիգալ գործունեյությունը շաղկապել անլեգալ յեվ կիսալեգալ աշխատանքի հետ, վորի հետեւվանքով նա կարող ե վոտնակոխ անել այն շրջանակները, վոր սահմանում և նրա համար բուրժուական որինականությունը:

Կոմյերիտմիությունը միշտ գիտակցում ե, վոր ինքը բոլոր կողմերից շրջապատված ե թշնամիներով, և միշտ կարող ե զալ այն ժամանակը, յերբ բուրժուազիան կստիպի նրան անցնել անլեգալ դրության: Դըրա համար ել նա տեխնիկապես և քաղաքականապես պատրաստվում ե ալդ հնարավորության համար և լեգալ պայմաններում ևս ստեղծում ե իր համար կազմակերպչական ապահարտությունը մեկն ե, վորպեսզի միությունն ստիպված անլեգալության անցնելիս կարողանա շարունակել իր աշխատանքը: Անլեգալ դրության մեջ յեվս կոմյերիտմիությունը պետք ե մնա մասսայական կազմակերպություն, այսինքն նա չպետք ե կորցնի շփումը մասսաների հետ յեվ զեկավարող ազդեցությունը նըրքանց վրա: Այս նալատակով նա ստեղծում ե աշխատավոր յերիտասարդության զանազան, վորոնց թըգում նաև քաղաքական, լիգալ կազմակերպություններ: Սակայն կոմյերիտմիությունը դիտում ե ալդ կազմակերպությունները սոսկ վորպես անլեգալ կոմյերիտմիության աշխատանքի լիգալ ձևեր: Գլխավոր խնդիրը հանդիսանում ե իր՝ կոմյերիտմիության և զեկավարության և զարգացման ապահովումը: Անգամ կա-

պիտակիստական տերրորի ամենածանր ճնշումը, բոլոր լեզաւ յերիտասարդական կազմակերպությունների ցրումը չեն կարող խանգարել կոմիերիտմիությունը ինքնուրույն կերպով շարունակելու աշխատանքը մասսաների միջ յել աննկուն կերպով պայքարելու իր նպատակների համար:

Յերիտասարդական կոմմունիստական ինտերնացիոնալը, հակառակ յերիտասարդական սոցիալ-դեմոկրատական ինտերնացիոնալին, վորն իրենից ներկայացնում և մի խարխուլ ֆեզերացիա, կառուց լած և միջազգային կենտրոնացման սկզբունքով: Նրա վորոշումները գերազույն որենք են ազգային սեկցիաների համար, քանի վոր Յերիտակոմինտերնը իրենից ներկայացնում և միասնական, միջազգային կոմմունիստական լերիտասարդական միություն:

### ԿՈՄՍԵՐԻՑՄԻԹՅՈՒՆ ԴԻՔՔԸ ՊԱՏԽՇՉԱՄԻ ՆԿԱՑՄԵՄԻ: ՆԲԱ ՀԵՂԾՓՅԵՍԿԱՆ ՀԱԿԱՑՄԻՑԱՐԻԱՑԿԱՆ ԱՌԽԱՑԵԼՔ

Միլիտարիզմը կատիտալիստական հասարակակալարդի կառերագույն և ամենահզուր ը սլկաց ուցիչ մասերից մեկն և կազմում: Կապիտալիզմի զարգացման իմակերիխիստական աստիճանին միլիտարիզմը աճում է հսկալական, մինչ այդ չտեսնված չափերով և ձբկում և իր կազմակերպությունների լայն ցանցի միջոցով ուղղակի և անուղղակի կերպով ընդգրկել ամբողջ ազգաբնակությունը: Միլիտարիզմը չի սահմանափակվում նրանով, վոր ստեղծում և ռազմական ջոկատներ. նա ձգտում է զինվորականացնել ազգաբնակության ամբողջ կյանքը և յեւթարկել այն իր նպա-

տակներին։ Միլիտարիզմը ծառայում և յերկու նպատակի. մի կողմից այն գործադրվում և վորպես զենք սեփական յերկրի աշխատավորության դեմ, ճնշված գաղութային ժողովուրդների և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների դեմ, իսկ մյուս կողմից՝ վորպես զենք իմպերիալիստական մրցակիցների դեմ։

Համաշխարհային հեղափոխության եպոխայում միլիտարիզմն ավելի բացարձակ, քան յերբեւիցեւ, ուղղվում ե բանվոր դասակարգի յեվ ճնշված գաղութային ժողովուրդների դեմ, հատկապես նա դառնում ե Խորհրդային Միության դեմ պայքարելու միջոց յեվ ապիտակ տերրորի զենք։ Բուրժուազիան մի շարք վերակազմակերպչական միջոցներ և ձեռք առնում կապիտալիստական բանակը նոր եպոխայի ինդիբներին հարժարեցնելու համար։ Իմպերիալիստական պետությունները գնալով ավելի մեծ չափով սկըսում են կրծատել զորակոչի յենթարկվող զինվորների քանակը խաղաղ ժամանակ և ավելացնել մշտապես զինվորական ծառայության մեջ գտնվող պրոֆեսսիոնալ վարձու զինվորների (կազմեր) քանակը և ստեղծել պահեստապորի և ամբողջ ազգաբնակության միլիտարիզացիալի ընդարձակ սիստեմ։ Այդ սկետք և ուժեղացնի իմպերիալիստական բանակները և դարձնի նրանց ավելի ճկուն և ավելի հեշտ գործադրելի աշխատավոր մասսաների դեմ։ Ներկայումս քաղաքացիական ազգաբնակությունը ներգրավվում և իմպերիալիստական պատերազմների նախապատրաստության մեջ։

Դրա համար ել պայքարը միլիտարիզմի դեմ

հանդիսանում ե պայքտոր բուրժուազիայի դասակարգային՝ տիբուպետության. հզորագույն զենքերից մեկի դեմ: Թաղաքի և գյուղի աշխատավոր լերիտասարդության լայն խավերը, վորոնց շարքերից միլիտարիզմը խում ե իր զոհերը, հանդիսանում ե այն մարդկային մատերիալը, վորով միլիտարիզմը լցնում ե բանակները և ռազմագաշտերը: Միլիտարիզմը ձգտում ե թունափորել լերիտասարդությունը փոքր հասակից ու թե գաղափարապես և թե կազմակերպչորեն ընդգրկել նրան իր ազգեցության շրջանակի մեջ: Դրա համար ել կոմյերիտմիության առաջնակարգ խնդիրն ե՝ անխոնջ պայքար մղել միլիտարիզմի դեմ յեզ ամենայեռանդուն հակամիլիտարիստական գործունեյություն ունենալ բանգոր յեզ գյուղացի լերիտասարդության մասսաների մեջ բանակում յեզ բանակից դուրս:

Սոցիալ-դեմոկրատիան իր բուրժուազիայի բանակն անցնելն ապացուցել և առանձնապես միլիտարիզմի հարցում: Խմանքերիալիստական համաշխարհային պատերազմի ժամանակ իր մեծ զավաճանությունից հետո նա ներկայումս վոչ միտյն չի պայքարում միլիտարիզմի դեմ, այլև ակտիվ կերպով աջակցում է նրան: Չնայած գործածվող կեղծավոր պացիֆիստական ֆրազներին, այդ աջակցությունը գնալով դառնում ե ավելի բացորոշ, և սոցիալ-դեմոկրատիան բացարձակորեն արտահայտվում ե հոգուտ բուրժուական հայրենիքի պաշտպանության սկզբունքի և գրանով իսկ հոգուտ միլիտարիզմի անհրաժեշտության: Դեռ ավելին: Նա ակտիվ կերպով մասնակցում ե միլիտարիզմի ամբաղնդմանը և վերակազմակերպմանը: Ցերիտասարդական Սոցիալիստական խոտերն ու-

ցիոնալը և սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունները լիովին բաժանում են սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների՝ այս քաղաքականությունը և դեռ լրացնում են այն պատերազմի դեմ «պալքարելու» կեղծավոր ուսմունքով և յերեխաններին բանվոր դասակարգի յերիտասարդության պացիֆիստական վոզով դաստիարակելու միջոցով պատերազմը «հաղթահարելու» կեղծավոր ուսմունքով։

Մանր-բուրժուական և բուրժուական շրջանների և անգամ իրենց բուրժուական կառավարությունների հետ միասին սոցիալ-դեմոկրատիան ոգտագործում և պացիֆիզմի զանազան ձևերը վորպես շղարշ մասսաների աչքերը փակելու համար։ Պացիֆիզմը, վորն իրը թե ժխտում և բոլոր պատերազմները և դինված ուժի ամեն տեսակի գործադրությունները և վոր հաստատում ե, վոր այդ նպատակին կարելի լի հասնել միայն խաղաղ աստիճանական ճանապարհով, զինաթափման և առանց դասակարգերի խտրության բոլոր մարդկանց գաղափարապես նվաճելու միջոցով ու առանց վերացնելու կապիտալիստական հասարակությունը, հանդիսանում ե անհուսալի ու տոպիա յեվ աշխատավոր մասսաների խարեյություն։ Այն ոգտագործվում է բուրժուագիայի և նրա գործակիցների կողմից վորպես խարեյության միջոց՝ պատերազմից հոգնած մասսաներից թագցնելու համար նոր իմպերիալիստական պատերազմների նախապատրաստությունը։ Պատերազմներ շարունակ տեղի կունենան, քանի դեռ գոյություն ունի իմպերիալիստական սիստեմը։ Աշխարհի բժանման համար պալքարող և պրոլետարական հեղափոխության առաջ դողացող բուրժուաշխան՝ իմպե-

րիալիստական և քողաքացիական պատերազմներ և մղելու մինչև այն ժամանակ, քանի դեռ հաղթական պրոլետարիատը չի խլել զենքը նրա ձեռքից։ Իմպերիալիստական խաղաղության կոնֆերենցիաները և հակավատերազմտկան դաշնագրերն ոգտագործվում են կապիտալիստների կողմից միայն ուղղմական սպառագինումները և իմպերիալիստական դավերը քողարկելու համար։ Ազգերի կրկան պատերազմի և վորսի ծարավի իմպերիալիստական մեծ պետությունների վըտանգավոր գործիքն եւ Պացիֆիզմը խոշորագույն վընաս և հասցնում բանվոր դասակարգին նայեվ նրանով, վոր չզինաթափելով բուրժուազիային, նա փաստորեն զենքից զրկում և միայն ճնշված դասակարգերին, ցնորդներ տարածելով նրանց շարքերում և վաճառելով նրանց մինչև ատամները զինված դասակարգային թշնամուն։

Այս մասին կենինը յերիտասարդությանն ասել է. «Ճնշված դասակարգը, վորը չի ձգտում սովորել տիրել զենքին, զենք ունինալ արժանի կլիներ, վոր նրա հետ վարվելին վորպես սորուկների հետ։ Մենք չենք կարող առանց բուրժուական պացիֆիստներ և ուսուպիստներ դառնալու մոռանալ, վոր մենք ապրում ենք դասակարգային հասարակության մեջ, և վոր նըրանից չկա և չի կարող լինել ուրիշ յելք, քան յեթե դասակարգային պայքարը և տիրող դասակարգի իշխանության խորտակումը։ Մեր լոգունգը պետք ե լինի՝ պրոլետարիատի սպառագինումը նրա համար, վորպեսզի նա հաղթանակի, եքսպրոպրիացիայի յենթարկի և զինաթափի բուրժուազիային։ Միայն նրանից հետո, յերբ պրոլետարիատը կզինաթափի բուր-

ժուազիալին, նա կարող է իր համաշխարհային պատմական ինդքսին չգավաճանելով գեն զցել առնվարտկ ամեն տեսակի զենք, և պրոլետարիատն անկառած կանի արդ, բայց միայն այն ժամանակ, վոչ մի դեպքում զրանից առաջ:

Կոմմունիստները պայքարում են կոմմունիստական հասարակակարգ հաստատելու համար յեվ դրանով իսկ սպառազեն բռնության յեվ պատերազմների վերացման համար: Սակայն մինչև այն ժամանակ, քանի զեռ գոյություն ունի կապիտալիստական սխանմը, «սոցիալիստները չեն կարող դեմ լինել ամեն մի պատերազմի, չդադարելսվ սոցիալիստներ լինելուց» (Լենին): Անհրաժեշտ ե տարրերի պատերազմի յերեր տեսակները. ա) պատերազմներ, վորոնք մղվում են իմպերիալիստական ոլետությունների կողմից իրար միջե, բ) ազգային հեղափոխական պատասղը կան պատերազմներ, առաջին հերթին գաղութների և կիսազաղութների կողմից մղվող. գ) կապիտալիստական հականեղափոխության պատերազմները պրոլետարական հեղափոխության դեմ, ինչպես նաև կապիտալիստական պետությունների պատերազմներն այն յերկը ներ կը ըների դեմ, վորտեղ պրոլետարական հեղափոխությունը հաղթանակել եւ:

Կոմմունիստները նանդիսանում են կապիտալիստական պատերազմի մահառիթ թշնամիները, նրանք խոշորագույն վճռականությամբ պարագագում են իմպերիալիստական պատերազմի վտանգի և իր իմպերիալիստական պատերազմի գեմ: Սակայն նրանք ամբողջ ուժով աջակցում են ճնշված ժողովուրդների ազգային հեղափոխական պատամբություններին յեվ պա-

տերազմներին, իմալների ալիզմի դեմ, հատկապես զառցուքն երում և կիոագաղութներում։ Նրանք կազմակերպում յեվ ղեկավէ բում են բանվոր դասակարգի հեղափոխական պատերազմը կապիտալիստական հականեղափոխության դեմ, նրանք կազմակերպում յեվ ղեկավարում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների հեղափոխական պատերազմը այն իմալների ալլիստական պետությունների դեմ, վորոնք շարունակ հարձակում են նախազարաստում Խորհրդային Հանրապետությունների վրա, նպաստելուն անհնալով վոչնչացնել նրանց Կոմմունիստներն ամբողջ աշխարհի առաջ հայտաբարում են, վոր պրոլետարիատի զինված ազստամբությունն անհրաժեշտ և բուրժուազիայի դեմ մղած նրա ազատազրական պայքարում՝ խորտակելու համար կապիտալիզմը և հասաւութելու համար պրոլետարիատի զինտառուրաց Միայն պրոլետարական զենքի հաղթանակի միջոցով, միայն կարմիր բանակի կազմակերպման և բուրժուազիայի հականեղափոխական փորձերի դեմ հեղափոխության նվաճութների զինված պաշտպանության միջոցով պրոլետարիատը կարող և աստիճանաբար անցնել աշխատավորների միլիցիային, վորպեսզի հետո տանի մարդկությունը դեպի առաջակարգակին հասարակությունը, վորը կմոռանա զենքի գործադրությունը։

Յեվ յեթե բանվոր դասակարգը՝ պաշտպանելու համար պրոլետարական դիկտատուրան, վորն ինքն իրենից ներկայացնում և միայն անցողիկ՝ աստիճաններից միկը՝ անցնելու համար ապագասակարգային կոմմունիստական հասարակության, վորի միջ չեն լինի պատերազմներ, ստիպված և նույնպես զինել տշխատա-

վորներին և կազմակերպել նրանց Կարմիր բանակում, արդ Կարմիր բանակն, այնուամենայնիվ, իր դերով և իր դասակարգային բնույթով սկզբունքորեն յեվ ըստ Եյության տարբերվում ե վորեվին բուրժուական բանակից: Կարմիր բանակն իրենից ներկայացնում և սպառապինված բանվոր դասակարգը՝ աշխատավոր գլուղացիության հետ դաշինք կնքած, վորը պաշտպանում և իր սեփական դասակարգի՝ պըսլեարիատի դիկտատուրան և սոցիալիզմի խաղաղ շինարարությունը: Միայն աշխատավորները պատիվ և իրավունք ունեն զենք կրկի Կարմիր բանակում: Նրա հրամանատարները ծագում են նույն դասակարգից, ինչ վոր զինվորները Նրա շարքերում աիրում և կամավոր ընկերական դիոցիպլինա, և Կարմիր բանակն ինքը հանդիսանում և աշխատավոր մասսաների դաստիարակության և նրա կուլտուրական մակարդակի բարձրացման ամենագորեղ զենքերից մեկը:

Կոմյերիտմիությունն իր գոյության գլխավոր խնդիրներից մեկը համարում և պայքարն իմպերիալիստական պատերազմի գեմ: Կոմմունիստները բոլոր ուժերը գործ են գնում, վորպեսզի պատերազմի դեմ մասսայական գործունեյություն սկսելու համար մորիլիզացիայի յենթարկեն մասսաները և կանխին իմպերիալիստական պատերազմը գորդի մեջ աշխատանք կատարելով: Յեթե պըսլեարիատի ուժերն անբավար են լինում իմպերիալիստական պատերազմները կամ հետաձգելու համար, յեթե իմպերիալիստական պատերազմն սկսվում է, կոմմունիստներն ամբողջ վճռականությամբ աշխատում են իմպերիալիստական պատերազմը վերածել բաղարացիա-

կան պատերազմի, նպատակ ունենալով խորտակել իմաստիալիգմը հաղթական պրոլետարական հեղափոխության միջոցով:

Իմաստիալիստական պատերազմների դեմ պայքարելու համար կոմմունիստները դիմում են բանվորդասակարգի մասսայական ակտիվ ձեռնարկումների և պրոպագանդ են անում նաև հոգուա մասսայական յևլ ընդհանուր զործադուլիս Սակայն ընդհանուր գործուգունդը պրոպագանդիստական լոգունգից անմիջական գործունեյության լոգունդ դարձնելը կախված է հանդամանքներից, քանի վոր կոմունիստները պարզ գիտակցում են, վոր պատերազմի առաջն առնելու նպատակով ընդհանուր գործադուլն որակարգի հարց և գարձնում իմաստիալիստական պետական ապահատի հետ զինված ընդհարումների ինդիբը և իշխանության խնդիրը: Դրա համար ել կոմմունիստները դեն են շպրուում «Ճախ» սոցիալ-դեմոկրատների կեղծավոր ֆրազները, վորոնք բանակում և մասսաների մեջ վոչ մի նախապատրաստություն չկատարելով, չպայքարելով իմաստիալիստական պատերազմի դեմ այսոր, պատրաստ չինելով դնելու իշխանության ինդիրը, հայտարարում են, թե իրենք պատերազմի հայտարարմանը «կապատասխանեն» ընդհանուր գործադուլով: «Այսպիսով ճախ» սոցիալ-դեմոկրատները միայն բանվոր դասկարգը յետ են պահում իմաստիալիստական պատերազմի դեմ լուրջ պայքար մղելուց, հանգստացնում են նրան այնտեղ, ուր հարկավոր ե, մարտական պատրաստություն, և այսպիսով գործոն կերպով նպաստում են բուրժուազիայի նախապատրաստությանը նոր իմաստիալիստական պատերազմների:

Հայրենիքի պաշտպանության լոգունզը կապիտալիստական պետությունների նկատմամբ հանդիսանում ե իմալերիալիտոտական պատերազմի հավանության լոգունզ, յեվ կոմմունիստները վճռականությամբ մերժում են այն: Ընդհակառակը, հանուն յուրաքանչյուր յերերի բանվոր գասակարգի շահերի իմալերիալիստական սրատերազմ մղող կոմմունիստները նպատակում են սեփական բուրժուազիայի պարտությանը, վորդեսզի հնարավորություն ունենան ավելի շուտ խորտակել նրան և այդպիսով ավելի շուտ վերջոցնել իմալերիալիստական սրատերազմը: Այդպիսով կոմմունիստներն իմալերիալիստական սրատերազմի նկատմամբ քարոզում են նեղափոխական պարտվողականություն կոմմունիստներն ազիտացիա յեն մղում հոգուտ իրարդիմ կռվող իմալերիալիստական պետությունների զինվորների յեղբայրացման:

Կոմմունիստները, սակայն, վճռուկանորին արտահայտվում են հոգուտ հեղափոխական սոցիոլիստական հայրենիքի պաշտպանության ընդդիմ իմալերիալիզմի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը հանդիսանում ե ամբողջ աշխարհի աշխատավորների սոցիալիստական հայրենիքը: Կոմմունիստները ճիշտ այլպես ընդունում են նաև գաղութների և կիսապաղութների ապատամբ ճնշված ժողովուրդների հեղափոխական իրավունքը և պարտականությունը՝ պաշտպանելու իրենց յերեխերն իմալերիալիզմի դեմ:

Իմալերիալիստական պետությունների կողմից Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կամ ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական շարժման դեմ մղվող պայքարում բանվոր գասակարգը

պետք են նպաստի հեղափոխական կողմի հաղթանակին: Նա պետք են հանդես գա վոչ միայն հոգուտ լիդրայրացման, այլ և պետք են աշխատի, վորոբեադի իմակերիալիստական պետությունների զորքերն անցնեն հեղափոխության կողմը:

Կոմմունիստները մերժում են նաև պատերազմական ծառայությունից անհատապես հրաժարվելու կամ ռռազմական գործադուլից անարխուսինդիկալիստական լոգունվը: Այս դեպքում նրանք գործում են Լենինի ուսմունքի վոգով, վորը պրոլետարական մոր քերանով նրա վորդուն ուղղում են հետեւյալ խոսքերը:

«Դու շուտով կմնանաս, քեզ զենք կտան: Վերցըրու այն ելավ սովորիր ուղմական գործը: Այդ գիտությունն անհրաժեշտ ե պրոլետարների համար: Անհրաժեշտ ե վոչ թե իր յիշարների, ուրիշ յերկրըների բանվորների վրա կրակելու համար, այլ պարքարելու համար իր սեփական յերկրի բուրժուազիայի դեմ, վերջ դնելու համար շահագործմանը, աղքատությանն ու պատերազմներին վոչ թե բարի ցանկությունների, այլ բուրժուազիային հաղթելու և նրան զինաթափելու միջոցով»:

«Հիմար ֆրազ ե պատերազմի բոյկոտը» ևս (Լենին): «Պատերազմական ծառայությունից հրաժարվելու առանձին դեպքերը զրկում են բանակը հենց բանվոր դասակարգի հեղափոխական ելեմենտներից և հենց դրանով խանգարում են հեղափոխական բացատրական աշխատանքի և կազմակերպության միջոցով բանակում դանվող աշխատավոր մասսաների վրա ազդելուն:

Իմպերիալիստական սիստեմի դեմ մղած իր պայքարում պըռլետարիատը ձգտում է արթնացնել բուրժուական բանակի պըռլետարական և կիսապըռլետարական տարրերի գիտակցությունը, զրավել նրանց իր կողմը, զինվորների զենքը, վոր ուղղված է բանվորների դեմ, շուռ տալ և ուղղել տիրող դասակարգի դեմ։ Առանձնապես կարեոր դեր է խաղում աշխատանքը բը բանակում, քանի վոր միայն բանվոր դասակարգի մասսայական ձեռնարկումների հետ միաժամանակ բանակում հեղափոխականների գաղտնի կազմակերպություն ստեղծելու ճանապարհով» (Լենին), այսինքն առաջին հերթին կոմմունիստական բջիջներ ստեղծելու ճանապարհով կարելի յե պալքարել իմպերիալիզմի դեմ և ճնարավոր և նախապայմաններ ստեղծել պըռլետարական հեղափոխության հաղթանակի համար առհասարակւ.

Կոմյերիտմիությունն իր հակամիլիիստարիստական պայքարում իր առաջ գնում և առաջին հերթին հետեւյալ խնդիրները.

ա) Խորհրդային Միության պաշտպանությունը կապիտալիստների հարձակումներից։

բ) Ակտիվ մասնակցությունն ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարին իմպերիալիստների դեմ։

գ) Հեղափոխական պայքար բուրժուական բանակի ներսում, այսինքն զինակոչիկների և մշտական բանակի, պահեստագորի ոկկուլացիոն և գաղութային զորքերի ռազմական պատրաստության կազմակերպությունների մեջ բջիջներ և հեղափոխական խմբակներ ու զրուազպաներ կազմակերպելու միջոցով։ Բացա-

արտական պըռպագանդ պատերազմի և միլիտարիզմի  
ու բանակը բուրժուադիալի սկախ զործադրելու դեմ:  
Դ) Պայքար յերիտասարդության բուրժուական  
միլիտարիզմացիայի դեմ:

Այդ միլիտարիզմացիան բուրժուազիայի կողմից  
անց և կացվում ամենաբազմագան ձեւրով, վորոնց մեջ  
կարեռագույնները հանդիսանում են յերիտասարդու-  
թյան ռազմական նախապատրաստության համար կա-  
տարվող ձեռնարկութերը: Մինչդեռ վորոշ դեպքերում  
յերիտասարդության բուրժուական ռազմական պատ-  
րաստությունը պարտադիր և ամբողջ յերիտասարդու-  
թյան համար, այլ տեղերում բուրժուազիան փորձում  
և միլիտարիզմացիայի իրական բնույթը քողարկելը  
ստեղծելով ալյասիս կոչված զանազան «չեզոք» և կա-  
մավոր կազմակերպություններ յերիտասարդության  
ռազմական ուսուցման համար, կամ աջակցելով արդ-  
պիսի կազմակերպությունների: Սակայն յերիտասար-  
դության կամմավոր կազմակերպությունների գորության  
դեպքում ես մեծ մասնամբ յերիտասարդության վրա  
տնտեսական և քաղաքական ճնշում և գործ զըր-  
գում, դրգելու համար նրան մտնելու այդ կազմակեր-  
պությունների մեջ:

Կոմյերիտմիությունը պայքարում և յերիտասար-  
դության բուրժուական, ռազմական պատրաստության  
ինչպես պարտադիր, նույնապես և կամմավոր ձեւրի  
դեմ, սակայն վոչ թե պացիֆիզմի վորով, այլ պրոլե-  
տարական զասակարգային պայքարի տեսակետից:  
Դրա համար ել նա բուրժուական ռազմական նախա-  
պատրաստությանը հակադրում երանվոր դասակար-  
գի սեփական կամմավոր ռազմական նախապատրաս-

տությունը սեփական պրոլետարական կազմակերպությունների միջոցով։ Նա հիմնավորում է իր ալս դիրքը Լենինի այն պահանջով, վոր «լուրաքանչյուր տվյալ յերկրի ասենք՝ 100 բնակիչ իրավունք ունեն կազմել ազատ միություններ ամբողջ ռազմական գործն ուսումնասիրելու համար, ազատ կերպով ընտրելով հրահանգիչներ, վճարելով նրանց աշխատանքը պետության հաշվին և այլն։ Միայն այդպիսի պահմաններում պրոլետարիատը կարող է ուսումնասիրել ռազմական գործն իսկապես իր համար և վոչ թե իր ստրկատերերի, և պրոլետարիատի շահերն ել անպարմանորեն պահանջում են այդպիսի ուսումնասիրություն։

Այնտեղ, վորտեղ յերիտասարդության ռազմական նախապատրաստությունը պարտադիր է, կոմիտիտությունը նրա նկատմամբ նույնպիսի դիրք և ընդունում, ինչպես բանակի՝ իր նկատմամբ, վորի մասը հանդիսանում է այդ նախապատրաստությունը։ Այդ վերաբերում է ինչպես այդ կազմակերպությունների մեջ մտնելուն, նույնպես և նրանց քայլայելու համար կատարվելիք աշխատանքին։ Կոմյերիտմիությունն ասում է այն յերիտասարդ բանվորներին, վորոնք զորակոչի յեն լենթարկվում ծառայելու համար այդ կազմակերպություններում, վոր նրանք պետք է գնան այդ կազմակերպությունները և նրանց մեջ բացատրական աշխատանք կատարեն և աշխատեն նրանց քայլայելու համար։ Կոմյերիտմիությունը կազմակերպություններում, վոր նրանք պետք է գնան այդ կազմակերպությունները և նրանց մեջ բացատրական աշխատանք կամաց կազմակերպությունների մեջ ևս, նրանց դեմ դրսից պայքար մղելու հետ

միասին, ներքին բացատրական և քայլալիչ աշխատանք և կատարում: Յերիտասարդության ռազմական պատրաստության կազմակերպությունները ներսից քայլալիու համար աշխատանք կատարելուց հրաժարվելը, այսինքն այդ կազմակերպություններում դաընվող աշխատավոր յերիտասարդության մեջ բացատրական և կազմակերպչական աշխատանք կատարելուց հրաժարվելն անթուլատը ելի լի:

Ե) Պայքար զինվորների բաղաքական յեվ տընտեսական իրավունքների համար:

Սկզբունքորեն պայքարելով միլիտարիզմի դիմ, կոմյերիտմիությունը ճիշտ այնպես, ինչպես քաղաքի և զբուղի բանվոր յերիտասարդության նկատմամբ, չի մոռանում, սակայն, պայքարել զինվորների յեվ նավաստիների դրության բարելամվան ուղղությամբ կատարվող անմիջական մասնակի պահանջների համար, ընդ վորում նա մասնակի պահանջների համար մղվող պայքարը շաղկապում և վերջնական նպատակների համար մղվող պայքարի համար մղվող պայքարի հետ: Նա հանդեմ և գալիս հոգուտ զինվորների և նավաստիների քաղաքական և պրոֆեսիոնալ լիակատար իրավունքների, հոգուտ ավելի բարձր վճարի, արձակուրդների, ծառալությունից դուրս քաղաքացիական հագուստ կրելու, հոգուտ սպաների ընտրականության զինվորների կողմից, հոգուտ առանձին ռազմական արդարադատության վերացման, հոգուտ պահեստագորի զինվորների և նավաստիների առանձին կոմիտեների կազմության և ճանաչման, հոգուտ զինվորական պրոֆմիությունների կազմակերպման:

Կոմյերիտմիությունը պաշտպանում է նաև պրո-

Քեսսիոնալ զինվորների շահերը, վորոնք իմպերիալիստական բանակի վերակազմակերպման հետևանքով գնալով ավելի խոշոր տեսակարգար կշիռ են ստանում: Նա ձգտում է հաղթահարել իմպերիալիստական ոիստեմի կողմից զորակոչի լենթարկվող և պրոֆեսսիոնալ եինվորների միջն ստեղծվող պառակտումը և միավորել նրանց իմպերիալիստական ոազմական սիստեմի դեմ մղվող միացյալ ճակատում:

Զինվորների, պահեստագորի և նավաստիների կոմիտեները պետք ե զինվորականների լայն մասսաները համախմբեն՝ պայքարելու համար իրենց մասնակի պահանջների համար և պաշտպանելու համար այդ պահանջները: Կոմիտեմիությունը պայքարում է այդ կոմիտեների լեզվալիզացիայի և ճանաչման համար, սակայն կազմակերպում է նրանց նաև անլեզվալ յեթե բուրժուական իշխանությունները չեն ճանաչում կամ չեն թույլ տալիս կազմակերպել նրանց: Իշխանության համար մղվող անմիջական կովի շրջանում անհրաժեշտ է դառնում զինվորական խորհուրդների ստեղծումը:

Կոմիտեմիությունը պալքարում է նաև զինվորական ծառայության ժամանակաշրջանի կրնատման համար, կապելով այդ պահանջն իր վիրջնական նպատակների հետ, պարզուն յերեան հանելով իր սկըլլունքային վերաբերմունքն իմպերիալիստական պատերազմի նկատմամբ և այդպիսով այդ պահանջը դարձընելով իմպերիալիստական բանակալին սիստեմի քալքարման լծակ: Այդպիսի պահանջի կոնկրետ ձևը, նրա առաջադրման ժամանակը կախված են զանազան հանգամանքներից, վորոնց թվում նաև զինվորների և

բանվորների մեջ յեղած մասսայական տրամադրությունից:

Կոմիերիտատիությունը, սակայն, խիստ տարբերություն և զնում ռազմական ծառայության ժամանակը կրծատելու կոմմունիստական պահանջների և զանազան բուրժուական և սոցիալ-դեմոկրատական այն առաջարկությունների միջև, վորոնք արվում են ռազմական ծառայության ժամանակաշրջանի կրծատման վերաբերյալ: Վերջինները հանդիսանում են դեմքոգիական քայլեր և մեծ մասամբ համապատասխանում են իմպերիալիստների կողմից զորքի մարտունակությունը բարձրացնելու նոյատակով, նրա վերակազմակերպման ուղղությամբ կատարվող ձեռնարկումներին: Կոմիերիտմիությունը մերկացնում է այդպիսի առաջարկությունները վորպես իմպերիալիստական սպառագինումների մի մասը, և պայքարում է նրանց դեմ, հակառելով նրանց իր սեփական պահանջները և սկըրբունքալին լոգունգները:

զ) Պայքար բուրժուազիայի կողմից, հատկապես պրոլետարիատի ճնշման համար ստեղծվող առանձին ռազմական կազմակերպությունների դեմ (որինակ՝ ֆաշիստական միլիցիան, «Հալլենիքի պաշտպանությունը», «Պողպատե սաղավարտը», «Ռայխսբանները», «Շուցըըունդը» և այլն), վորոնց համար ոեակցիոն ռազմական և ազգայնական յերիտասարդադական կազմակերպությունները վորպես ոեզերվ են ծառայում: Իմպերիալիստական պատերազմի դեպքում նրանք միաժամանակ պետք են ծառայեն բուրժուազիային, վորպես նրա ռազմական ուժերի լրացման աղբյուր: Կոմիերիտմիությունը կոմկուսակցության

հետ միասին պայքարում ե նրանց զինաթափման համար և բանվոր դասակարգի պաշտպանության համար առաջադրում ե պրոլետարական պաշտպանության առանձին կազմակերպություններ:

**Է) Աշխատանքը ռազմական արդյունաբերության մեջ:**

Արդյունաբերության վճռական դերն առաջիկա իմպերիալիստական պատերազմներում անհրաժեշտ ե դարձնում ներկայումս արդեն սիստեմատիկ կազմակերպչական աշխատանք կատարել ռազմական արդյունաբերության մեջ աշխատող յերիտասարդ բանվորների շրջանում (մետաղարդ յունաբերություն, քիմիական արդյունաբերություն, տրանսպորտ և այլն), նպատակ ունենալով կոմմունիստական բջիջներ ստեղծել այդ ձեռնարկություններում:

Յերիտկոմինաներնի կողմից միլիտարիզմի դեմ առաջադրվող այս ընդհանուր և մասնակի պահանջների իրազործման համար կոմիտերիտմիությունն ընդառածակ պրոպագանդ և ազիտացիա յե մզում բանվոր և ամբողջ աշխատավոր յերիտասարդության լայն մասսաների մեջ, ինչպես նաև հատկապես բանակում գտնվող յերիտասարդ աշխատավորների շրջանում:

### ԿՈՄՍԵՐԻՑՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԵԺՈՐԸ ԲՈՆՎԱՐ ԵՐԻՑԱՍՏՐԻՈՒԹՅԱՆ ՏԵԽԵՍՑՈՆ ԳԵՀԱՆՁՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կապիտալիզմի ժամանակ անհնարին ե բանվոր յերիտասարդության դրության արմատական բարելավումը, Դեռ ավելին, կապիտալիզմի անկման շրջանում, յերբ բուրժուազիան ձգտում ե ինչքան կարելի յե ավելի իջեցնել պրոլետարիատի և նրա յերիտասարդու-

թրան կենսական մակարդակը, նաև բոլոր միջացներով պայքարում ե այդ մակարդակի բարձրացման ամենաշնչին է՝ որձիրի գիմ: Իմպերիալիզմի անկժան շրջանն իր հետ բներում ե բանվոր յերիտասարդության գրության չափազանց վատացում: Դրա համար ել բանվոր յերիտասարդությունն իր աշխատանքի յեվ դաստիարակության պայմանների արմատական փոփոխություն սպասել կարող ե միայն պրոլետարիատի հաղթանակից հետո:

Սակայն դա չի նշանակում, վոյ կոմյերիտմիություն է հրաժարվում ե կապիտալիստական հասարակակարգի մեջ յերիտասարդության դրությունը և աշխատանքի օրայիւանները փոխելու համար պայքարելուց:

Կոմյերիտմիությունը դեռեվս մինչեվ պրոլետարիատի կողմից իշխանությունը զրավելը պայքարում և բանվոր յերիտասարդության դրությունը բարելավելու մասնակի պահանջների սպահն, յելնելով նրանից, վոր այդ պահանջները հանդիսանում են մասսաների անմիջական ակտուալ անհետածգելի պահանջներ, յեվ անկախ այն հանգամանքից. թե համատեղելի<sup>o</sup> յեն արդյոք այդ պահանջները կապիտալիստական տնտեսության հետ թե վոչ: Այնքան, վորքան այդ պայքարը մասսաների կենսական կարիքները հակադրում ե կապիտալիստական հասարակության շահերին, բանվոր յերիտասարդությունն սկսում ե գիտակցել վոր առանց կապիտալիզմի խորտակման յեվ. առանց պրոլետարիատի դիկտատորայի հաստատման նա չի կարող իրականացնել տալ այդ պահանջներն իրենց ամքողջությամբ:

Կոմյերիտմիությունը պաշտպանում և բանվոր

յերիտասարդության մասնակի պահանջները և շահերն իրական պայքարում, հակառակ ոցիալ—դեմոկրատական յերիտասարդական կազմակերպությունների, վորոնք իրապես վոչինչ չեն անում քանվոր յերիտասարդության գրության բարելավման համար, այլ բանվոր յերիտասարդության տնտեսական լողունգներն ոգտագործում են միայն դեմագոգիական նպատակներով, քողարկելու համար իրենց իսկական բուրժուական ելությունը և նրա համար, վորպեսզի չկորցնեն իրենց ազգիցությունը բանվոր յերիտասարդության վրա։ Սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունները մասնակցում են սոցիալ-դեմոկրատական կուսակցական և պրոֆմիութենական բյուրոկրատիալի համաձայնողական ռեֆորմիստական քաղաքականությանը, վորը հեշտացնում և և հնարավոր ե գարձնում կապիտալի հարձակումը բանվոր դաստկարգի վրա։ Այս գնալով ավելի պարզորոշ կերպով իր արտահայտությունն ե գտնում այն համագործակցության մեջ, վոր նրանք ցուց են տալիս բուրժուական կազմակերպություններին նաև տնտեսական բնագավում (որինակ՝ յերիտասարդական միությունների համագերմանտեսական կոմիտեյում):

Յերիտկոմինտերնի կարեվորագույն մասնակի պահանջները յերիտասարդ բանվորների յեվ բանվորութինների համար հանդիսանում են հետեւյալները.

Վարձու աշխատանքի արգելումը մինչև 14 տարեկան յերեխաների համար, դրա մեջ հաշված նաև անուղղակի վարձու աշխատանքը տնալին արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ։

Մինչև 18 տարեկան հասակը յերիտասարդու-

թլան պարտադիր արտադրական ուսուցումը գործարանային դպրոցներում լիսակատար վճարով։ Գործարանային դուռոցները պետք են ընդգրկեն՝

ա) աշակերտական բաժանմունքներ կամ աշակերտական արհեստանոցներ ձեռնարկութլան մեջ.

բ) տեսական դասավանդում և ֆիզիկական դաստիարակություն.

գ) աշակերտաների աշխատանքը ձեռնարկության մեջ վորպես դպրոցական ծրագրի մի մաս.

դ) աշակերտության և աշխատանքի բոլոր հարցերի տարիքալին կարգավորումն այդ դործարանային դպրոցներում և վերահսկողությունն նրանց նկատմամբ բանվոր դասակարգի կողմից (պրոֆմիություններ, գործարկումներ, յերիտասարդություն լիազորներ):

Այսպիսով, յերիտասարդության դաստիարակությունը ներկա դպրոցական հասակից դուրս պիտի լիրկարացվի մինչև 18 տարեկանը կամ, ծայրահեղ դեպքում, մինչև 16 տարեկանը, գործարանային դըպրոցներում տրվող ուսմամբ։

Մաքսիմալ 6-ժամյա բանվորական որ մինչև 18 տարեկան յերիտասարդության համար և 4-ժամյա բանվորական որ 14—16 տարեկանների համար։

6-ժամյա և 4-ժամյա բանվորական որ՝ մտցնելու դեպքում աշխատանքի վճարումը լրիվ 8 ժամվա համար։

Պայքար յերիտասարդության ցածր աշխատավարձի դեմ, բարձր աշխատավարձի համար։

Աշխատավարձի մինիմումի սահմանում, վորպես ամենացածր աստիճան ընդունելով կենսական պահանջների մինիմումը։

Յուլոր լերիտաստարդ և չափահաս լերկու սեսի  
բանվորների համար հավասար աշխատավարձ հավա-  
սար աշխատանքի համար։ Աշակերտների աշխատա-  
վարձի պրոզրեսսիվ բարձրացումն աշակերտության  
շրջանում։

44-ժամյա կիրակնորյա հանգիստ։

Յերիտասարդական որդանիզմի համար պնասակար  
զործարքային աշխատանքի վերացում։

Զորաշաբաթյա վճարվող արձակուրդ տարվա  
ընթացքում մինչև 18 տարեկան ամբողջ լերիտա-  
ստարդության համար և յերիտասարդությանը ձրիա-  
բար հանգատյան տներում և սանատորիաներում ապ-  
րելու հնարավորություն։

Գիշերային աշխատանքի արգելում մինչև 20 տա-  
րեկան լերիտասարդության համար։

Մինչև 20 տարեկան լերիտասարդության աշխա-  
տանքի արգելումն այն ձեռնարկություններում, պրո-  
ֆեսսիաներում և աշխատանքներում, վորոնք մլասուակար  
են առաջության համար և չափազանց ծանր են լե-  
րիտասարդության համար (ապակու արգյունաբերու-  
թյուն, ստորերկրյա աշխատանք հանքային արդյու-  
նաբերության մեջ, քիմիական արգյունաբերության  
վորոշ բնագավառներ և այլն)։

Աղջիկների աշխատանքի հատուկ պաշտպանու-  
թյուն։

Բավարար և հաճախուիի հանգստի ընդմիջումներ  
աշխատանքի ժամանակ՝ ուացիոնալացված ձեռնար-  
կություններում։

Սոցիալական ապահովագրության ներմուծումը  
և լայնացումը ձեռնարկատերների և պետության հաշ-  
վին, բանվորների հոկողության տակ։

Ընդպեմ տուգանքների սիստեմի (դրամական տուգանքներ և ֆիզիկական պատիմներ):

Աշխատանք և սովորելու հնարավորություն գերիտասարդ գործադուրիների համար Յերիատարդ գործադուրիների ձեռնարկություններում և արհեստունոցներում աշխատանքի ուղարկվելը, ապահովելով պրոֆեսսիոնալ ուսման շարտնակումը և լիովին վըճարելով ըստ տարիքի հակառակ դեպքում բավարար նպաստ գործադրկության համար, կենսական մինիմումի չափով:

Աշակերտության նկատմամբ հետեւալը.

Անհատական աշակերտական պայմանագրերի վերացումը և աշակերտների ընդունումը կուեկտիվ պայմանագրերով:

Աշակերտական աշխատանքից մեծ չափերով ոգտվելու արգելումը աշակերտներ ունենալու վերաբերյալ խիստ վարոշումների հրատարակության միջոցով (բանվորների ընդհանուր թվի նկատմամբ աշակերտների մաքսիմալ քանակի սահմանումը, խիստ պատիմներ վատ վերաբերմունքի, բանվորական որվակա և լերիատասարդության պաշտպանության որենքների խախտման համար):

Մի շաբաթ արհեստավորական և մանր ձեռնարկություններում միացյալ աշակերտական արհեստանոցների հիմքումը, վորակե աշակերտները պետք է անցկացնեն բանվորական որվակ չիրիատասարդության մասին:

Աշակերտներին իրենց ուսուցվող պրոֆեսսիայի հետ չկապված աշխատանքներով ոգտագործելու արգելումը: Մննդի և բնակարանի վերաբերությամբ վորեիցն ստիպողականության վերացումը:

Գոյություն ունեցող պրոֆդպրոցների վերակաղսակերպումը, նրանց արտազըռության հետ շաղկապելու վոգով։ Աշակերտներին՝ աշակերտական գործարանային արհեստանոցներում և պրոֆդպրոցներում ուսուցումը և դպրոցների կառավարումը կազմակերպելու գործին մասնակցություն ունենալու իրավունք, իրենց ընտրած խորհուրդների միջոցով։

Խիստ վերահսկողություն պրոֆեսսիոնալ ուսուցման և աշակերտության ամբողջ սիստեմի վրա պրոլետարիատի որդանների կողմից (պրոֆմիություններ, գործարկություններ, յերիտասարդության լիազորներ ձեռնարկություններում և այլն)։

Աշակերտության հավասար իրավունքներ տղաների և աղջիկների համար։

Կոմիերիտմիությունը պահանջում է նաև յերիտասարդներին, նրանց արտազըռության մեջ մտնելու մոմենտից, գործարկություններում ընտրելու ակտիվ և պասսիվ ընտրական իրավունք տալ։

Այն հանգամանքը, թե կոմիերիտմիությունը ուր և յերբ ե առաջազրում այս կամ այն պահանջը վորպես պայքարի կոնկրետ լողունգ, կախված է յերկրի պայմաններից, բանվոր յերիտասարդության դրությունից ու տրամադրությունից, միության ազգեցությունից, դասակարգակին պայքարի հասունության աստիճանից և այլն։

Յելնելով բանվոր յերիտասարդության դրության տվյալ առանձնահատուկ պայմաններից առանձին յերկրներում, կոմիերիտմիությունը լրացնում է, այս պահանջները հանգամանքների համեմատ և արդյունաբերության վորոշ ճյուղերի համար, վորոշ շարժ-

ման համար, վորոշ շրջանների և ձեռնարկությունների համար։ Ալսպիսով, չնայած նրան, վոր կոմյերիտմիությունը հանդես է դալիս հոգուտ իսկական, հիմնական, արտադրական ուսուցման հաստատման կամ յերկարածվման, կոնկրետ առանձին զեպքերում նապահանջում և կապիտալիստական աշակերտության ժամանակաշրջանի կրնատումը մինչեվ յերկու տարի։

Ալդպիսնակ աշակերտների և բանվոր յերիտասարդության աշխատանքային որվա հարցը բոլոր յերկըբներում միաստիսակ չի գրվում։ Այստեղ, որինակ, վորտեղ դոլություն ունեն պրոֆտեխնիկական դպրոցներ, կոմյերիտմիությունը պետք է հանդես գտ հոգուտ դպրոցի ուսման ժամերը բանվորական որվա մեջ մտցնելու և հոգուտ այդ ժամերի լիտկատար վճարման, վորպես բանվորական ժամանակի մի մասի, և այլն։ Կոմյերիտմիության խնդիրը հանդիսանում է նաև մասնակցությունը տարիփային պայմանագրերի կնքման բոլոր մանրամասնություններին այն մասում, վոր վերաբերում և յերիտասարդությանը։ Կոմյերիտմիությունը հանդես է դալիս նաև հոգուտ յերիտասարդության ամենաաննշան պահանջների ձեռնարկություններում։

Բանվոր յերիտասարդության բախտն անխզելիորեն կապված է ամբողջ բանվոր դասակարգի բախտի հետ։ Բանվոր յերիտասարդության տնտեսական պայքարը հաջողությամբ պսակվել կարող է միայն այն ժամանակ, յերբ նա տարվի հասակավոր բանվորների պայքարի հետ միասին և լիտկատար ոժանդակություն ստանա վերջինի կողմից։ Հասակավոր պրոլետարիատը պետք է իր աջակցու-

թյունը ցույց տա պայքարող յերիտասարդությանը, քանի վոր բանվոր յերիտասարդության շահներն ամբողջ պրոլետարիատի շահներն են, յեզ բանվոր յերիտասարդության տնտեսական պայքարներում հրապարակի վրա յեն դրվում ամբողջ պրոլետարիատի սեփական անմիջական շահները:

Այդպես նաև բանվոր յերիտասարդությունը և նրա ղեկավար կոմյերիտմիությունը պետք է ակտիվ կերպով մասնակցին բանվոր դասակարգի մասնակի պահանջների համար կազմակերպի դեմ մղվող բոլոր կոիմլներին:

Կոմյերիտմիությունը վճռականապես ժխտում և ռեֆորմիստների տեսակետը, վորի համաձայն աշակերտները և յերիտասարդ բանվորները չպետք են ներգրավվեն աշխատանքի պայքարին ընդդեմ կապիտալի: Այս տեսակետն իրականում տշակերտներին և յերիտասարդ բանվորներին դնում և շտրեյկրեխներների գրության մեջ: Յերիտասարդ բանվորները և աշակերտները պետք է իրենց ձեռնարկության բանվորներին հավասար իրավունքներով մասնակցեն ինչպես իրենց ձեռնարկության, նույնպես և ամբողջ բանվոր դասակարգի գործադուլներին և այլ ինույթներին: Դրա համեմատ բանվոր յերիտասարդությունը պետք է իր ներկայացուցչությունն ունենա բանվոր դասակարգի մարտական որգաններում, կապիտալի դեմ մղած նրա կումլներին մասնակցելու համար:

Քանի վոր բանվոր յերիտասարդության պայքարն իր տնտեսական պահանջների համար հանդիսանում է սոսկ ամբողջ պրոլետարիատի պայքարի մի

մասը, կոմիերիտմիությունը խնդիր չի գնում իրեն՝  
միկուսացված էրպարզ վարել այդ պայքարը, նա  
պետք է ձգուի առահովել հասակավոր բանվորների  
և առաջին հերթին պրոֆմիությունների աջակցու-  
թյունն այդ պայքարում: Թեև կոմիերիտմիությունը  
ձգտում է կոմկուսացության հետ միասին և ընդհա-  
նուր պայքարի շրջանակներում իր ձեռքը վերցնել  
պայքարող բանվոր յերիտասարդության զեկավարու-  
թյունը, սակայն, վորպես կանոն, կոմիերիտմիությու-  
նը չի կարող ինքը լինել կապիտալի դեմ մզվող պայ-  
քարի միակ կրողը:

Յերիտասարդության ինքնուրույն յելույթների  
դեպքերն, այնուամենայնիվ, հնարավոր են, հատկա-  
պես ոեփորմիստական պրոֆմիութենական բլուրովրա-  
տիակի սարուաաժի դեպքում և այն յերկրներում, վոր-  
ցեղ յերիտասարդությունն աննշան չափով և կազմա-  
կերպված պրոֆմիություններում: Այդպիսի դեպքե-  
րում կոմիերիտմիությունը պետք է լինի պայքարի  
առաջին շարքերում: Կոմիերիտմիությունն առանձնա-  
պես պետք է կանգնի յերիտասարդական գործադուլ-  
ների զլուխը և յեթե այդ նպատակահարմար ե, ինքը  
կազմակերպի այլպիսի զործադուլներ: Սակայն նա  
պետք է ձգտի հասակավոր բանվորների աջակցու-  
թյունն ստանալ ստիպել պրոֆմիություններին դուրս  
գալ պայքարի և կազմակերպել պրոֆմիություննե-  
րում շկազմակերպված յերիտասարդությունը:

Ընդհանուր առմամբ կապիտալի դիմ յերիտա-  
սարդության պահանջւերը պաշտպանելու խնդիրը  
պետք է լուծվի պրոֆմիությունների յեզ կոմիերիտ-  
միության կողմից միասին:

Պրոֆմիությունները հանդիսանում են ինչպես հաստկավոր, նույնազես և յերիտասարդ բանվորների տնտեսական շահերի պաշտպանության լայն մասսայական կազմակերպություններ։ Առաջես արդպիսին, նրանք հեղափոխական դեկավարության դեղքում հանդիսանում են կոռմունիզմի կարեռագույն դպրոցներից մեկը բանվորների լայն մասսաների համար։

Ներկայումս այդ վերաբերում և միայն պրոֆմիությունների մի մասին, ամենից առաջ Պրոֆմիությունների կարմիր ինտերնացիոնալի սեկցիաներին։ Մինչդեռ կարմիր պրոֆմիությունները լեռանդուն պայքար են մղում հանուն պրոլետարիատի տնտեսական շահերի և ընդդեմ տրեստային կապիտալի, կապելով այդ պայքարը բանվոր դասակարգի վերջնական նպատակների հետ, ոեփորմիստական դեկավարության տակ դժուդի պրոֆմիություններն ավելի ու ավելի դառնում են բուրժուական պետության մի մասը և իրենց առաջ խնդիր են դնում յետ պահել պրոլետարիատին դասակարգային կովկց։ Փոխանակ դասակարգային կովկի դասակարգային համագործակցություններն կապիտալի նետ—այդ և նրանց սկզբունքը։ Արդյունաբերական խաղաղությունը և պարտադիր իրավաբարության սիստեմն այն նոր կապանքներն են, վոր դնում ե բանվոր դասակարգի վրա ոեփորմիստական պրոֆմիութենական բյուրոկրատիան՝ ձեռնարկատերների հետ լիակատար համերաշխությամբ։

Ոեփորմիստական, պրոֆմիութենական բյուրուկրատիայի համաձայնողական, գոլություն ունեցող պետական կարգը պաշտպանող ուսակցիոն քաղաքականությունն իր առանձնահատուկ արտահայտությունն

և գտնում բանվոր յերիտասարդության պայքարի նը-  
կատմամբ նրա ունեցած բացասական վերաբերմուն-  
քի մեջ։ Վորովես համքարության մնացորդ ուժոր-  
միստական շեկավարության տակ գտնվող պրոֆմիու-  
թյունների մեծ մասը դիմադրություն և ցույց տալիս  
յերիտասարդ բանվորների և աշակերտների պրոֆմիու-  
թյան մեջ մտնելուն, կամ թե առնասարակ չի թույ-  
լատրում նրանց ընդունումը պրոֆմիությունների մեջ  
մինչև վորոշ հասակը։ Շատ դեպքերում պրոֆմիու-  
թյան յերիտասարդ անդամները չեն վայելում նույն  
իրավունքներն, ինչ վոր չափահասները։

Կոմյերիտմիությունն այն տեսակետին ե, վոր  
բանվոր յերիտասարդության պահանջների իրական  
պաշտպանությունը հնարավոր և միայն հեղափոխա-  
կան դեկավարության տակ գտնվող պրոֆմիություն-  
ների միջոցով։ Նա պրոֆմիություններում սիստեմա-  
տիկ կերպով պայքարում և ուժորմիստական պրոֆ-  
րյուրոկրատիալի դեմ և պրոֆմիությունների հեղա-  
փոխականացման համար։

Կոմյերիտմիությունը պրոֆմիութենական շարժ-  
ման մեջ պաշտպանում ե Պրոֆմիությունների կար-  
միր հնտերնացիոնալի սկզբունքները յեվ նպատակ-  
ներն ու ամեն կերպ աջակցում ե նրա պայքարին։

Կոմյերիտմիությունը պայքարում և բոլոր այն  
արգելքների վերացման համար, վորոնք խանգարում  
են յերիտասարդ բանվորների ընդունելությունը  
պրոֆմիություններում։ Նա պահանջում է ամբողջ  
բանվոր յերիտասարդության 100-տոկոսային կազ-  
մակերպումը պրոֆմիությունների մեջ հասակավոր-  
ներին հավասար իրավունքներով և պահանջում է

պրոֆմիությունների յերիտասարդ բանվորների համար սահմանել ավելի ցածր անդամավճարները կոմիտեի յերիտամիությունը պարագարում է այն արհամարհական վերաբերմունքի դիմ, վոր յերիտասարդության պահանջների նկատմամբ ցույց ե տալիս ռեֆորմիստական պրոֆմիութենական բարորակրատիան, վորը հավատարիմ իր ընդհանուր դիրքավորմանը և իր ցեխային ռեֆորմիստական աշխարհայացքին, չի պաշտպանում յերիտասարդության շահերը և մինչև անդամուղղակի մատնում և նրան կապիտալիստներին կոմիտեի յերիտամիությունը պայքարում է հանուն յերիտասարդության շահերի իրական պաշտպանության պրոֆմիությունների կողմից:

Կոմիտեի յերիտամիությունն անհրաժեշտ է համարում պրոֆմիությունների մեջ ստեղծել առանձին որպաններ բանվոր յերիտասարդությունն ավելի հեշտությամբ ընդունելու համար պրոֆմիությունների մեջ, ավելի լավ պաշտպանելու նրա պահանջներն ու շահերն ընդհանուր շարժման շրջանակներում։ Պրոֆմիութենական յերիտասարդական աշխատանքի այս առանձին որպանները, վորոնց ձեզ և կոչումը կարող են փոխվել կախված պայմաններից և յերկրից (յերիտասարդական կոմիսարներ, յերիտասարդական կոմիտեներ, յերիտասարդական սեկցիաներ յեվ այլն), պետք ե կառուցված լինեն յերիտասարդ և հասակավոր բանվորների իրավահավասարության սկզբունքով և վոչ թե պետք ե բաժանեն պրոֆմիությունների յերիտասարդ անդամներին հասակավորներից, այլ պետք ե համախմբեն և դաստիարակեն յերիտասարդությունը պրոֆմիութենական կազմակերպության ներսում։

Այս որդանների զեկավարող ինստանցիաները  
պետք ե կառուցվեն դեմոկրատարար, ընտրական ճա-  
նապարհով։ Նրանք պետք ե կանոնավոր կերպով  
պրոֆմիությունների յերիտասարդ անդամների ժողով-  
ներ և կոնֆերենցիաներ հրավիրեն և լիազորների  
սիստեմի միջոցով պետք ե կազմակերպվեն անմիջա-  
պես ձևանարկություններում։ Նրանք պետք ե ներկա-  
յացնեն յերիտասարդ բանվորության տնտեսական  
պահանջները և հրահրեն պրոֆմիություններին պայ-  
քարելու այդ պահանջների համար։ Այդպիսով նրանք  
հանդիսանում են բանվոր յերիտասարդության խակա-  
կան հեղափոխական մասսայական որգանները պրոֆ-  
միությունների մեջ։

Կոմիտիտմիությունը պայքարում է պրոֆմիու-  
թյուններում յերիտասարդության կազմակերպման ա-  
ռանձին ձևեր ստեղծելու գործում յեղած ռեֆորմիս-  
տական ազավազումների դեմ։ Այդ աղավաղումներն ի-  
րենց արահայտությունն հն գտնում ռեֆորմիստնե-  
րի կողմից ստեղծված և զեկավարվող յերիտասարդա-  
կան սեկցիաներում։ Այդ սեկցիաները բաժանում են  
բանվոր յերիտասարդությունը հասակավորներից։ Նը-  
նանք գտնվում են վերնախավի բլուրոկրատական վե-  
րահսկողության տակ և նպատակ ունեն մրցել քաղա-  
քական յերիտասարդական կազմակերպությունների  
հետ, վորպես ռեֆորմիստական դաստիարակչական  
կազմակերպություններ։ Կոմիտիտմիությունները պայ-  
քարում են այդ յերիտասարդական սեկցիաների նը-  
վաճման և նրանց՝ բանվոր յերիտասարդության մար-  
տական հեղափոխական որգաններ դարձնելու համար։  
Այնտեղ, վորտեղ աշակերտները և յերիտասարդ

բանվորները չեն ընդունվում պրոֆմիություններում, կամ չկան պրոֆմիություններ, կոմիերիտմիությունը կարող է ժամանակավորապես և իրբե անցողիկ ձեւ ստեղծել զանազան տեսակի հատուկ տնտեսական յերիտասարդական կազմակերպություններ: Այդպիսի կազմակերպությունների նպատակն եւ պատքարը լերիտասարդության տնտեսական պահանջների և նրան պրոֆմիությունների մեջ ընդունելու համար: Այդպիսի կազմակերպությունները պրոֆմիություններին զուգընթաց առանձին կազմակերպություններ չեն հանդիսանում: Կոմյերիտմիություններ ժխտում եւ հատուկ յերիտասարդական պրոֆմիությունների գաղափարը:

Կոմյերիտմիությունը ձգտում եւ նաև համուխըմբել և կազմակերպել գործազուրկ լերիտասարդությունը: Նա գրավում է նրան գործազուրկների ընդհանուր կազմակերպությունների մեջ և ստեղծում և գործազուրկ լերիտասարդների առանձին կոմիտեներ, ընդհանուր շարժման շրջանակներում:

Կոմյերիտմիության յուրաքանչյուր անդամ պետք եւ իր պրոֆմիության անդամը լինի: Կոմյերիտմիության անդամները պրոֆմիությունների ներսում միանում են ֆրակցիաների մեջ: Վերջիններն աշխատում են կուսակցության ֆրակցիաների հետ միասին և նրանց բաղաքական ղեկավարության տակ: Դրա հետ միասին կոմիերիտմիությունը ձգտում է ավելի սերտ համագործակցություն ստեղծել պրոֆմիությունների հետ (կոմիերիտմիության ներկայացուցիչներ պրոֆորդաններում, միատեղ յելութներ), վորը, սակայն, հնարավոր է միայն հեղափոխական ղեկավարության տակ գտնվող պրոֆմիությունների նկատմամբ:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՍՌԱՋՆԱՀԱՏՈՒԿ ԽՆԴԻՐՆԵ-  
ՐԸ ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆՈՒՄ

Կապիտալիզմն առաջ բերեց գյուղի ազգարնակու-  
թյան, հսկայական պրոլետարիզացիան և չքավոր գյու-  
ղացիներին գցեց ծալքահեղ կորիքի մեջ։ Կապիտալիս-  
տական հասարակության շարունակվող կրիզիսը հա-  
մաշխարհակին պատերազմից հետո բոլոր կապիտալիս-  
տական քիրկրներում առաջ բերեց խորը և շարունակ-  
ընդարձակվող ու ավելի խորացող ազգարային ճգնա-  
ժամ։ Կապիտալիստների կողմից կատարվող ջանքերը՝  
տնտեսության հավասարակշուրությունը բանվորների  
և գյուղացիների հաշվին, նրանց հարկերով և մաքսե-  
րով ծանրաբեռնելու միջոցով վեր սկանզնելու ուղղու-  
թյամբ տանում են դեպի կապիտալիստների և խոշոր  
հողացին սեփականատերերի հարստացումը գյուղի և  
պրոլետարական աշխատավորական ազգարնակության  
հաշվին և սրում են գասակարգային հակասություն-  
ները գյուղում։

Ադրարային ճշնաժոմն ուժեղացնում և արագաց-  
նում և գյուղացիության շերտավորման պրոցեսը  
և դասակարգային պալքարը գյուղում և տանում և  
դեպի գյուղացիության մեծ մասի տնտեսության աղ-  
քատացումը և ստրկացումը։ Դյուզում կապիտալիզմից  
տառապող ազգարնակության խավերը հանդիսա-  
նում են։

1. գյուղատնտեսական բանվորները (բատրուկ-  
ներ)։

2. թզուկ տնտեսություն ունեցող գյուղացիները  
(կիսապրոլետարներ)։

Յ. մանը գյուղացիությունը.

Գ. միջակ գյուղացիությունը.

Հարուստ գյուղացիները (կուլակները և խոշոր հողատերերը կապիտալիստական յերկրներում տնտեսական տեսակետից գյուղում հանդիսանում են կապիտալիստական ձեռնարկատերեր)։

Բատրակների կենսական մակարդակը շաբունակ իջնում եւ Բանվորական որվա տեսողությունը չափազանց մեծ է, ունալ տշխառավարձը պակասում է, կյանքի բոլոր ալլ պարմանները նույնպես վատանում են։ Մանը անտեսությունները կործանվում են։ Մանը գյուղացիության տնտեսական կախումը խոշոր հողատերերից և կապիտալիստներից գնալով գառնում ե ավելի անտանելի։ Մանը պարտքեր են ընկած մանը գյուղացիների վրա Նրանց դրությունը գնալով ավելի ու ավելի յե վատանում։

Այս աննպտստ պայմանները — ապրանքների թանգությունը, հարկերը, պատերազմական բեռը և ալլն — ազդում են նաև միջակ գյուղացիության վրա։ Դրան ավելանում են նաև միլիոնարիզմի ավելի խոշոր ծանրությունները, վորը գյուղացիությունը դրկում ե նրա լավագույն ուժերից և ծանը բեռ և հանդիսանում նրա վրա իր սպառապինման ծախսերով։

Անյալի հեղափոխական փորձը յեզ մանավանդ ուստական հեղափոխությունը ցույց են տվել, վոր առանց չքավոր գյուղացիության նվաճման անհնարին և պրոլետարիատի համառատուն հաղթանակը։ Գյուղացիությունն իր կողմից չի կարող ինքնուրույն կերպով ազատագրվել կապիտալիզմի և խոշոր հողատերերի լծից, վորովհետեւ նա իրենից մի միասնական

դասակարգ չի ներկայացնում, ինքը բաղկացած ե սե փականատերերից, ապրում ե գլուղերում ցրված և գրա համար չի կարող ստեղծել ամուր հեղափոխական կազմակերպություններ։ Դյուղացիության ազատագրությունը կարող ե տեղի ունենալ միայն պրոլետարիստի ղեկավարությամբ կապիտալիզմի դեմ ու պրոլետարիատի ղիկուտատուրայի համար մղվող պայքարում։ Պրոլետարիատի վրա պատմական խնդիր ե գրված՝ իրագործել այդ գաշինքն աշխատավոր գլուղացիության հետ կապիտալիստական յերկրներում պրոլետարիատը պետք ե ձգտի իր կողմը գրավել չքավոր գլուղացիներին (թզուկ տնտեսություն ունեցողներին և մանր գլուղացիությունը), գարձնելով նրանց իր գաշնակից պրոլետարիատի ղիկուտատուրայի համար մղվող պայքարում և չեղոքացնի միջակ գլուղացիությունը։ Գաղութներում և կիսագաղութներում, ինչպես նաև կիսաֆեոդական ուժեղ մնացորդներ պարունակող այլ յերկրներում, վորտեղ դեռևս դրված ե բուրժուական դեմոկրատական հեղափոխության խնդիրն, անհրաժեշտ ե այդ գաշինքի ընդարձակումը միջակ գյուղացիությունը ներդրավելու ճանապարհով։ Այս խնդիրների վորով կոմյերիտմիությունը պետք ե նվաճի գլուղի աշխատավոր յերիտասարդությունը։

Կոմյերիտմիությունը հարմարեցնում ե գլուղի աշխատավոր յերիտասարդության շրջանում կատարելիք իր աշխատանքը գյուղացի յերիտասարդության տարբեր խավերի պահանջներին և պայմաններին։ Նա իր ուժերը գործ ե դնում առաջին հերթին նվաճելու յեվ կազմակերպելու բատրակ յերիտասարդությունը։ Կոմ-

յերիտմիությունը ձգտում է իր շարքերում կազմակերպել այդ պրոլետարական խավի ամենալայն մասսաները, որա հետ միասին նա աշխատում է չքավոր գլուղացի յերիտասարդության շրջանում: Նա ձգտում է դաշինք ստեղծել նրա և բանվոր յերիտասարդության միջև, նա իր շարքերում կազմակերպում է նրա ակտիվ և հեղափոխական մասը: Կոմյերիտմիությունը նաև տուանձին աշխատանք է կատարում միջակ գյուղացի յերիտասարդության մեջ համապատասխան յերկրներում, վորպեսզի կազմիտալիտական յերկրներում պարգարի բուրժուազիալի՝ նրա վրա ունեցած աղղեցության գեմ և չեզոքացնի այդ ազդեցությունը, մասնակիորեն ներգրավելով նրան պայքարի (որինակ՝ միլիտարիզմի գեմ): Սակայն կազմիտալիզմի պայմաններում կոմյերիտմիությունն իր շարքերում ընդունում է միայն միջակ գյուղացի յերիտասարդության լավագույն տարրերից առանձին անհատների:

Կոմյերիտմիությունը յեռանդուն պայքար է մղում առաջին հերթին բատրակ յերիտասարդության, ինչպես նայել գյուղի աշխատավոր յերիտասարդության այլ խավերի քաղաքական, տնտեսական յեվ կուլտուրական շահերի համար: Նա առանձին ուշադրություն է դարձնում գյուղական յերիտասարդության շրջանում հակամի, իտարիստական ագիտացիա մղելու գործին և պաշտպանում է նաև գյուղացի զինվորների մի շարք առանձին պահանջներ (արձակուրդ հնձի ժամանակ և այլն): Ընդհանուր կոմմունիստական ազրարային ծրագրի համար մղվող պայքարի ստիմաններում նա պաշտպանում է գյուղի աշխատավոր յերիտասարդության մասնակի պահանջները,

հատկապես յերիտասարդ բատրակների պահանջները՝ կոմիերիտմիությունը պահանջում և յերիտասարդ բատրակների հավասարեցումը զործարանային յերիտասարդ բանվորների հետ աշխատանքի պաշտպանության տեսակութից և իր տնտեսական ընդհանուր և մասնակի ոլո՛ հանջները նաև պաշտպանում և նաև յերիտասարդ բատրակների նկատմամբ —պրոֆեսսիոնալ ուսուցում, հավասար աշխատավարձ հավասար աշխատանքի համար, 6-ժամյա բանվորական որ, 8-շաբաթյա արձակուրդ և ալին Այս պահանջները լրացվում են այն առանձնահատուկ պահանջներով, վորոնք բղխում են գլուղատնտեսական աշխատանքի պայմաններից:

Կոմյերիտմիությունը վճռականորեն պայքարում և գյուղի զանազան բուրժուական յեվ կուլակային յերիտասարդական կազմակերպությունների դեմ, վորոնց թվում խոշոր գեր են խաղում կրոնական կազմակերպությունները (որինակ՝ կաթոլիկները), Նա առանձնապես լեռանդուն կերպով պայքարում և մաշխատական կազմակերպությունների դեմ, ինչպիսին և «Հայրենիքի պաշտպանությունը» և այլն, վորոնք գյուղի աշխատավոր յերիտասարդությունը կազմակերպում են և հրահրում են նրան նպառազինված պայքարի դուրս գալ բանվոր դասակարգի դեմ: Բուրժուական և կուլակային կազմակերպությունների դեմ պայքարելու գործում և իր ազդեցությունն ավելացնելու համար կոմյերիտմիության ունեցած միջոցներից մեկը հանդիսանում և գյուղի աշխատավոր յերիտասարդության կոնֆերենցիաների յեվ կոմիտեների կազմակերպումը յեվ գյուղացիական հեղափոխական կազմակերպությունների յերիտասարդական

բաժինների կազմակերպումը։ Միքանի յերկրներում նպատակահարժար և նայեվ զյուղացի առատավոր յերիտասարդության առանձին միությունների կաղ-սակերպումը։

## ԿՈՐՄԱՆԻ ՍՏԱԿԱՆՆ ՅԵՐԻՑԱՌԴԱԿԱՆՆ ՄԻՋԱԹՅԱՆ ԼՈՒՍ- ՎԱՐԱԿԵՆ ԱՅԽԱՏԱՆՔ

«Առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել հեղափոխական շարժում»։ Կոմյերիտմիությունն իր աշխատանքի հիմքն և ընդունում է Ենինի այս խոսքերը։ Հիմնվելով պրակտիկայի և թեորիայի կեն-դանի կապի վրա և աշխատավոր յերիտասարդու-թյունը կոմմունիզմի վորով դաստիարակելու իր ընդ-հանուր խնդրի շրջանակներում կոմյերիտմիությունն առանձին կրթական և լուսավորական աշխատանք և կառարում։ Այդ գործունեալությունն առաջին հերթին պետք և ծանոթացնի աշակերտությունը կոմմունիզմի թեորիային։

Լուսավորական աշխատանքը, յեթե անդամ նա-դիտվի վորպես աշխատանքի առանձին բնագավառ, չի հանդիսանում միության մնացած մարտական գոր-ծունելությունից կտրված մի բան։ Ընդհակառակը, ինքը պայքարը հանդիսանում և կրթության և դաս-տիարակության կարևորագույն միջոցներից մեկը, իսկ կոմյերիտմիության կրթական լուսավորական աշխատանքը հանդիսանում և պայքարի կարևորա-գույն զենքերից մեկը։ Միայն տեսական աշխատա-տանքն և նիշտ ուղղություն տալիս պայքարին։

Այս առանձին կրթական լուսավորական աշխա-

տանքը պետք եւ աշխատավոր յերիտասարդութիւնն համար մարտական պրակտիկայի փորձ հավաքի և մշակված ու լրացված ձեռքի հաղորդի այն յերիտասարդութիւնը: Նա պետք եւ պրոլետարական յերիտասարդութիւն շարքերից պատրաստի գիտակից և կայուն դասւելաբարին մարտիկներ կապիտալի գիմ և պրոլետարական հեղափոխութիւնն համար, նոր հասարակութիւն կառուցողներ:

Այդպիսով այս աշխատանքը միաժամանակ հանդիսանում եւ և՝ ագիտացիա, և՝ պրոպագանդ—ագիտացիա՝ վորոշողունքները մասսաների մեջ տարածելու իմաստով և պրոպագանդ՝ յերիտասարդ բանվորների խորացված լուսավորության իմաստով, հանուն կոմմունիզմի նպատակների և սկզբունքների:

Կոմմունիստական յերիտասարդական միությունն առաջին հերթին զբաղվում եւ իր անդամների յեվ յերիտասարդ պրոլետարների լայն խավերի ընդհանուր քաղաքական դաստիարակությամբ: Նա նրանց շրջանում տարածում եւ գիտելիքներ տնտեսութիւն և հստարակութիւնն զարգացման որենքների, պատմութեան ըմբռնման, դասակարգալին պայքարի և բանվորական շարժման ձևերի ու մեթոդների, պրոլետատարական հեղափոխութիւնն խնդիրների և նպատակների, քաղաքական և տնտեսական դրության վերաբերյալ: Նա նրանց շրջանում պրոպագանդ և մղում հոգութ սոցիալիզմի և կոմմունիզմի, բացատրում է կոմմունիստական կուսակցութիւնն եյությունը, կառուցվածքը, պատմությունը, ծրագիրը, ստրատեգիան և տակտիկան: Մարքսիզմը—պրոլետարիատի տեսությունը կարևորագույն գենք եւ հանդիսանում կապի-

տալի գեմ մղվող պայքարում և ամենաարժեքավոր  
զործիք և հանդիսանում նոր հասարակության կա-  
ռուցման ժամանակը Դրա համար կոմմունիստական  
յերիտասարդական միությունը ձգտում է իր ան-  
դամների մեջ տարածել մարքսիստական աշխարհայացք  
և առաջին հերթին վարժեցնել նրանց մաածողության  
մարքսիստական մեթոդներին: Կոմյերիտմիությունն  
առանձնապես կենտրոնացնում է իր դաստիարակչա-  
կան աշխատանքը՝ լենինիզմի պրոպագանդի յեվ  
ուսումնասիրության վրա, վորը հանդիսանում է իս-  
լմերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների  
շրջանի մարքսիզմը: Կոմմունիստական յերիտասար-  
դական միությունը պետք է յուրացնի լենինիզմի  
հիմնական խնդիրները, կազմակերպչական սկզբունք-  
ները, տակտիկան յեվ թեորիան, վորպեսզի հեղափո-  
խական թեորիայով լիովին զինված իրագործի դա-  
սակարգային պայքարի պահանջները:

Կոմմունիստական յերիտասարդական միու-  
թյունը նաև իր առաջ խնդիր և դնում բարձրացնել  
աշխատավոր յերիտասարդության ընդհանուր կուլ-  
տուրական մակարդակը, յելնելով պրոլետարիատի  
պայքարի շահերից: Աշխատավոր յերիտասարդու-  
թյունը պետք է բուրժուազիալից կորզի այն զիտե-  
լիքները, վորոնց կարիքը նա զգում է կապիտալի  
գեմ իր պայքարը կազմակերպելու և վարելու համար: Կոմյերիտմիությունն այս հարցերով զբաղվում է այն-  
քան, վորքան վոր նրանք կապված են դաստիարգա-  
յին պայքարի հետ, և ձգտում է ոզտագործել նրանց  
յերիտասարդության դաստիարգային մարտական դաս-  
տիարակության համար:

Բուրժուական հասարակության դեմ մղվող պալքարն իր մեջ պարունակում և նաև պայքար այն արատների դեմ, վոր ծնում և այդ հասարակությունը (ալկոհոլիզմ, պոռնկություն յեզ այլն), և վորոնք կարող են գոչնչացվել միայն տիրող կարգի վոչնչացմամբ կոմյերիտմիությունը վճռականորեն պալքարում և բուրժուական կեղծավոր «բարոյականության» դեմ և մերկացնում և այն վորպես շահագործման վրա հիմնված հասարակակարգի պահպանման մի միջոց։ Մասնավորապես կոմյերիտմիությունը պայքարում և ամբողջ վճռականությամբ ընդդեմ բուրժուական հայացքի կնոջ նկատմամբ, վորպես ընտանեկան ոջախի մի հավելվածի, մի հայացք, վոր խորն արմատներով կասկված և մասնավոր սեփականության գոյության հետ։ Մերկացնելով բուրժուական «բարոյականության» ամբողջ կեղծությունը, կոմյերիտմիությունը հակադրում և նրան բոլոր շահագործվողների միատեղ պալքարը կապիտալիզմի խորտակման և կոմմունիստական հասարակության հաստատման համար, վորը միայն ընդունակ և աղատագրել կնոջը և մարդկանց մեջ ստեղծել նոր փոխհարարերություններ, վորոնց ուսար են կապիտալիստական եպոխային հատուկ սեփականատիրական հայացքները կնոջ նկատմամբ։

Կոմյերիտմիությունն առանձին ուշադրություն և դարձնում յեկեղեցու յեզ կրոնի դեմ անխոնջ լուսավորական աշխատանքի միջոցով՝ մղվող պայքարի վրա։ Կրոնը հաշիշ և ժողովրդի համար կրոնն իրենից ներկայացնում է տիրող կտպիտալիստական հասարակակարգի ուժուն յերիտասարդության վրա ազդելու

կարեորագուլն միջոցներից մեկը։ Կրոնի վսասակարությունն առանձնապես մեծ և գլուղի և գաղութների աշխատավոր յերիտասարդության շրջանում։ Կոմյերիտմիությունն աշխատավոր յերիտասարդության շրջաններում պրոպագանդ և մղում հոգուտ դիալեկտիկական մատերիալիզմի աշխարհայացքի։

Վորապես իր քաղաքական և կուլտուրական կըրթական լուսավորական աշխատանքի լրացում, կոմյերիտմիությունը ձգտում է նաև ինչքան հնարավոր և բավարարել աշխատավոր յերիտասարդության կարիքները զվարճության յեվ հանգստի բնագավառում։ Նա, սակայն, և վոչ մի դեպքում չի ընդորինակում զվարճության և հանգստի բուրժուական ձևերն, այլ փնտռում և իսկական պրոլետարական զվարճությունների և հասարակայնության նոր մեթոդներ, վորոնք վերջին հաշվով նույնպես նպաստում են դասակարգային գիտակցության զարգացմանը և դաստիարական կոմմունիզմի վորով։ Պրոլետարական տոնակատարությունները, քաղաքական սատիրիկական ներկայացումները, դրամատիկական խմբակները, յերգեցիկ խմբերը, յերիտասարդական տները, ճամբարները և այլն ողտագործում են այս ուղղությամբ։

Կոմմունիստական յերիտասարդական միությունն իր լուսավորական և կրթական աշխատանքի մեթոդների մեջ յելնում և յերիտասարդության կոնկրետ կարիքների պահանջից և հաշվի լի առնում նրա հոգերանական առանձնահատկությունները։ Բացի դրանից կոմյերիտմիությունը պարզ գիտակցելով իր ելությունը, վորապես կոմմունիստական դաստիարակու-

թյան կազմակերպություն առհասարակ, ձգտում և  
իր ամբողջ գործունեյության մեջ գործադրել յերիտա-  
սարդության համար հասկանալի և նրան հարմարեց-  
լած մեթոդներ, իր աշխատանքին տալ կենդանի  
բնույթ և ստեղծել ներմիութենական գրավիչ կյանք:

Այս իմաստով միանգամայն նովատակահարմար և  
նաև վորոշ յերիտասարդության համար առանձնապես  
գրավիչ աշխատանքի ձևերի կոմմունիտական ոգոտա-  
գործումը, ինչպես արտաքին կիսառազմական դիս-  
ցիպինան ցուցերի ժամանակ, նվազախմբերը, միաս-  
նական համազգեստ յեզ այլն, վորոնք չափազանց  
արժեքավոր են կոմյերիտմիության պրոպագանդիտա-  
կան և յերիտասարդությունը ներգրավելու ուժի տե-  
սակետից:

Մասսաների մեջ աղիտացիա և պրոպագանդ  
մղելու կարեւրագույն միջոցներից մեկը հանդիսանում  
և հատուկ կոմմունիտական յերիտասարդական մա-  
մուլը յեզ գրականությունը: Կոմյերիտմիությունն իր  
ընդհանուր թերթերին և ժուրնալներին զուգընթաց  
հրատարակում և նաև առանձին գործարանային  
լրագրեր, իր արտադրական բջիջների միջոցով: Կոմ-  
մունիտական բջիջները բանակում տարածում են  
զորանոցային թերթերը և այլն: Միության կազմա-  
կերպության ներսում պատի լրագրերը հանդիսանում  
են դաստիարակության և ինքնագործունելության  
զարգացման կարևոր միջոց: Կոմմունիտական յերի-  
տասարդական մամուլի զանազան ձևերի լայնորեն  
ճյուղավորված ցանցը չափազանց կարևոր գենք և  
հանդիս անում յերիտասարդ բանվորների, զինվորների  
և աշխատավոր գլուղացի յերիտասարդության մասսա-

ների հեղափոխական նվաճման համար մղվող պայ-

քարում:

Կոմիերիտմիության կրթական և լուսավորական աշխատ անքը կատարվում է սիստեմատիկ և կազմակերպված կերպով: Կոմիերիտմիությունն առաջին հերթին կառարում է մասսայական լուսավորական աշխատանք, վորը հիմնականում կայանում է աշխատավոր յերիտասարդության լայն մասսաների մեջ կոմմունիստական սկզբունքները զանազան ձևերով պրոպագանդ անելում: Ապա նաև կոմիերիտմիությունն անց է կացնում իր անդամների մեջ քաղաքական գիտելիքների հիմնական հարցերի սիստեմատիկ ուսուցում: Մրանից բացի կոմիերիտմիությունն անց է կացնում միության կադրերի բարձր պատրաստումը առանձին ջեռնարկումների, դասընթացների և դպրոցների միացով:

### ԿՈՄԻԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԱԼԵՑՄԲԻԾԻ ԴԻԿՏԱՆԴԻՐԱԾԻ ՊԵՇՄԱՆՆԵՐԻՒՄ

Խօսերգային Միությունը լուսավոր փառու և

Ցերկրագնդի մեկ վեցերորդը գրավող հսկալական տարածության վրա աշխատավոր յերիտասարդությունն արդեն ազատագրվել է կապիտալիզմի լծից յեվ ազատ ու պաշտպանված ապրում է իր սեփական պետության—Խորհրդային Միության մեջ: Խորհրդային Միությունը—աշխարհի առաջինպես ըստական պետությունը կապիտալիզմի ժամանակ շահագործման առարկա հանդիսացող յերիտասարդական աշխատանքը դարձնում է սոցիալիստական դաստիարակության հիմք: Պրոլետարական պետությունն

արդին աշխատում ե յերիտասարդության աշխատանքի սոցիալիստական վերակազմակերպման ուղղությամբ։ Յերիտասարդության արտադրական աշխատանքը չի վերացվում, այլ վերակազմակերպվում է, շահակապվում և պլոտիկոնալ ուսուցման, քաղաքական և ընդհանուր գաստիարակության, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի հետ և կարդավորվում է, յելնելով գաստիարակության պահանջներից։ Յերիտասարդական աշխատանքի այս սոցիալիստական վերակազմակերպման իրականացման վայրը հանդի անում ե գործարանային գոլորոշ սոցիալիստական ձեռնարկության մեջ (այսինքն աշակերտական արհեստանոցներ, կամ ընդհանուր արտադրության բաժիններ, վորոնք կապված են տեսական ուսուցման և ուսումնական աշխատանքի հետ)։

Պրոլետարական պետությունը յերիտասարդության աշխատանքի պաշտպանության յեվ նրա տընտեսական դրության բարելավման միջոցների մի ամրող սիստեմ է կիրառում, վարպետ յերիտասարդության աշխատանքի սոցիալիստական վերակազմակերպման անհրաժեշտ նախապայման։—

1. Յերեխաների աշխատանքի արգելումը մինչև 14 տարեկան հասակը.

2. Բանվորական որվա կրճատումը 6 ժամվա՞մինչև 18 տարեկան յերիտասարդության համար և 4 ժամվա՞մինչև 16 տարեկան յերիտասարդության համար։

3. Գործարքային և գիշերալին աշխատանքի արգելումը և աշխատանքի արգելումն, ինչպես նաև աշխատանքի արգելումը առողջության համար նշանակար

ձեռնարկություններում, նախ մինչև 18 տարեկան, ապա նաև 20 տարեկան հասակը:

4. Աշխատավարձի այնպիսի քաղաքականություն, զորն ապահովում և կրծատված բանվորական որվա իրական իրագործումը (կրծատ բանվորական որը վճարվում է լրիվ բանվորական որվա հավասար) և բանվոր յերիտասարդության տնտեսական դրության բարձրացումը նույն չափով, ինչ զոր հասակավոր բանվորներինը: Հավասար աշխատավարձ հավասար աշխատանքի համար:

5. Զորս շաբաթվա լիովին վճարվող արձակուրդ մինչև 18 տարեկան տնչափահասների համար:

6. Բանվոր յերիտասարդության առողջապահության պահպանումը սիստեմատիկ բժշկական քննությունների, ինչպես նաև յերիտասարդ բանվորներին հատուկ կամ ընդհանուր հանգստան տները, սանատորիաները և դիսպանսերներն ու դարձելու միջոցով:

7. Արտադրության մեջ անչափահասների համար բանվորական տեղերի կայուն տոկոսի ապահովումը:

8. Լոյն սոցիալիստան ապահովագրություն պետության և ձեռնարկության հաշվին հիվանդության, աշխատանքային աշխատունակությունը կորցնելու և գործազրկության դեպքում:

Սոցիալիստական պետությունը ձգտում է սոցիալիստական շինարարության պրոցեսսում գնալով ավելի մեծ չափով իր վրա վերցնել յերիտասարդության ապահովումը:

Պրոլետարական պետությունն իրագործում է

նայեվ յերիտասարդության իրավական յեվ քաղաքական պահանջները, տալով նրան բոլոր քաղաքացիական իրավունքները, բոլոր պետական և տնտեսական հիմնարկություններում ընտրական ակտիվ և պասսիվ իրավունք, ակտիվ և պասսիվ ընտրական իրավունք գործարկումներում աշխատանքի անցնելու մոմենտից և բոլոր հասարակական ու պետական կազմակերպություններում ազատ մուտք և աշխատանքի հնարավորություն:

Խորհրդային Միությունն աշխատում ե յերիտասարդության դաստիարակության ամբողջ սիստեմի վերակազմակերպման ուղղությամբ: «Միայն արմատ սպաս վերանուոգելով յերիտասարդության ուսման, կ սղմակերպման և դաստիարակման գործը, մենք կարող ենք ալնպիս առնել, վոր յերիտասարդ սերնդի ջանքերի հետևանքը լինի այնպիսի հասարակությունը, վորը նման չե հնին, այսինքն՝ կումունիստական հասարակությունը» (Լինին): Այս ուղղությամբ խոշոր քայլ եր գործարանային դպրոցների կազմակերպումը սոցիալիստական ձեռնարկություններում բանվոր յերիտասարդության համար: Խորհրդային Միությունն այս դպրոցները հիմնելով նպատակ ունի բազմակողմանիորին դաստիարակել յերիտասարդությունը, վորի համար արտադրական պլրոցեսոն, ինչպիս տեխնիկական, նույնպես և հասարակական տեսակետից, ներկայումս իմաստ և նպատակ ե ստանում, տանում ե դեպի բանվորի սոցիալիստական արտադրության գիտակից դեկավար դսոնալը: Գործարանային դպրոցները նպաստում են նաև յերիտասարդության դարգացմանը և նրա բոլոր տեսական հակումների ամրապնդմանը և ակմրալին

աշխատանքի ու ֆիզկուլտուրալի միջոցով ամրապնդում են յերիտասարդության մարմինը և հոգին:

Պրոլետարական պետությունն այնպես և կազմակերպում ժողովրդական կրթության ամբողջ սիստեմը, վոր այն ներկայումս դառնում և պետության մենաշնորհ և ծառայում ե աշխատավոր մասսաների շրջանում կոմմունիզմի պրոպագանդի հիմնական նպատակին: Այդ հնարավորություն և տալիս աշխատավոր յերիտասարդությանը տիրապետել սոցիալիզմի շինարարության համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներին: Խորհրդավիճ Միությունն ակտիվ կերպով աշխատում և ժողովրդական կրթության նոր սիստեմի կառուցման համար ամենից առաջ միասնական աշխատանքային դպրոցի զարգաց նաև ճանապարհով, ընդունելով այդ դպրոցը վորպես հիմք, բաց անելով աշխատավորության համար միջնակտրդ և բարձրագույն դպրոցներ, (հատուկ բանվորական ֆակուլտետների կազմակերպումը), ինչպես նաև վերակազմակերպելով այդ դպրոցներն ըստ պրոլետարական գիտատուրալի և սոցիալիստական դաստիարակության պահանջների:

Լիովին փոխվում ե նայել կոմմունիստական յերիտասարդական միության դիրքը յեվ շատ դեպքերում նայել աշխատանքը: Կապիտալիզմի ժամանակ հալածվող ու հետափնդվող կոմմունիստական յերիտասարդական կազմակերպությունները վայելում են խորհրդավիճ իշխանության լիտկատար ոժանդակությունը և ակտիվ մասնակցություն են ցույց տալիս ողբուժարական պետության ամբողջ աշխատանքին և պալքարին, առանձնապես նրա գործունեյությանը յերիտասարդության աշխատանքի և դաստիարակու-

թյան քնաղավառում։ Պրոլետարական կազմակերպությունները յեվ պրոլետարական պետությունը կոմիտմիությունը համարում են աշխատավոր յերիտասարդության շահերի ներկայացուցիչը։

Ազգպիսով պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ կոմիերիտ է իրությունը ամենաընդարձակ հնարավորություններ և ստանում իր լիակատար զարգացման համար, վորպես աշխատավոր յերիտասարդության կոմմունիստական դաստիարակության մասսայական կազմակերպություն, վորն իր գործունելության մեջ հաշվի յե առնում յերիտասարդության կլանքի բոլոր կողմերը։

Խորհրդացին Միության կենինյան Կոմմունիստական Յերիտասարդական Միությունը, վոր աշխատում ե քայլշեփիկյան կուսակցության անմիջական զեկավարության տակ, իր գործունեյությամբ կարողացել ե դառնալ մասսայական կազմակերպություն ամրող բանվոր յեվ առհասարակ աշխատավոր յերիտասարդության ներկայացուցիչ ու զեկավար։ Աճելով ու դառնալով հսկայական միլիոնավոր բանակ, վորն անցել է քաղաքացիական պատերազմների հրով, նա ներկայումս մասնակցում է սոցիալիզմի շինարարությանը, այդ շինարարության մեջ գրավելով ամրող աշխատավոր յերիտասարդությունը։

Հաղթական պրոլետարիատն ազատագրում ե նայեվ ճնշված ժողովուրդների յերիտասարդությունը, տալիս ե նրան բոլոր քաղաքական իրավունքները և մի շարք տնտեսական իրավական և կուլտուրական ձեռնարկումների միջոցով ապահովում ե իրական հավասարությունը նրա համար։ Խորհրդացին Սոցիալիս-

տական Հանրապետությունների Միության մեջ բոլոր  
ազգերի աշխատավոր յերիտասարդությունն առաջին  
անգամ ստրկացած մասսալից, վորին պահում ելին  
կրոնական խավարի ու տղիտության մեջ, դառնում  
և աղատ և լիակատար իրավունքներ վայելող քաղա-  
քացիներ, նոր հասարակության շինարարության  
գիտակից մարտիկներ և մասնակիցներ:

Խորհրդային Միությունը, վորն ամեն կերպ  
ոգնում ե չքավոր գյուղացիությանը, զգալի կերպով  
թեթեվացրել ե նայեվ գյուղացի յերիտասարդության  
դրությունը, նա սկսում ե պետական միջոցներով  
անցկացնել գյուղացի յերիտասարդության գյուղա-  
տնտեսական պրոֆեսոնալ դաստիարակություն և  
ձգտում ե դաստիարակել նրանց գյուղի սոցիալիստա-  
կան կոռպերացման վոգով:

Պետության դասակարգային բնույթի փոխվելու  
հետևանքով փոխվում ե նաև կոմյերիտմիության  
գործունեյության բովանդակությունը: Կապիտալի  
տիրապետության շրջանում լինելով բուրժուազիայի  
պետական իշխանությունը տապալելու զինք՝ պրոլե-  
տարիատի դիկտատուրալի շրջանում նա դառնում է  
պրոլետարական պետության հենարան: Կոմյերիտմիու-  
թյան հիմնական խնդիրը դառնում ե աշխատավոր  
յերիտասարդության լայն մասսաների կոմմունիստա-  
կան դաստիարակությունը սոցիալիստական շինարա-  
րությանն ունեցած նրա ակտիվ մասնակցության  
պրոցեսում: Ցեղե պրոլետարիատի դիկտատուրայի  
համար մղվող պալքարի շրջանում յերիտասարդության  
դասակարգային պրոլետարական դաստիարակության  
հիմքը հանդիսանում է նրա մասնակցությունը դասա-

կարդալին պայքարին կառիտալիստական հասարակական կարգը խորուակելու համար, ողբոլետարիատի դիկտատուրայի պայմաններում այդ հիմքը հանդիսանուում է դրական մասնակցությունը նոր կյանքի շինարարությանը, պրոլետարական դիկտատուրայի ամրապնդմանը և հնի մնացորդների գեմ մղվող պայքարին: Այս բոլորը սերառեն կապված ե ամրող աշխարհի բանվոր դաստիարագի պայքարին մասնակցելու հետ, մարքսիզմի և լենինիզմի տեսության ուսուցման հետ: Այս բոլորի նպատակն է կարող և գրասեկեց սոցիալիստական աշխատողներ, դասակարգային մարտիկներ, համաշխարհությին պրոլետարիատի հաղթանակի համար պայքարողներ դաստիարակելու: Դրա համար կոմյերիտամիությունն իր սոմբող գործունյեությամբ ձգտում և սոցիալիստական շինարարության մեջ ակտիվ մասնակցությունն զրավել ամրող աշխատավոր յերիտասարդությունը, հիշելով Լենինի ավանդը, վոր նա ուղղել և յերիտասարդությանը Ռ. Կ. Յե. Մ. Յ. դ համագումարում, «Դուք պետք ե լինեք կոմմունիստական հասասարակության առաջին կառուցողները այն միջոնավոր կառուցողների մեջ, վորպիսին պետք ե լինի յուրաքանչյուր յերիտասարդ, յուրաքանչյուր աղջիկ: Առանց բանվոր յեվ գյուղացի յերիտասարդության ամբողջ մասսան կոմմունիզմի այս շինարարությանը ներդրավելու դուք կոմմունիստական հասարակությունն չեք կառուցի»:

Դրա համար ել կոմյերիտամիությունն ակտիվ կերպով տշխատում ե ամբող յերիտասարդությունը ներդրավելու համար սոցիալիստական պետական ապարատի, սոցիալիստական արդյունաբերության, ինչ-

պիս նաև տմբողջ քաղաքական, ռազմական, տնտեսական և կուլտուրական գործունեյության մեջ, վորձավալվում ե խորհրդային իշխանության կողմից քաղաքում և գյուղում:

Դեմ գուրս գալով բուրժուական բանակին և միլիտարիզմին և պայքարելով նրանց դեմ կապիտալիստների դասակարգի տիրապետության ժամանակ, կոմյերիտմիությունն աջակցում ե և իր բոլոր ուժերը նվիրում ե պրոլետարական պետության պաշտպանությանը, ամրապնդելով Կարմիր բանակը և նավատորմը, վորոնք պաշտպանում են պրոլետարիատի դիկտատուրան կապիտալիստների կողմից կատարվող ինտերվենցիայի ու վերականգնման փորձերից: Կոմյերիտմիությունը Կարմիր բանակին յեվ նավատորմին տալիս ե իր լավագույն ուժերը վորպես կարմիր-բանակայիններ, հրամանատարներ յեվ քաղաշխատավորներ: Նա նպաստում ե աշխատավոր յերիտասարդության պրոլետարական զինվորական պատրաստությանը: Պրոլետարական պետությունն ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքը վորս ֆնտուող իմպերիալիստական գիշատիչներից պաշտպանելու և համաշխարհային հեղափոխության համար մղած նրա պայքարի մեջ նա հանդիսանում ե առաջին յեվ ամենաարի մարտիկը:

Կոմյերիտմիությունն առանձնապես լայն գործունեյություն ե ծավալում յերիտասարդության աշխատանքի և կենցաղի սոցիալիստական վերափոխման ընագավառում: Այնքան, վորքան բանվոր յերիտասարդությունը հանդիսանում ե բանվոր դասակարգի մի մասը, իսկ բանվոր յերիտասարդության աշխա-

տանքի սոցիալիստական վերակազմակերպությունն ամբողջ բանվոր դասակարգի, պրոլետարական պետության և պրոֆմիությունների վործն ե, այնքան ել կոմյերիտմիությունն իր աշխատանքով չի փոխարինում պետական որգանների յեվ պրոֆմիությունների գործունեյությունը, այլ իր բոլոր տնտեսական յեվ կուտուրական պահանջներն իրականացնում ե սերտ համագործակցություն հաստատելով նրանց հիմ: Նա մասնակցում ե նրանց աշխատանքին և նրանց մոտ ներկայացնում ե ամբողջ աշխատավոր լերիտասարդության պահանջները:

Հստ վորում կոմյերիտմիությունը յելնում և սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրներից յեվ համաձայնեցնում ե բանվոր յերիտասարդության պահանջներն ամբողջ բանվոր դասակարգի շահերի հետ:

Պրոլետարիատի գիլիատուրայի շրջանում կոմյերիտմիության գործունելության պայմանների և բռվանդակության վոփոխության համեմատ լայնանում են և նրա սոցիալիստական շրջանակները: Կոմյերիտմիությունը հանդիսանում ե բանվոր և գյուղացի լերիտասարդության միակ հասարակական և քաղաքական մասսական մաս: Կազմակերպությունը: Կոմյերիտմիությունը ծգտում ե իր շարքերում կազմակերպել քաղաքի յեվ գյուղի ամբողջ բանվոր յերիտասարդությունը, ինչպես նայեվ չքավոր գյուղացի յերիտասարդության լայն խավերը յեվ միջակ յերիտասարդության լավագույն տարրերը:

Կոմյերիտմիությունը համախմբում ե գնալով ավելի լայն խավեր և իր կազմով հանդիսանում ե

բանվորա-գյուղացիական կազմակերպություն։ Բայց  
յեվ այնպես իր քաղաքական դերով, իր Եյությամբ  
յեվ իր աշխատանքների մեթոդներով նա հանդիսա-  
նում ե պրոլետարական կազմակերպություն։

Կոմյերիտմիության աշխատանքի կարևորագույն  
նախապայմանը և ճիշտ պրոլետարական գծի կիրառ-  
ման նախապայմանը, նրա շարքերում յեղած գյուղա-  
ցի յերիտասարդության զգալի մասսայի գոյության  
հետ կապված, հանդիսանում և կոմյերիտմիության  
յերկու մասերի՝ բանվորների յեվ գյուղացիների հաս-  
տառուն միության պահպանումը, ամուր պրոլետա-  
րական դեկավարությունը, կոմյերիտմիության մեջ  
բանվոր յերիտասարդության դեկավարող դերի պար-  
տադիր ու հետեւղողական պահպանման հիման վրա։  
Դրա հետ կապված տարվում և կոմյերիտմիության  
աճման կարգավորման քաղաքականությունը և ակ-  
տիվի առաջքաշման սիստեմը։ Պրոլետարիատի  
դիկտատուրան հնարավոր և դառնում նաև բանվոր  
յերիտասարդության հեղեմոնիան (դեկավարությու-  
նը) աշխատավոր յերիտասարդության մնացած խա-  
վերի վրա կոմյերիտմիության միջոցով։ Պրոլետա-  
րական դեկավարության յերաշխիքը կոմյերիտմիու-  
թյան մեջ, ինչպես նայեվ նրա կողմից իր առաջ դըր-  
ված հսկայական խնդիրների իրազործման յերաշխիքը  
հանդիսանում ե կուսակցական դեկավարությունը,  
վորն իրագործվում ե կոմյերիտմիության մեջ աշխա-  
տող կուսակցության անդամների միջոցով յեվ ան-  
միջականորեն կուսակցական կազմակերպությունների  
կողմից։ Լենինյան կուսակցությունը, վորը դեկավա-  
րում ե պրոլետարական դիկտատուրան ԽՍՀՄ-ում,

կոմմոնիստական շարժման մեջ հին յեվ նոր սերնդի միջեւ յեղած ճիշտ փոխնարարերության փայլուն որինակն ե տալիս:

Բացի յերիտասարդությունն իր շարքերում կաղմակերպելուց, կոմյերիտմիությունն աշխատավոր յերիտասարդության վոչ պրոլետարական խավերի վրա իր ազգեցությունը ուարածելու և նրան դեկավարելու այլ հնարավորություններ ևս ունի (պետական ապահովատի, պրոֆմիությունների, կոռպերատիվների, սպորտային կազմակերպությունների, կուլտուրական կազմակերպությունների աշխատանքին մասնակցելու միջոցով):

Կոմյերիտմիության քաղաքական, լուսավորական աշխատանքը խորանում և լայնանում և նրա նպատակային դիրքավորման փոփոխման և նրա գաղափարական ու նյութական հնարավորությունների ավելացման հետևանքով՝ կոմյերիտմիությունը լայն աշխատանք և ծավալում աշխատավոր յերիտասարդության քաղաքական լուսավորության և նրա կուլտուրական մակարդակի բարձրացման համար։ Նա ձգտում է աշխատավոր յերիտասարդությունը դաստիարակել կոլլեկտիվիստական վոգով։ Նա շարունակ աշխատավոր յերիտասարդությանը բացատրում է սոցիալիստական շինարարության խնդիրները և ընթանում է կուլտուրական հեղափոխության առաջին շարքերում, կուլտուրական հեղափոխության, վորոնանության անհրաժեշտ և պրոլետարական քաղաքական և ոնտեսական հեղափոխության հետ միասին։

Կոմյերիտմիությունը կուսակցության և խորհրդային իշխանության հետ միասին բոլոր ուժերով պար-

քարում ե հին շահագործողական պայմանների մնացորդների դեմ, կապիտալիստական անկուլտուրականության, տղիտության ու հետամնացության դեմ, մարդկանց բուրժուական և մանր-բուրժուական փոխարարերությունների դեմ և կապիտալիստական հասարակությունից ծանր ժառանգություն մնացած ըուլոր արատների դեմ: Կոմյերիտմիությունը վճռականորեն պայքարում ե կրօնական արքեցման դեմ, սեփականատիրական յեսասիրության դեմ, մեշչանականության դեմ, անհատապաշտական և համքարային ձգտությունից դեմ: Կոմյերիտմիությունը յերիտասարդության առաջ պարզում ե պրոլետարիատին թշնամի կապիտալիստական տարրերի պայքարի մեթոդները և ձևերը և աշխատավոր յերիտասարդությունը մորիլիզացիայի յե յենթարկում նրանց դեմ պայքարելու համար:

Կոմյերիտմիությունն առանձին ուշադրություն ե դարձնում աշխատավորների յերեխանների վրա: Բանվոր դասակարգի յերեխանների դրությունն արմատապես փոխվում ե վոչ միայն այն պատճառով, վոր փոխվում ե բանվորի դրությունը, պրոլետարական մորդրությունը և իրավունքներն, այլև այն պատճառով, վոր պրոլետարական պետությունն աստիճանաբար ստեղծում ե բոլոր անհրաժեշտ պայմանները յերեխանների դաստիարակության, նրանց բոլոր ուժերի և ընդունակությունների զարգացման համար, քանի վոր պրոլետարական դիկտատուրան յերեխանների մեջ տեսնում ե իր ապագան:

Կոմյերիտմիությունը պատանեկական կոմմունիստական շարժմանն աջակցելը և այդ շարժումը դեկտարական համար բում ե իր հիմնական խնդիրներից մեկը:

Պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճվելուց հետո կոմյերիտմիությունն այդպիսով կանգնում է դասակարգերի վերափոխմանը — նայել մարդկային մատերիալի գաղափարական վերամշակման իմաստով նոր սոցիալիստական սերնդի կրթությանը յեզ դաստիարակությանը մասնակցելու գործին ամենալայն ու գիտակից մասնակցություն ունենալու պատմական խնդրի առաջ։ Կոմյերիտմիությունն իր կուլտուրական աշխատանքը յենթարկում է հիմնական բաղաքարական խնդիրներին, քանի վոր այդ աշխատանքը միայն այդ պայմանով կարող ե դառնալ կոմմունիստական դաստիարակության բաղկացուցիչ մասը։

Մինչ այն ժամանակ, քանի դեռ հին շահագործող դասակարգերի մնացորդները շարունակում են իրենց պայքարը պրոլետարական դիկտատուրայի դիմ, դասակարգավին պայքարը շարունակվելու յի, թեև նոր ձևերով։

Կոմմունիստական յերիտասարդական միությունների պարտականությունն է ամեն կերպ ոգնել այլ յերկրների աշխատավոր յերիտասարդության պայքարին։ Կոմմունիստական յերիտասարդական միությունները կապիտալիստական յերկրներում մինչեւ վերջին շունչը պայքարում են՝ պաշտպանելու համար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունները։

ԿԱՄՄՈՒՆԻՍՏՈՒՆ ՅԵՐԻՏՈՒՐԴԻԾԿԸՆ ԽՆՏԵՐԴԱՑԻՌԵՎԱ ՊԱՑՁՅԱՌ  
ԳՈՂՈՒԹՆԵՐՈՒՄ

Կոմմունիստական յերիտացական միությունը  
յեվ ազգային հարցը

Մարդկության կեսից ավելին տառապում ե իմպերիալիզմի լծի տակ գաղութային յեվ կիսազաղութային յերկրներում։ Աշխարհի բաժանումը ճնշված և ճնշող ժողովուրդների, նրա բաժանումը փոքրաթիվ իմպերիալիստական պետությունների միջև՝ ազդեցությունների շրջանակների և գաղութների, տնտեսապես հետամիտաց ժողովուրդների շահագործումը և ազգային ճնշումը այդ իմպերիալիստական պետությունների կողմից հանդիսանում ե այն ամենաամուր հիմքերից մեկը, վորոնց վրա ներկայումս հաստատված ե կապիտալիստական հասարակակարգը։ Իմպերիալիզմը կործանում է հին կուլտուրաները գաղութներում, ամենախորը կարիքի մեջ և թաղում աշխատավոր մասսաներին, հատկապես գյուղացիության մասսաներին գատապարտում ե մուրացիկի քսակը վերցնելուն (պառապերիզացիայի), անտեսապես հյուծում է յերկիրը և ձգտում է յետ պահել նրա արտադրական ուժերի առումը և խանգարել ազգային տնտեսության դարպացումը։

Պարազիտների, ազահ հրեշների նման անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, լապոնական, իտալիական, բելգիական և այլ իմպերիալիստները նստած են ճնշված ժողովուրդների վզին և ծծում են աշխատավոր մասսաների արլունը։

Առանձին իմպերիալիստական պետությունները  
պարաբռում են իրար միջև պատրաստ վորսի համար,  
վորակին կասազի գիշտտիչներ այն ժամանակ, իրք  
հաղիկ բանվորների, չինական կուլիի, աֆրիկական  
գլուղացու և հարավամերիկյան բատրակի արյունն ու  
քրտինքը զբնգուն սովերենների և դոլարների յի վե-  
րածվում էոնդոնի և Նյու-Յորկի բորսաներում, իրք  
յապոնական անկուշտ իմպերիալիզմը փորձում ե կը-  
լանել Արևելյան Ասիան, յերբ Ֆրանսիայի, Բելգիայի,  
Իտալիա ի անհագ Փինանսական կապիտալը հոշոտում  
և Աֆրիկայի կեսը, յերբ հոլլանդական կապիտալն անո-  
դոքարար մտրակ ե շաչում ինդոնեզիայի պլանտացիա-  
ների իր բանվորների վրա:

Գաղութալին և կիսագաղութալին յերկրների ճշնշ-  
ված ժողովուրդների ազգային ազատագրական պար-  
աբ հսկայական դեր ե խաղում կապիտալի դեմ ուղղ-  
ված համաշխարհային հեղափոխության մեջ: Գաղութ-  
ների ազգային հեղափոխական շարժումների նշանա-  
կությունը կայանում ե նրանում, վոր նրանք՝ առա-  
ջին՝ հանդիսանում են անմիջական աջակցություն բան-  
վոր դասակարգին իմպերիալիզմի դեմ, պրոլետարիա-  
տի համաշխարհային դիկտատուրայի համար նրա մը-  
ղած պայքարում, յեվ յերկրորդ՝ գաղութներում նա-  
նապարհ են բաց անում դեպի սոցիալիստական հեղա-  
փոխությունը: Իմպերիալիստական յերկրների պրոլե-  
տարիատի միությունը ճնշված գաղութալին ժողո-  
վուրդների հետ՝ իմպերիալիզմի դեմ միատեղ պայքար  
մղելու համար, հանդիսանում ե բանվոր դասակարգի  
հաղթանակի կարեորագույն պայմաններից մեկը:

Գաղութներում յեվ կիսագաղութներում կոմմու-

նիստների հիմնական խնդիրը հանդիսանում երանվոր-ներին ինքնուրույն կազմակերպությունների մեջ համա-խմբելը՝ ազատագրելու համար նրանց ազգային բուր-ժուազիայի ղեկավարությունից։ Այդ հնարավոր և մի-այն այն դեպքում, յերբ կոմմունիստները լեռանդուն պալքար են մղում բուրժուատկան ազգային ռեֆորմից-մի դեմ։ Միայն հեղափոխական ճանապարհին, բանվոր դասակարգի ղեկավարությամբ հնարավոր և գաղութ-ների ազատագրումը, Բանվոր դասակարգը պիտք ե-դաշինք կնքի գյուղացիության հետ, ազատազրի գյու-ղացիական կազմակերպությունները բուրժուազիայի ազգեցությունից յեվ հեղեմոնիա (ղեկավարություն) ծեռք բերի գաղութային հեղափոխության մեջ։ Ազգա-յին բուրժուազիայի հետ ժամանակավոր համաձայնու-թյուններ թուրյատընկեր յեն միայն այնքան, վորքան ալդ բուրժուազիան չի խանգարում բանվորների և գյուղացիների ինքնուրույն համախմբմանը և ակտիվ կերպով մասնակցում ե հեղափոխական պալքարին իմ-պերիալիզմի դեմ։

Կապիտալիստական յերկրներում ևս զանազան ազգային փոքրամասնություններ ձնշման են յենթարկ-վում տիրապետող իմպերիալիստական բուրժուազիայի կողմից։ Այս ձնշման առաջին հերթին ուղղված ե աշ-խատավոր մասսաների դեմ, բանվորների և գյուղացի-ների դեմ, մինչդեռ ազգային փոքրամասնության բուր-ժուազիայի վերին խավերը համագործակցում են տի-րապետող իմպերիալիստական բուրժուազիայի հետ։ Ազգային հարցում կոմմունիստները պաշտպանում են ազգերի ինքնորոշման իրավունքը մինչեվ լիակատար բաժանման յեվ անկախության աստիճանը։ Դրա հետ

կապված, ինչպես կոմկուսակցության, նույնպես և կոմյերիտմիության սկզբունքալին լողունդը հանդիսանում և ճնշված ազգային փոքրամասնությունների ազգային իրավունքների ու պահանջների պաշտպանությունը, ինչպես, որինակ, սեփական լեզու գործ ածելու իրավունքը, ուսուցում և դպրոց ազգային լեզվով, առանձին պահանջներ ազգային փոքրամասնություններին պատկանող զինվորների համար և այլն։ Ազգակուսով հանդես գալով հոգուտ ճնշված ժողովուրդների ազգային իրավունքների՝ կոմյերիտմիությունը միաժամանակ պայքարում և ամեն տեսակի և հատկապես տիրող ազգերի ազգային շովինիզմի դեմ և հետևողականորեն պաշտպանում և պրոլետարական ինտերնացիոնալիզմի տեսակետը։ Կոմյերիտմիությունն աշխատում և իմպերիալիստական յերկրների ճնշված ազգային փոքրամասնությունների շրջանում յեղած հեղափոխական կաղմակերպությունների շարքերում՝ զրավելու համար նրանց միատեղ պայքարի կոմկուսակցության և կոմյերիտմիության ղեկավարությամբ։

Ճիշտ այդպես կոմյերիտմիությունը պաշտպանում և ինքնորոշման իրավունքը մինչև լիակատար բաժանման և անկախություն ձեռք բերելու աստիճանը, նաև գաղութների և կիսագաղութների համար։

Ազգային հուրցի արդարիսի լուծման ճանապարհով միայն հնարավոր և կապիտալիզմից ազատագրված բոլոր ժողովուրդների կամավոր միացումն իմպերիալիզմի դեմ և սոցիալիստական տնտեսության շինարարության ոգտին ընդհանուր պայքար մղելու համար։ Այս ճանապարհին կաղմվում է Խորհրդապային Սոցիալիստական Հանրապետությունների Համաշխարհային Միություն։

Ազգալին հարցի կոմմունիստական լուծումն արդեն կատարված և Խորհրդավոլին Միության մեջ։ Անցյալում ճնշված ազգային փոքրամասնությունները և ցարիզմի գաղութներն արթնացել են և առլում են նոր ազգային կուտառեական և տնտեսական կյանքով, ձեռք են բերել ազգային ինքնուրուկնություն, ստեղծել են սեփական պետություն և վորագես հավասարներ միացել են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության այդ ժողովուրդների հետ, Դրա համար ել Խորհրդային Միությունը բոլոր ճնշված ժողովուրդների համար հանդիսանում է մի զորեղ ուրինակ յեվ պատկեր, վորից նրանք քաղում են նոր ուժ յեվ յեռանդ՝ պայքարելու համար իմպերիալիստական լծի դեմ։

Կոմյերիտմիությունը նաև աջակցում է իմպերիալիստական բռնի տիրապետության դեմ ուղղված վորեե շարժման վոչ միայն գաղութներում և կիսագաղութներում, այլև այն յերկրներում, վորոնք ձեականորեն անկախ են, ամենից առաջ կենտրոնական և Հարավային Ամերիկալում։

Առանձին գաղութների և կիսագաղութների դրությունը տարբեր է, կախված լինելով այն հանգամանքից, թե ինչ չափով կապիտալիստական զարգացումը մուտք է գործել այդ լերկրները և այնտեղ առաջադիմել ե։ Մինչդեռ հետամնաց գաղութներում և կիսագաղութներում բաժանումը գասակարգերի կապիտալիստական զարգացման տեսակետից գեռևս կատարված չե, և այնտեղ դեռ տիրապետում են ֆեոդալական և նահապետական հարաբերությունները, ավելի առաջավոր գաղութներում նկատվում ե ֆեոդալիզմի մեաւ-

ցորդները մարմնացնող խոշոր հողատերերի և արիստոկրատիալի գնալով ավելի պարզորոշ բաժանումը բուրժուազիալից, մանր բուրժուազիալից, բանվոր դասակարգից և գյուղացիությունից:

Դաղութներում և կիսագաղութներում բուրժուական դեմոկրատական հեղափոխության զլիավոր պահանջը հանդիսանում է ազգային ազատազրությունը և միավորումն ու ազրարային հարցի լուծումն, այսինքն տղատազրումը ֆեռոդալիզմից և իմպերիալիզմից: Այս հեղափոխության մեջ պըոլետարիատը ձգառում է հաստատել բանվորների և գյուղացիների դեմոկրատական դիկտատուրա խորհուրդների հիման վրա: Բուրժուական դեմոկրատական ետապում արդեն առաջավոր գաղութների բանվոր դասակարգը պետք է ծգուի դեկավար դեր (հեղեմոնիա) ծեռք բերել գյուղացիության յեվ հեղափոխական մանր բուրժուազիայի նկատմամբ:

Բուրժուական դեմոկրատական հեղափոխության ընթացքում ազգային բուրժուազիայի անխուսափելի դավաճանության հետևանքով հեղափոխությունը կարող է մինչև վերջը տարվել միայն պըոլետարիատի դեկավարությամբ և միայն այդ ճանապարհով հնարավոր և պըոլետարիատի պայքարը հանուն իր վերջնական դասակարգային նպատակների և բուրժուական դեմոկրատական հեղափոխության վերածելու: Այս անցման պըոցեսը կախված է մի շարք Փակտորներից, վորոնց մեջ վճռական դեր խաղում են հետեւյալները, հեղափոխության բուրժուական դեմոկրատական խնդիրների լուծման աստիճանը, պըոլետարիատի և նրա կուսակցության ուժը, ինչպես նաև նրա ազդեցությունը գյուղացիության

վրա, առաջավոր կապիտալիստական յերկրների պրո-  
ւետարիատի ողնությունը, արդեն գոլությունն ունեցող  
խորհրդավիճ հանրապետությունների ողնությունը:

Այս ճանապարհին ներկա եպոխայում գաղութնե-  
րի առաջ հնարավորություն և բացված խուսափելու  
զարգացման կապիտալիստական աստիճանից: Քանի  
վոր մի եպոխայում, յերբ յերկրագնդի հսկայական մի  
մասի վրա՝ Խորհրդային Միության մեջ արդեն գոյու-  
թյուն ունի պրոլետարիատի դիկտատուրա և առաջա-  
վոր յերկրներում իշխանության նվաճումը բանվոր դա-  
սակարգի կողմից արդեն որակարգի խնդիր և դարձել,  
գաղութակին հեղափոխություններն ընդհանուր պրո-  
լետարական շարժման ուղղությամբ, չնայած առանձին  
վերցրած այդ յերկրների սոցիալապես հասունացած  
չլինելուն, կարող են տանել նրանց դեպի սոցիալիս-  
տական զարգացում:

Աշխատավոր յերիտասարդությունը, վորը գա-  
ղութներում յեվ կիսազաղութներում կրում և ծանր  
շահագործման, ճնշման ու դժկամակության կրկնակի  
լուծը, առանձնապես կարեվոր դեր և խաղում գաղու-  
թային հեղափոխության մեջ: Քանի վոր մի կողմից  
գաղութներում արտադրության մեջ զբաղված և յերե-  
խաների և յերիտասարդության առանձնապես մեծ տո-  
կոս, վորը լրացնում և բանակը, մյուս կողմից սովո-  
րող յերիտասարդության զգալի մասը սերուրեն կալ-  
ված և աշխատավորության մասաների հետ և յենթարկ-  
վում և նույնալիսի շահագործման: մյուս կողմից հենց  
յերիտասարդությունն և, վոր աճել և արդեն համաշ-  
խարհային պատելազգմի սթոլորտում, իմպերիալիզմի  
սրված ճնշման, հեղափոխական հեղաշրջումների և փո-

փոխությունների մթնոլորտում և լցված և կատաղի առելսւթ ամք դեպի իմպերիալիզմը և ամենից ավելի արիություն և անվախություն և հայտնաբերում բոլոր հեղափոխական պայքարներում։ Դասակարգերի բաժանումը գաղութներում անդրադասում և, սակայն, նաև յերիտասարդության վրա։ Վոչ միայն ֆեռդալիզմի և իմպերիալիզմի ներկայացուցիչներն, այլև սեփական բուրժուազիան ձգտում են յերիտասարդությունն առնել իրենց ազգեցության տակ և այս նպատակով ստեղծում են իրենց կազմակերպությունները։ Աշխատավոր յերիտասարդության պայքարի հիմնական պայմանը հանդիսանում է պայքարն ընդդեմ նացիոնալ-ռեֆորմիզմի յերիտասարդության վրա ունեցած ազգեցության և բանվոր ու գյուղացի յերիտասարդության անկախ, ինքնուրույն կազմակերպումը։

Յերիտկոմինտերնի հիմնական խնդիրն է գաղութային աշխատավոր յերիտասարդության պայքարի հեղափոխական ղեկավարության համար կոմիտեի միություններ ստեղծել բոլոր գաղութային յեզ կիսագաղութային յերկրներում։

Կոմյերիտմիության ստեղծման գործնական ճանապարհը միատեսակ չե բոլոր գաղութներում և կիսագաղութներում։

Մի շարք գաղութներում և կիսագաղութներում Յերիտկոմինտերնի կոնկրետ խնդիրները լերկու խմբի կարող են բաժանվել, նրանց զարգացման աստիճանին համապատասխան։

Առաջավոր գաղութներում յեզ կիսագաղութներում, փորոնք ունեն արդյունաբերություն յեզ պրոլետարիատ, Յերիտկոմինտերնի անմիջական գլխավոր

ինդիրը կոմյերիտմիություն կազմակերպելն եւ կոմյերիամիությունը պետք եւ ձգտի դառնալ մասսայական կազմակերպություն և աշխատավոր յերիտասարդության ղեկավար ինչպես նրա աղջային հեղափոխական, նույնպես և սոցիալիստական պայքարում։ Մասսաներին նվաճելու և կազմակերպելու նպատակով կոմյերիտմիությունը պետք եւ նաև ստեղծի գանազան կազմակերպություններ։

Վորոշ դեպքերում կոմյերիտմիությունը կարող է ստեղծել ազգային հեղափոխական, յերիտասարդական լայն կազմակերպություն, վորի ձեւը և բովանդակությունը կախված է յերկրի պայմանների և ազգային հեղափոխական զարգացման աստիճանից, և վորն իր եյությամբ մարմնացնում է բանվոր և գյուղացի յերիտասարդության բլոկը։ Այդպիսի դեպքում նա պետք է իր գլխավոր ուշադրությունը կենտրոնացնի հենց սկզբից նրա մեջ ապահովելու բանվոր յերիտասարդության և կոմյերիտմիության ղեկավարող դերը։

Հետամնաց գաղութներում, վորոնք դեռևս չեն զարդացած կապիտալիստորեն, վորտեղչկա զասակարգային բաժանում և չի զարգացած պրոլետարիատը Յերիտակոմինտերնը հետեւալ խնդիրն ունի։

1. Կոմմունիստական տարրերը համախմբելը և գիտակից կոմմունիստական կադրեր և խմբակներ ստեղծելը։

2. Աշխատավոր յերիտասարդության լայն մասսայական շարժման կազմակերպումը՝ ոտարերկրչակմաքերիալիստական լծից հեղափոխականորեն ազատագրը վելու, ագրարային հեղափոխության կատարման, կապիտալիստական յերկրների պրոլետարների հետ գա-

շինք կնքելու, յերիտասարդության տնտեսական, կուլ-  
տուրական և քաղաքական պահանջների համար մղվող  
պայքարի գրոշակի տակ, ապահովելով կոմմունիտա-  
կան ղեկավարությունը:

Ինչքան ավելի կոմմունիտական կադրերի և խըմ-  
բակների ազդեցությունը թափանցում եւ մասսաների  
մեջ, և ինչքան ավելի նրանք ապացուցում են մաս-  
սաների վրա իրենց ազդեցությունն ամրապնդելու հը-  
նարավորությունը, այնքան ավելի արագությամբ և  
հնարավոր դառնում իսկական մասսայական կոմմունիտ-  
ական յերիտասարդական միության կազմակերպումը  
և այդ յերկըներում:

Կոմյերիտիությունը վճռականորեն պայքարում  
և կանանց և աղջիկների անհավասարության և ստըր-  
կացման յուրահատուկ ձևերի դեմ գաղութային յեր-  
կըրներում—աղջիկների վաճառք, փոքրահասակ ամուս-  
նություն, հասարակական կյանքին մասնակցելու ար-  
դելք և այլն,—մասնակից դարձնելով աղջիկ յերիտ ս-  
սարդությունն աշխատավորների ընդհանուր ազատազբ-  
րական պայքարին և նրանց կազմակերպություններին:

Զինական հեղափոխության մեծ որինակը և չինա-  
կան հերոսական կոմյերիտիության որինակը ցուց են  
տվել Յերիտակոմինտերնի՝ դադություներում վարած ընդհա-  
նուր գծի ճշտությունը Զինաստանի կոմյերիտմիությու-  
նը, չնայած չափազանց ծանր հանգամանքներին, փոք-  
րիկ կիստուսանողական խմբակից վեր և ածվել հզոր  
պղուետարական մասսալական կազմակերպությանը Նա-  
ղեկավարություն և նվաճել չինական բանվոր յերիտա-  
սարդության վրա և աշխատավոր յերիտասարդության  
ամենալայն մասսաները հերոսաբար պայքարի յե-

առաջնորդել ընդդեմ ֆեոդալիզմի, իմպերիալիզմի և սեփական բուրժուազիայի, պատքարի չե առաջնորդել ինչպես հանուն հեղափոխության հիմնական լոգունվանքի, նույնպես և հանուն բանվոր և գյուղացի լերի տասարդության անմիջական կրնկրետ պահանջների և կարիքների։ Ամենավայրենի տերրորն անգամ չկարողավ վոչնչացնել նրան։ Բուրժուազիայի և միլիտարիզմի դահճային ռեժիմի պայմաններում նա պահպանեց և մինչև անգամ ամրապնդեց իր դիրքերը։

Զինաստանի կոմյերիտմիության զարգացումը և պալքարը վոգեշունչ որինակ են Հնդկաստանի, Ինդոնեզիայի և ամբողջ գաղութային աշխարհի աշխատավոր յերիտասարդության համար։

### ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԹԵԽԱՆՆԵՐԻ ԿԱՄՐՈՒԴԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԷՐԾԱԼԻԹՅՈՒՆՆԵՐԻ

Կոմյերիտմիության առանձին խնդիրն է հանդիսանում աշխատավորության յերեխաների շրջանում կոմմունիստական դաստիարակչական աշխատանքը։

Բուրժուազիան չի բավականանալ նրանով, վորշահագործում ե յերեխաների լայն մասսաները, այլև նա ճնշում ե նրանց հոգեպես Դպրոցները և բոլոր պետական կրթական հիմնարկները նրա կողմից ոգտագործվում են վորպես դաստիարակային դաստիարակության գործիք։ Երբեք այս զպրոցական դաստիարակության լրացում են ծառայում կրոնական ռեակցիոն և տյսպես կոչված «չեպոք» պատանեկական կազմակերպությունները, վորոնք միացնում են աշխատավորության յերեխաների լայն մասսաներ և բուրժուազիայի կողմից գտնում են ամեն տեսակի աշակցություն ու

խոշոր ազգեցություն ունենալ Նրանց հետ ձեռք ձեռքի տված աշխատում են սոցիալ-դեմոկրատական պատանեկան կազմակերպությունները։ Դրանից բացի յեկեղեցին, մամուլը, կինոն և այլն նույնպես միջոցներ են հանդիսանում յերեխաներին բուրժուական վողով սնելու, Բանվոր դաստիարագը բուրժուազիայի դասակարգային դաստիարակությանը հակադրում և պրոլետարական յերեխաների իր սեփական հեղափոխական դասակարգային դաստիարակությունը։

Անող սերնդի այդ հեղափոխական դասակարգային դաստիարակության, շահագործողների յեվ կրոնական ճնշման դեմ նրա պայքարը կազմակերպելու յեվ դաստիարակելու համար նոր մարտիկներ, վորոնք պիտի պայքարին կոմմոնիստական շարժման շարբերում, սոցիալիստական հեղափոխության համար յեվ վորպես կոմմոնիզմի կառուցողներ կոմմոնիստական յերիտասարդական միությունը կոմմոնիստական կուսակցությունների ղեկավարությամբ կազմակերպում և կոմմոնիստական պատանեկան միություններ (պատանի պիոներները)։

Կոմմոնիստական դաստիարակությունը կատարվել կարող և միայն պրոլետարական յերեխաներին բանվոր դասակարգի պայքարին և աշխատանքին մասնակից դարձնելու դեպքում։

Պատանեկան կոմմոնիստական միության ամբողջ դաստիարակչական աշխատանքի յեվ նրա յուրաքանչյուր բջիջի յեվ խմբակի հիմքը հանդիսանում է յերեխաների ներդրավումը պրոլետարիատի դաստիարակային պայքարում։ Վորոշ ձեերով նրանց հնարավոր մտանակցությունը կոմյերիտմիության և կոմկու-

սակցության հեղափոխական դործունելությանը, վորը  
պետք ե պլանաչափ կերպով հարմարեցրած լինի զա-  
նազան հաստի յերեխաների ըմբռնողությանը և շա-  
հերին, յերեխաների ներգրավումը պրոլետարիատի  
դասակարգային պայքարին յեվ վորոշ ծեվերով նրանց  
հնարավոր ներգրավումը կույցերի տմիության յեվ կոմ-  
կուսակցության հեղափոխական պայքարի մեջ։ Հա-  
րուստ ներքին կյանքի, յերեխաների բնավորությանը  
համապատասխանող ագիտացիայի և պրոլաբանդի  
կենդանի ու բազմազան զարգացման ճանապարհով,  
գործադրելով հատուկ պիոներական մեթոդներ, ֆի-  
զիկական կուլտուրա, պրոլետարական կուլտուրական  
աշխատանք և այլն, պատանեկական միությունը դաս-  
տիարակում ե փոխարինողների կոմմունիստական սե-  
րունդ։ Նրա դաստիարակության մեթոդների մեջ մըտ-  
նում ե յերեխաների հնար ինդածին չափ լայն ինքնա-  
գործունելությունը և սեփական նախաձեռնությունը  
պատասխական կազմակերպության ներսում և նրա-  
նից դուրս։

Պատանեկական կոմմունիստական Միությունը  
պայքարում ե աշխատավրության յերեխաների լայն  
մասսաների պահանջների և շահերի համար։ Նա պայ-  
քարում ե յերեխաների տնտեսական շահագործման դեմ,  
միլիտարիզմի դեմ, կրօնական և աղքային խարելու-  
թյան դեմ, վորոնք տարածվում են բուրժուական դըպ-  
րոցում։ Նրա խնդիրը հանդիսանում ե պայքարը ընդդիմ  
բուրժուական և նախ և առաջ կրօնական ազգայնա-  
կան և սոցիալ-դեմոկրատական պատանեկական կազ-  
մակերպությունների։ Այս խնդիրները դնելով իր առաջ՝  
նա միացնում և կազմակերպում ե դյուղի և քաղաքի

աշխատավորության յերեխաների ամենալայն ժամանելը:

Իր դաստիարակչական աշխատանքի մեջ պատահեկան միությունը, բնականաբար, գնում և ավելի պարզ խնդիրներ, քան կոմյերիտմիությունը: Նրա սոցիալական հիմքը գրա համար ել պետք և ավելի լայն լինի, քան կոմյերիտմիությանը: Կոմմունիստական պատանեկական միությունը հանդիսանում է բոլոր աշխատավորների յերեխաների կոմմունիստական դաստարակության կազմակերպությունը:

Պատանեկական կոմմունիստական միությունն աշխատում է կոմմունիստական յերիտասարդական միության ղեկավարությամբ յեվ կոմմունիստական կուսակցության, ընդհանուր ղեկավարության հիման վրա: Կոմյերիտմիությունը ղեկավար կազմեր և ընտրում կոմմունիստական պատանեկական միության համար և հոգում և նրանց հասակավոր բանվորների կողմից անհրաժեշտ ուղղություն ու աջակցություն ցուց տալու համար: Պատանեկական միությունն իր կազմակերպություններն ստեղծում և ամենից առաջ այնտեղ, ուր աշխատում և սովորում են յերեխաների մասսաները, վորտեղ նրանք ամենից ավելի յենթարկվում են բուրժուական ազգեցությանը և շահագործմանը (դպրոցներում—դպրոցական բջիջներ և ձեռնարկություններում—յերեխաների արտադրական բջիջներ, վորոնք հարում են կոմյերիտմիության բջիջներին): Այս դպրոցական յեվ արտադրական պատանեկական բջիջները կազմում են կոմմունիստական պատանեկական միության կազմակերպության հիմքը:

Կոմյերիտմիությունն, այդպիսով, աշխատավորությունը, ժերեխաներ, ծր.—5

թւան յերեխաների շըջանում կատարած իր դաստիառակչական աշխատանքի մեթոդներով ու նպատակներով խստորեն տարբերվում ե սոցիալ-դեմոկրատներից, վորոնք մերժում են պատանիների ամեն մի մասնակցություն գասակարգային պայքարին և քաղաքականությանը և պատանեկական շարժման փոխարեն խնամակալություն են ստեղծում յերեխաների նկատմամբ, առանց վորեա ինքնազրեծունեյության և կազմակերպության, զբաղեցնելով նրանց միայն խաղերով և իրր թե զուտ կուլտուրական խնդիրներով, մինչդեռ իսկապես նրանք նպատակ ունեն գաստիարակել կապիտալի «հու ստրուկներ»:

### ԿՈՄՅԵՐԻՑՄԻՌԻԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴ ԱՌԱՋԱՎԱՐ ԵԵՐԻՏԱՍԵՐԴԻԹՅՈՒՆՆ ՖԻԶԻԿԱԾՆ ԳՈՒՏԻՇՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ

Կոմյերիտմիությունը հանդիս ե գալիս հոգուտ աշխատավոր յերիտասարդության և առհասարակ աշխատավորության ֆիզիկական ամրապնդման ու զարգացման՝ դաստկարգային հիմունքներով կառուցված սեփական մարմնամարդական և սպորտային կազմակերպություններում: Բանվորական մարմնամարդական և սպորտային կազմակերպություններ հիմնելն անհրաժեշտ ե աշխատավորներին և հատկապիս աշխատավոր յերիտասարդությունը ֆիզիկական տեսակետից ևս պատրաստելու համար հեղափոխական դասակարգային պայքարի պահանջներին և հեռացնելու նրանց ըուրժուական մարմնամարդական և սպորտային կազմակերպություններից: Մարմնամարդական յեվսպորտային կազմակերպությունները քաղաքականապես չեզոք կազմակերպություններ չեն յեվլինել չեն

կարող: Ինչպես բուրժուազիայի, նույնպես յեվ բանվոր դասակարգի համար նրանք հանդիսանում են իրենց քաղաքական ազդեցությունն ամրացնելու միջոց յեվ դասակարգային պայքարի վորոշ խնդիրներ իրագործելու: Կողմանակի միջոց: Կոմյերիտմիության համար բանվորական մարմնամարզական և սպորտային կազմակերպությունները հանդիսանում են աշխատավոր յերիտասարդության մասսաներին ընդգրկելու և նվաճելու կարևորագույն ուղիներից մեկը:

Վոչ մի ուրիշ պրոլետարական կազմակերպության մեջ բանվոր յերիտասարդությունը չի համախմբված քանակազես այնքան մեծ չափով, ինչպես սպորտային և մարմնամարզական բանվորական կազմակերպություններում: Դասակարգային հակասությունների աճմանը զուգընթաց բուրժուազիայի և պրոլետարիատի միջև յերիտասարդության համար մղվող պայքարը սրվում ենտե սպորտալին կազմակերպություններում: Բուրժուազիան ձգտում ե սպորտը դարձնել տշխատավոր յերիտասարդության գաղափարական նվաճման, նրա միլիոնարիստական դաստիարակության և տնտեսական շահագործման կարեվորագույն միջոցներից մեկը (զործարանային սպորտը, մարմնամարզությունն ընդմիջումների ժամանակ, ռազմական գիմնաստիկան զպրոցներում): Բուրժուական սպորտալին շարժման դեմ տարվելիք պալքարը միաժամանակ հանդիսանում ե պայքար սոցիալ-դեմոկրատիայի դեմ, վորն իր քաղաքականությամբ բանվորական մարմնամարզական, սպորտային շարժման մեջ նպաստում ե բուրժուազիային իրագործելու ժիր նպատակները:

Այս բնագավառում կոմմունիստական յերիտասարդական միության կարեվորագույն խնդիրը հանդիսանում ե բանվորական սպորտային ընկերությունների գաղափարական յեվ կազմակերպչական բաժանումը բուրժուական սպորտային շարժումից յեվ ինքնուրույն բանվորական սպորտային միությունների ստեղծումը։ Այս նպատակով կոմիերիտմիությունը բուրժուական մասսայական սպորտային միությունների մեջ, ֆրակցիոն աշխատանք և կատարում և աշխատում ե քայլարդարձությունը նրանց, վորոշեսպի նրանց անդամներին դրդի անցնել բանվորական սպորտային շարժման մեջ, և վորտեղ հարկադրությունը այդ նպատակով կազմակերպում ե բանվորական տարրերի ոպպոզիցիա։ Բանվորական սպորտային շարժման ներսում կոմիերիտմիության խնդիրները հանդիսանում են՝ բանվորական սպորտային կազմակերպությունները բանվոր գասակարգի առողջյա պայքարին և հատկապես պատերազմի վատանգի ու ֆաշիզմի դեմ մղվող պայքարին մասնակից գարձնելը, (ֆրակցիաների և ոպպոզիցիաների միջոցով) քաղաքական և ներկազմակերպական պայքարը ու փորմիստական քաղաքականության դեմ, ինչպես նաև պալքար կուցերնի ու փորմիստական սպորտային ինտերնացիոնալի դեմ, հարատե առորյա աշխատանք սպորտով զբաղվող բանվուների մասսաների մեջ բանվորական սպորտային շարժման ազգային ու միջազգային համախմբման համար, հեղափոխական հիմունքներով աջակցություն Կարմիր Սպորտային ինտերնացիոնալին, նրա ժողովրդականացումը և նրա սկզբունքների, քաղաքականության և հրահանգների կիրառումը բո-

լոր բանվորական մարմամարդական և սպորտային կաղմակերպություններում, կարմիր սպորտային միությունները մասսայական միությունների վերածելը:

Ռազմական սպորտը ֆիզիկական դաստիարակության աւճ ձեռն ե, վոր լուշոր նշանակություն ունի ֆաշիզմի հետ մզվող պայքարի հետ կապված և բանվոր դաստիարգի ռազմական ինքնադաստիարակության անհրաժեշտության հետևանքով: Կոմյերիտամիությունն աշխատում ե, վոր բանվորական սպորտային կաղմակերպությունները յերիտասարդության ֆիզիկական դաստիարակության հարցում սերտորեն համագործակցեն այնպիսի կաղմակերպությունների հետ, ինչպիսիք են Կարմիր-ճակատայինների Միությունը, Կարմիր Յունգֆրոնտը և այլն:

Կապիտալիզմի ժամանակ սպորտը և մարմամարդությունը բուրժուազիայի համար միջոց են հանդիսանում իր քաղաքական ազդեցությունն ընդառակելու, իմպերիալիստական բանակի և շահ ստանալու գործի համար կադրեր պատրաստելու, մինչդեռ իրականում կապիտալիզմի պայմաններում աշխատավոր յերիտասարդության լայն մասսաները զրկված են իսկական ֆիզիկական դաստիարակության և սպորտային գործունեյությամբ պարագելու միջոցներից և հնարավորություններից: Միայն արուեստարիատի դիկտատուրան է հնարավորություն ստեղծում դրահամար, կրնատելով յերիտասարդ բանվորի աշխատաժամերը, պահպանելով ու ամրապնդելով նրա առողջությունը, աստիճանաբար ավելի ու ավելի կարգավորելով նրա արտադրական աշխատանքը դաստիարակության տեսակետից, կոլեկտիվ վոգի

մտցնելով սպորտի մեջ յեվ նրա տրամադրության տակ դնելով պրոլետարական պետության հզոր միջոցները։ Դրա լավագույն ապացույցը հանդիսանում ե ֆիզիկական կուլտուրայի փայլուն վերելքը Խորհրդային Միության մեջ։

### ՊԱՇՔԸՐ ՅԵՐԻՑԸՍԸՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԵՄԸՐ ԿՈՄԵՐԻՑԻ ԿՈՒՐՅԱՅՑ ԽԱԿԱՌԱԿՈՒԳԸՐԵՐ

Բոլոր յերկրներում անընդհատ պայքար ե տեղի ունենում բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև յերիտասարդության վրա գաղափարական ազդեցություն ունենալու և նրան նվաճելու համար։ Պայքարող յերկու կողմերի համար ել, ինչպես կործանվող հին կապիտալիստական հասարակության, նույնպես ել բուռն կերպով առաջ խոյացող պրոլետարիատի համար յերիտասարդության նվաճման հարցը կենսականորեն կարեոր հարց և «Ապագան նրանն ե, ում հետ վոր յերիտասարդությունն ե», յեվ «ում հետ ե յերիտասարդությունը, նրա հետ ե յեվ բանակը»։ Այդ դրություններն արտահայտում են այդ հարցի եյությունը։

Ինչքան սրվում են դասակարգային հակասությունները և դասակարգային պայքարն, ինչքան ավելի խոշոր գեր ե խաղում պատերազմի հարցն, այնքան ավելի գնուականորեն և դաժանությամբ ե պայքարում բուրժուազիան՝ պահպանելու համար իր գաղափարական տիրապետությունը յերիտասարդության վրա։ Նա զարգացնում ե յերիտասարդության ֆաշիզացիութիւնը և միլիտարիզացիայի մի ամբողջ սիստեմ, վորն սկսում է վաղ յերեխայտական հասակից դպրո-

ցում. մի սխտեմ, վորի ամենակարեոր և ամենավը-  
տանգավոր լծակները հանդիսանում են զանազան  
բուրժուական . յերիտասարդական կազմակերպու-  
թյուններ։

Ֆաշիզմը հանդիսանում է բուրժուական իմպե-  
րիալիստական ռեակցիայի ձևերից մեկը, վորը բան-  
վոր դասակարգի նկատմամբ կիրառվող ամենակատա-  
զի տերրորի և արյունահեղ հարձակումների միջոցով  
ձգտում ե վոչչացնել նրա հեղափոխական ավան-  
դարդը։ Սակայն սիամամանակ ֆաշիզմը սոցիալական  
դեմագոգիայի և կաշառման միջոցով հենվում ե նաև  
քաղաքի և գյուղի վորոշ մանր-բուրժուական խավե-  
րի վրա և ձգտում ե թափանցել բանվոր դասակարգի  
շարքերը։

Ֆաշիզմն առանձնատուկ ուշադրություն - ե  
դարձնում աշխատավոր յերիտասարդությունը դադա-  
փարապես քայլքայելու և նվաճելու վրա, վորին նա  
ձգտում ե իր կողմը գրավել առանձին մեթոդների  
ողնությամբ։ Յերիտասարդության ուղմական ուսուց-  
ման զանազան պետական և «չեղոք», պարտադիր և  
«կամավոր» կազմակերպություններ սերտորեն կապ-  
ված են ֆաշիզմի հետ և ազգակից են նրան, հաճախ  
կազմելով նրա հետ մի ընդհանուր ամբողջություն։

Բուրժուազիան զարգացնում ե հատուկ յերի-  
տասարդական կազմակերպությունների մի ամբողջ  
ցանց, վորոնք իրենց դեմքն ուղղում են դեպի աշ-  
խատավոր յերիտասարդության լայն խավերը, վո-  
րոնք իրենց քաղաքական գույնն ստանում են ֆա-  
շիզմից յեւ սոցիալ-դեմոկրատական կազմակերպու-  
թյուններից, վորոնք տարբեր ծեվեր են ընդունում,

փորոնք զբաղվում են յերիտասարդության կյանքի բոլոր հարցերով, սկսած զուտ քաղաքական, մարտական խնդիրներից յեվ վերջացրած աշխատավոր յերիտասարդության տարրական կուլտուրական կարգներով։ Այս բազմակողմանի սիստեմին են պատկանում ինչպես ռազմական ուսուցման կազմակերպությունները և բուրժուական սպորտային կազմակերպությունները, նույնպիս և կրօնական ընկերությունները և պացիֆիստական կազմակերպությունները։ Աշխատավոր յերիտասարդության մեջ առանձնապես լայնորեն տարածված են բուրժուական սպորտային յեվ կրօնական կազմակերպությունները, վորոնք հաջողությամբ թագցնում են պլուտարիատին թշնամի իրենց զասակարգային եյությունը չեղոքության և հայրենասիրության դիմակի տակ։ Աշխատավոր յերիտասարդության համար չափազանց վտանգավոր են նաև բուրժուական և մանր-բուրժուական զանազան պացիֆիստական կազմակերպությունները, վորոնք իրականում միայն քողարկում են իմպերիալիզմի սպառազինությունը և մասսաների ուշադրությունը հեռացնում են իմպերիալիստական պատերազմի և կապիտալիստական սիստեմի դեմ մզվելիք իսկական պայքարից։

Դյուզում զանազան յերիտասարդական կազմակերպություններ կուլտակային գլուղացիական տարրերի, կալվածատերերի և յեկեղեցու դեկավարությամբ նույնպես կատարում են բուրժուազիական պատերազմի և կապիտալիստական սիստեմի դեմ մզվելիք իսկական պայքարից։

Յերիտասարդության համար մղվող պայքարում տարրեր ծեվերով յերեվան յեկող սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիզմը նույնպես կատարում է բուր-

ժուազիայի ոժանդակ զոկատի դեր: Բոլոր գույների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները դարձել են բուրժուազիայի ուղղակի և անուղղակի դաշնակիցները պրոլետարիատի բանակում: Նրանք ձըգտում են փրկել կապիտալիզմը կործանումից և իրենց առաջ խնդիր են դնում ոգնել կապիտալիստական հասարակության վերականգնմանը և ամրապնդմանը: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները հանդիս են գալիս առունձին լերկրներում հոգուտ միլիտարիզմի ուժեղացման և սոցիալիստական դիմակի տակ՝ հանուն իրենց իմպերիալիստական բուրժուազիայի նպատակների (սոցիալ-իմպերիալիզմ): Նրանք բոլոր միջոցներով դիմադրում են բանվոր գասակարգի հեղափոխական պայքարին և դավաճանում են վոչ միայն նրա վերջնական նպատակներին, այլև բանվորական մասսաների առորյա ամենատարրական պահանջներին: Ահա թե ինչու սոցիալ-դեմոկրատական կուսակցություններն իրենցից ներկայացնում են վոչ այլ ինչ, յեթե վոչ բուրժուական քառվորական կուսակցություններ», բանվորական միայն իրենց կազմով և անունով և բուրժուական ու ռեակցիօն իրենց դերով և եյությամբ: Առանց սոցիալ-դեմոկրատիայի աջակցության բուրժուազիան չեր կարող յետ մղել հեղափոխության այն ալիքը, վորն սպառնում ե կլանել նրան: Դրա համար ել կոմմունիստական լերիտասարդական միության համար սոցիալ-դեմոկրատական ու միության համար սոցիալ-դեմոկրատական յեվ ամենավտանգավոր հակառակորդը բանվոր յերիտասարդության շրջանում:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների

հետ միասին սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունները յեվս լիովին անցել են բուրժուական բանվորական կազմակերպությունների վերածվելու ուղին, վորոնք կողմնակից են դասակարգային խաղաղության յեվ կապիտալիզմի շինարարության։ Այս բուրժուականացումը յերեան և գալիս վոչ միայն նրանց ընդհանուր քաղաքական դիրքավորման մեջ, այլև յերիտասարդության հարցերի բնագավառում, նրանց տեսական և պրակտիկ դործունեյության մեջ։ Սոցիալ-դեմոկրատական յերիտասարդական կազմակերպությունները սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների նման խոչընողուն հանդիսանում բանվոր յերիտասարդության ազատագրման ճանապարհին, խոչընողուն, վորը պետք ե վոչնչացվի։

Սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիզմի առանձնապես վտանգավոր գունավորումը հանդիսանում է այսպես կոչված «ձախ» (ցենտրիստական) սոցիալ-դեմոկրատիան, վորը սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիզմի ամենառեալցիոն գունավորման հետ ունեցած իր լիակատար իրական միարանությունը և իր թըշնամությունը հեղափոխության նկատմամբ թագցնում է կեղծ հեղափոխական «ձախ» ֆրազներով։ Այդպիսով, սոցիալ-դեմոկրատիալի «ձախ» թէն իրականում ծառալում է միայն բանվորական մասսաներին առանձնապես նուրբ ծեվերով խարելու նպատակին։ Նրա գերը կալանում է նրանում, վորակեռզի խարի ամենից առաջ այն բանվորներին, վորոնք արդեն գտնվում են կոմմունիզմի ճանապարհին և պահի նրանց սոցիալ-դեմոկրատիալի (այսինքն՝ բուրժուա-

զիալի) բանակում։ Դրա համար ել սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիզմի այդ տեսակն ավելի վտանգավոր հակառակորդ և հանդիսանում, քան կոմմունիզմի բացորոշ թշնամիները, քան սոցիալ-իմպերիալիզմի բացարձակ կողմնակիցները։

Ներկայումս անարխիզմը յեվ անարխո-սինդիկալիզմը ևս հանդիսանում են վոչ այլ ինչ, յեթե վոչ ռեֆորմիզմի նյուղավորումը, վորոնք բացասում են պրոլետարական դիկտատուրայի, պրոլետարական կուսակցության և պրոլետարական ցենտրալիզմի անհրաժեշտությունը, մերժում են ապստամբությունը վորպիս բանվոր դասակարգի պայքարի ձև և պարքարում են Խորհրդային Միության դիմ։ Սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիզմն իր ավելի քաղաքական ձեռվ սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների ձեռվ գեռնս բանվոր յերիտասարդության մեջ չկա բանվորական արիստոկրատիա ալդ բառի իսկական իմաստով։ Սակայն ռեֆորմիզմն, այնուամենայնիվ, ձգտում է իր ազգեցությունը տարածել յերիտասարդության վրա նաև այլ արտաքինից ապաքաղաքական ձևերով։ Դրա համար նա ոգաւագործում է ռեֆորմիստական դեկավարության տակ գտնվող պրոֆմիությունները, ռեֆորմիստական մարմնաւարդական յեվ սպորտային կազմակերպությունները, տուրիստական ընկերությունները, յերիտասարդական կուլտուրական կազմակերպությունները յեվ այլն։ Այս նաև ապարհով նա զգա-

լի ազդեցություն ե գործում բանվոր յերիտասարդության վրա:

Ծեակցիոն և հեղափոխական ուժերի միջև յերիտասարդության համար մզվող պայքարը տեղի յեւնենում նաև գաղութներում: Ինչպես ճնշող իմակերիալիստական պետությունների բուրժուազիան, նույնպես ել գաղութների և կիսագաղութների կալվածատերերը, բուրժուազիան և հոգեորականությունը ձգտում են զանազան կազմակերպությունների միջոցով իրենց հունով տանել յերիտասարդությունը:

Ալդ գեալքում խոշորագույն դեր խաղում ե կրոնական ուսմունքների (քրիստոնեական, բուդիզմական, մահմեղական և ալլն) ողտագործումը և դրա հետ միասին գաղութային բուրժուազիայի ազգային ռեֆորմիզմի տարբեր ծեփերը: Դրա որինակներն են հանդիսանում սունյաթսենիզմը յեվ գանդիզմը, վորոնք վորոշ աստիճանում վորոշ դեր են կատարել հակարմակերիալիստական շարժման մեջ, սակայն ներկայումս, զարգացման նոր աստիճանում, դարձել են ռեակցիոն ուժեր: Սունյաթսենիզմը դասակարգալին բաժանումը քողարկում ե «Ժողովուրդ» ուսուցիկ հասկացողությամբ և դրա համար ել վորոշ աստիճանի վրա խոչընդոտ ե դարձել բանվոր դասակարգի և դյուզացիության դասակարգալին պալքարի զարգացման համար: Գանդիզմը քարոզում ե համբերատարություն, հնագանդություն ճնշողներին, հրաժարիմք դասակարգալին պալքարից, վերադարձ դեպի տնտեսության հետազեմ ձևերը և դրա համար ել ուղղված ե աշխատավոր մասսաների հեղափոխական պայքարի դեմ:

Կոմյերիտոմիությունը յեռանդուն պայքար ե մը-

դում քոլոր բուրժուական յերիտասարդական կազմակերպությունների յեվ համախմբումների դեմ։ Այդ պայքարը սերտորեն կապված է բանվոր դասակարգի և կոմկուսակցության կողմից բուրժուական կուսակցությունների և առնասարակ բուրժուազիալի դեմ մղվող պայքարի հետ, վորի որդանները հանդիսանում են այդ յերիտասարդական կազմակերպությունները։ Կոմյերիտմիությունը ձգտում է այդ կազմակերպություններույ գտնվող աշխատավոր յերիտասարդներին նվաճել բանվոր դասակարգի կողմը և հրահը. և նրանց մտնելու նրա գասակարգավին կազմակերպությունների և կոմյերիտմիության մեջ, կոմյերիտմիությունը բանվոր դասակարգի այլ կազմակերպությունների հետ միասին (նախ և առաջ Կարմիր-ճակատաշինները՝ Միության և Կարմիր Յունգֆրոնտի հետ) առանձին վճռականությամբ և բոլոր ուժերով կավում է փաշխատական կազմակերպությունների դեմ։

Կոմյերիտմիությունն իրեն նպատակ է դնում չեղոքացնել սոցիալ-դեմոկրատական, սինդիկալիստական յեվ անարխիստական ազգեցությունը յերիտասարդության վրայից յեվ լիկվիդացիայի յենթարկել այդ ուղղությունների յերիտասարդական կազմակերպությունները։

Կոմյերիտմիությունը ձգտում է պրոլետարական դասակարգային պայքարի ճիշտ ճանապարհի բերել բանվոր յերիտասարդության ներկայումս դեռ չկազմակերպված կամ բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատիայի կողմից խաբված մասսաները։ Նա ձրգտում է վերջնականապես համախմբել ամբողջ յերի-

տասարդությունը կոմմունիզմի հողի վրա։ Իր ժամանակին և հատկապես պատերազմից հետո ուժորմիստական և ցենտրիստական սոցիալ-դեմոկրատական յերիտասարդական միությունները հեռացան միասնական յերիտասարդական հեղափոխական ինտերնացիոնալիցին և կազմեցին առանձին, ալտպես կոչված «Պառակտիչների ինտերնացիոնալ կազմակերպություն»։ Նրանք պառակտեցին բանվոր յերիտասարդությունը, վորը, սակայն, չխանգարեց նրանց դեմագոգիաբար հանդես դալու հոգուա «միասնականության»։ Դրանով իսկ նրանք իրենք ցույց տվին, վոր յերիտասարդության սոցիալ-դեմոկրատական դեկավարների արտաքսումը պրոլետարական յերիտասարդական շարժման շարքերից անխուսափելի յեր։ Կազմակերպչական յեվ քաղաքական միասնականությունը (այսինքն միացումը) կոմյերիտմիության յեվ սոցիալ-դեմոկրատական յերիտասարդական կազմակերպությունների միջեվ անհնարին ե, բանի վոր վերջիններս անց են կացնում ըստ եյության բուրժուական, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների քաղաքականությունը յեվ հարում են նրանց։ ամբողջ բանվոր յերիտասարդության համախմբումը կարող եր տեղի ունենալ յեվ տեղի կունենա միայն կոմինտերնի յեվ Յերիտկոմինտերնի պլատֆորմայի հիման վրա։

Պայքար մղելով հակառակորդ կազմակերպությունների գեմ, կոմյերիտմիությունը, սակայն, ձըգտում ե բանվոր յերիտասարդության պահանջների համար մղվող պայքարին մասնակից դարձնել այդ կազմակերպությունների աշխատավոր անդամների և

առնասարակ զանազան կազմակերպություններում գտնվող, ինչպես նաև անկուսակցական բոլոր լերի-տասարդ բանվորներին և բանվորուհիներին։ Կոմյե-րիտմիությունը բանվոր յերիտասարդության մաս-սաների պրոլետարական միասնական ֆրոնտի հա-մար մղվող պայքարի մեջ, միասնական ճակատի տակտիկայի մեջ տեսնում ե ամբողջ հեղափոխական շրջանում, յերիտասարդ բանվորների հեղափոխական մորիլիզացիայի և նվաճման և միասնական ճակատին և մասսաների պայքարին ընդդիմացող սոցիալ-դեմո-կրատական առաջնորդների մերկացման կարեռա-գույն միջոցներից մեկը։

Չնայած բոլոր սահմաններին, չնայած բոլոր այն պատճեններին, վոր ստեղծում են իմպերիալիստ-ները և նրանց ռեֆորմիստական կամակատարները, բոլոր յերկրների աշխատավոր յերիտասարդությունը Յերիտկոմինտերնի ղեկավարությամբ կստեղծի մի միասնական մարտական բանակ։

Հեղափոխական յերիտասարդությունը մինչեւ այժմ յեղել ե հեղափոխության ամենապայծառ, ա-մենամաքուր բողը։ Նա սրանից հետո յեվս կլինի համաշխարհային պրոլետարիատի հեղափոխական ամենաբոցավառ անմար հուրը։ Կոմմունիստական ինտերնացիոնալի շաբաթերում գտնվող իր հասակա-վոր յեղբայրների հետ միասին, կոմմունիստական ինտերնացիոնալի, վորի մարտական զորաշարքերին պատկանում է նաև Յերիտկոմինտերնը, բոլոր յեր-կըրների աշխատավոր յերիտասարդությունն ընթա-նում ե առաջ դեպի մեծ նպատակը, —

խորտակելու համար համաշխարհալին կապիտա-

լիզմը, դեպի համաշխարհային կոմմունիզմ և դրանով իսկ դեպի աշխատավոր լերիտասարդության ամենալիակատար ազատազրումը այսորվա նրա ստրուկ վիճակից:

**Մենք սկսել ենք պայքարը:** Պայքարն ընդդեմ բուրժուական թշնամիների ամբողջ աշխարհի; ընդդեմ մեր դրոշակներին դավաճանողների:

Վոչ մի դահիճ, դատարան յեվ կախաղան չեն կարող խլացնել մեր կոչը: **Մեր գործերն ու գոհերը դահիճներին յեվ ծաղրողներին անզամ կստիպեն լուել:**

Վերջնական հաղթանակը մեզ համար ապահովում են զարդացման յերկաթյա ընթացքը, մեր պատմական նախատեսությունը, մեր կոմմունիստական հանալողությունը, մեր յերիտասարդ սրտերի վոգեվորությունն ու քաջարի վճռականությունը:

Յերիտասարդ բանվորներ յեվ բանվորունիներ, բոլոր յերկրների աշխատավոր յերիտասարդներ:

**Մեղմեցեք շարքերը:**

Համախմբվեցեք Յերիտասարդական Կոմմունիստական Խնտերնացիոնալի կարմիր դրոշակի տակ:

## ԿԻՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### I. ԿՈՄՄԱՆՑԵՐՆԻ ԿԸՆՈՒՑՎԱԾ-ՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ-ՆԵՐԸ

1. Կոմմունիզմի կողմը նվաճել բոլոր յերկրների աշխատավոր լերիտասարդությունը և այդ իրականացնելու համար շանհրաժեշտ՝ պրոլետարական դիկտատորան, գաստիարակել և կազմակերպել այդ յերիտասարդությունը, հիմք ընդունելով նրա ակտիվ մասնակցությունը պրոլետարիատի հեղափոխական շարժմանը և կապիտալիզմի՝ մանավանդ իմպերիալիտատական պատերազմի դեմ նրա մզած պայքարին,—այս բոլորն այնպիսի խնդիրներ են, վորոնք պետք և իրագործվեն միջադգային մասշտաբով։ Այդ պատճառով յերիտասարդության կոմմունիստական միությունները, վորոնք պայքար են մզում կոմմունիստական ինտերնացիոնալի նպատակների համար և այդ շրջանակներում քաղաքի, գյուղի, գաղութային, կիսագաղութային ու կախումն ունեցող ժողովուրդների աշխատավոր յերիտասարդության քաղաքական, տընտեսական և կուլտուրական պահանջների համար, վորոնք պայքարում են այդ աշխատավոր յերիտասարդությունը կոմմունիստական ինտերնացիոնալի շարքերը ներգրավելու և նրանից կոմմունիստական կուսակցությունների ռեզերվ ստեղծելու համար, միացան

և կազմեցին լերիտասարդության միասնական միջազգային կոմմունիստական կազմակերպությունը:

2. Այդ կազմակերպության անունն է «Յերիտասարդության կոմմունիստական ինտերնացիոնալի»:

3. Յերիտասարդության կոմմունիստական ինտերնացիոնալի կոմմունիստական ինտերնացիոնալի մի սեկցիան ե, վորն ընդունում ե նրա ծրագիրն ու կանոնադրությունը և իր ամբողջ գործունեյության բնագավառում լենթարկվում և կոմինտերնին և նրա Գործադիր կոմիտելին:

4. ԿիՄ-ի հիմքը կազմում են աղքային սեկցիաները, վորոնք անվերապահորեն ընդունում են ԿիՄ-ի ծրագիրն ու կանոնադրությունը և կենսագործում են նրա Համաշխարհային կոնգրեսսի ու Գործադիր կոմիտելի վորոշումները:

ԿիՄ-ի բոլոր սեկցիաները կոչվում են համապատասխան լերկրի «Յերիտասարդության կոմմունիստական Միություն» (Յերիտասարդության կոմմունիստական ինտերնացիոնալի սեկցիա): Յուրաքանչյուր լերկրում կարող ե գոյություն ունենալ ԿիՄ-ի միայն մի սեկցիա: Նոր սեկցիաներ ընդունելու հարցը վորոշվում ե Գործադիր կոմիտեյի կողմից և վերջնականապես՝ Համաշխարհային կոնգրեսսի կողմից:

5. Յուրաքանչյուր տվյալ լերկրի կոմյերիտմիություն՝ իր գործունեյության բնագավառում լենթարկվում ե համապատասխան լերկրի կոմմունիստական կուսակցության (կոմինտերնի սեկցիային)՝ աղքային շրջանակի սահմաններում: Տարածայնությունների դիպում կոմյերիտմիությունը դեկավար-

վում և կոմինաերնի և ԿԻՄ-ի վորոշումներով և միջազգային կարգապահությունն ավելի բարձր եղասում, քան ազգային կուսակցական կարգապահությունը:

ԿԻՄ-ի և կոնխտերնի բոլոր ղեկավար որդանաների միջև սահմանվում է փոխադարձ ներկայացուցչություն՝ վճռական ձայնով, ԿԻՄ-ն ել նմանապես ընտրում և իր թվին համապատասխան պատվիրածկություն՝ կուսակցության բոլոր համագումարներին և կոնֆերենցիաներին:

6. Կոմիերիտմիության և ԿԻՄ-ի անդամ կարող ել լինել մինչև 23 տարեկան հասակ ունեցող ամեն մի անձն, վորն ընդունում և տվյալ յերկրի կոմիերիտմիության ծրագիրն ու կանոնադրությունը, վորն ընդունված և միության բջիջի կամ հիմնական ստորադաս կազմակերպություններից մեկի մեջ, ակտիվ մասնակցում և միութենական աշխատանքին, կանոնավոր մուծում և իր անդամավճարները և կենսագործում և կոմիերիտմիության և ԿԻՄ-ի բոլոր վորոշումները:

7. Կոմիերիտմիության կազմակերպչական հիմնական միավորն և արտադրական բջիջը, փողոցի և գյուղի բջիջը (գործարանում, հանքավայրում, արհեստանոցում, հիմնարկում, կալվածում, գյուղում, բնակավայրում), վորի մեջ պետք և մտնեն կոմիերիտմիության այն բոլոր անդամները, վորոնք աշխատում կամ ապրում են տվյալ վայրում:

8. Բանվորա-գյուղացիական յերիտասարդության անկուսակցական մասսայական բոլոր կազմակերպություններում (արհմիություններ, սպորտային կազմակերպություններ, ուսումնական կազմակերպություն-

ներ, կուլտուրական-լուսավորական կազմակերպություններ և այլն), վորտեղ կան կոմիերիտմիության անդամներ, նրանք միանում և կազմում են կոմիերիտմիության ֆրակցիա:

9. ԿիՄ-ը և նրա սեկցիաները կազմակերպվում են դեմոկրատիկ կենտրոնացման սկզբունքով: Դեմոկրատիկ կենտրոնացման դեկավար հիմունքներն են՝

ա) միության բոլոր դեկավար որդանները՝ ըսկըսած բջիջների բուրոներից մինչև կենտրոնական կոմիտեն, ընտրվում են անդամների ընդհանուր ժողովներում, շրջանային (մարզային) և ազգային համագումարներում: Դեկավար որդանները պետք են հաշիվ տան իրենց ընտրողներին կամ նրանց ընտրած ներկայացուցիչներին.

բ) կոմիերիտմիության ստորագաս կազմակերպությունները և անդամներն անպայման ընդունում են միության բարձրագույն որդանների բոլոր վորոշումները, միութենական խիստ դիսցիպլինա յին պահպանում, արագորհն և լիակատար կերպով կիրառում են ԿիՄ-ի ու Կոմինտերնի Գործկոմների և միութենական ու կուսակցական դեկավար որդանների վորոշումները.

գ) միութենական և կուսակցական հարցերի շուրջը դիսկուսսիաներ կարող են անդի ունենալ, մինչև վոր այդ հարցերի առթիվ վորուել վորոշում կկայացնեն համապատասխան միութենական և կուսակցական որդանները կամ ԿիՄ-ի ու Կոմինտերնի Գործադիր Կոմիտեները: Վերոհիշյալ որդաններից մեկն ու մեկը տվյալ հարցի շուրջը հատուկ վորոշում ընդունելուց հետո, դիսկուսսիային վերջ ե տրվում, և վորո-

շումը պետք և կենսագործվի նույնիսկ այն դեպքում,  
յերբ անդամների կամ տեղական ու ազգային կազմա-  
կերպությունների մի մասը համաձայն չե ալդ վո-  
րոշման:

Անլեզար աշխատանքի պայմաններում միության  
բարձրագույն որդանները կարող են նշանակել ստո-  
րադաս որդաններ և կոռապտացիալի յենթարկել նոր  
անդամներ՝ միության բարձրագույն որդանների հաս-  
տատությամբ:

Կենտկոմի համար նոր անդամ կոռապտացիալի  
յենթարկելիս անհրաժեշտ ե, վոր նրան հաստատի  
կիՄ-ի ֆորձկոմը:

10. ԿիՄ-ում և նրա սեկցիաններում բոլոր ան-  
դամների և կազմակերպությունների մեծագույն պար-  
տականությունն ե՝ պահպանել միութենական և կու-  
սակցական խստագույն դիսցիպլինա: Դիսցիպլինալի  
խախտումը կենթարկվի դիսցիպլինար պատժի: Կազ-  
մակերպությունների նկատմամբ ալդ պատիժները  
հետևյալներն են՝ հանդիմանություն, փոփոխում և  
նշանակում ժամանակավոր ղեկավար որդանի, վորն  
իր Փունկցիաները կատարում ե մինչեւ կոնֆերենցիա  
գումարվելը, կազմակերպության լուծում և անդամների  
վերստին հաշվարկում: Անդամների նկատմամբ կարող  
են գործադրվել՝ հանդիմանություն, պաշտոնից հեռա-  
ցում, ժամանակավոր վտարում և վերջնական վտարում:  
Դիսցիպլինար պատասխանատվության յենթարկված  
կազմակերպությունները և անդամներն իրավունք  
ունեն համապատասխան վորոշումը բողոքարկել  
բարձրադաս որդաններին՝ մինչեւ Համաշխարհային  
կոնգրեսսը: Մինչեւ բողոքարկման կարգով հարուցված

հարցի վերջնականապես լուծվելը դիսցիպլինար միշտոցը պահպանում ե իր ուժը:

## II. ԿԻՄԻ ՀԵՄԵԹԵՐՀԵՑԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

11. ԿԻՄ-ի բարձրագույն որդանը Համաշխարհային Կոնգրեսսն ե: Ընդհանրապես նա գումարվում ե Կոմինտերնի ամեն մի Համաշխարհային Կոնգրեսսից հետո: Յուրաքանչյուր սեկցիա պարտավոր ե ուղարկել իր պատվիրակները: Նրանց թիվը վորոշում ե Գործկումը:

12. Համաշխարհային Կոնգրեսսի համար կոմիերիտմիության պատվիրակներ ընտրվում են ըստ հընարավորության կոմյերիտմիության համագումարների կողմից: Յեթև Համաշխարհային Կոնգրեսսի նախորյակին կոմյերիտմիության համագումար չի հրավիրվել, ապա Համաշխարհային Կոնգրեսսի համար պատվիրակներ ընտրվում են կոմյերիտմիության կոնֆերենցիայում կամ ԿԿ-ի պլենումում:

Պատվիրակների ընտրության առթիվ պետք ե հիմնովին մշակվեն Համաշխարհային Կոնգրեսսի հարցերը:

13. Յուրաքանչյուր սեկցիային տրվող վճռական ձայների թիվը սահմանվում ե Համաշխարհային Կոնգրեսսի վորոշմամբ, վորի համար հիմք ե ընդունվում համապատասխան միության անդամների թիվը և տվյալյերկի քաղաքական նշանակությունը:

ԿԻՄ-ի Գործկումի անդամները Համաշխարհային Կոնգրեսսի աշխատանքներին մասնակցում են խորհըրդակցական ձայնով:

14. Միմիայն Համաշխարհային Կոնգրեսսն իրա-

գունք ունի փոխել ԿիՄ-ի ծրագիրը և կանոնադրությունը. Կոնգրեսսն ստուգում ե ԿիՄ-ի, նրա Փորձկոմի և սեկցիաների գործունեյությունը և վորոշումներ են ընդունում ԿիՄ-ի ու նրա սեկցիաների ծրագրային, տակտիկական և կազմակերպչական հարցերի շուրջը: Կոնգրեսսի վորոշումները պարտապիր են ամեն մի սեկցիայի և կոմիտեի տմբության ամեն մի անդամի համար:

15. Արտակարգ Համաշխարհային Կոնգրեսս կարող է գումարվել Գործկոմի կողմից կամ այն սեկցիաների պահանջով, վորոնք վերջին Համաշխարհային Կոնգրեսսում միասին ունեցին վճռական ձայների առնվազն կեսը: Դրա համար յուրաքանչյուր գեպքում անհրաժեշտ է կոմինտերնի համաձայնությունը:

### III. ԳՈՐԾԵԴԻՔ ԿՐՄԻՑԵ

16. ԿիՄ-ի Գործկոմը ԿիՄ-ի ղեկավար որգանն է հանդիսանում համաշխարհային յերկու կոնգրեսսների միջև: Գործկոմի անդամները յուրաքանչյուր Համաշխարհային Կոնգրեսսում ընտրվում են անվանական կարգով:

Գործկոմի անդամների և թեկնածուների թիվը յուրաքանչյուր անդամ սահմանվում է Համաշխարհային Կոնգրեսսի կողմից:

17. Գործադիր կոմիտեյի պլենումը գումարվում է պարբերաբար, Նա ղեկավարում է ԿիՄ-ի բոլոր սեկցիաների գործունելությունը, հոկում և նրանց աշխատանքին և միջազգային վորոշումների իրագործման: Գործկոմի վորոշումները պարտապիր են ԿիՄ-ի բոլոր սեկցիաների համար: Միություններն իրավունք

ունեն այդ վորոշումները բողոքարկել Համաշխարհային կոնգրեսսին։ Սակայն մինչև վոր կոնգրեսսը չըփոխի այդ վորոշումները, ԿԻՄ-ի սեկցիաները չեն առատվում այդ վորոշումները կատարելու պարտականությունից, այլ ընդհակառակը, պարտավոր են ամեն ջանք գործադրել դրանք անհապաղ կենսագործելու համար։

18. Գործկոմը կամ Գործկոմի նախագահությունը կարող ե Գործկոմի պլենումի նիստերին մտանակից դարձնել սեկցիաների հատուկ ներկայացուցիչներին։

19. Գործադիր կոմիտեն իրավունք ունի վերացնելու կամ փոխելու կոմյերիտմիությունների կհնարունական կոմիտեների և համագումարների վորոշումները։

20. Գործադիր կոմիտեն իրավունք ունի վտարելու ԿԻՄ-ից առանձին կոմյերիտմիությունները, նըրանց կազմակերպությունները կամ առանձին անդամներին, յեթե նրանք գործում են ծրարագրին, կանոնադրությանը կամ Համաշխարհային կոնգրեսսի վորոշումներին հակառակ։ Վտարման լենթարկվածներն իրավունք ունեն բողոքարկելու հաջորդ Համաշխարհային կոնգրեսսին։

21. Գործադիր կոմիտեն իր անդամներից ընտրում ե նախագահություն, վորը զեկավարում և Գործկոմի քաղաքական ու կազմակերպչական աշխատանքը և կենտրոնացնում ե վերջինս, կարգավորում և վերահսկում է Գործկոմի ընդունած վորոշումների կենսագործմանը։ Ապա նախագահությունն ամբողջ աշխատանքը բաշխում է Գործկոմի անդամների միջև, ներ-

կայացուցիչներ և նշանակում առանձին յերկրները և աշխատակիցների կադր և գրավում՝ առանձին քնարգավառներում աշխատելու կամ վորպես Գործկոմի ներկայացուցիչներ, առանձին սեկցիաներն ուղարկելու համար։ Նախագահության անդամների և թեկնածուների թիվը սահմանում է Գործադիր Կոմիտեյի պլենումը։

22. Նախադահության աշխատանքները նախագահութաստելու և կատարելու, միջազգային մյուս կողմակերպությունների, Գործկոմի արտասահմանում դաշնվող անդամների և պատվիրակությունների հետ կապ պահպանելու և Գործկոմի ապահարատը կառավարելու համար Գործկոմն ընտրում և Քարտուղարություն, Նախադահությունն, անհրաժեշտ դեպքում, իրավունք ունի փոխելու և լրացնելու Քարտուղարության կազմը։ Այդ փոփոխությունները պետք են ներկայացվեն Գործկոմին ի հաստատություն։

23. Գործկոմը կանոնավոր կերպով հրատարակում և կիՄ-ի կենտրոնական որգան «Յերիտասարդության հնտերնացիոնալ» թերթը՝ գեթ բոլոր կարևորագույն լեզուներով։

24. Սեկցիաների կամ սեկցիաների խմբերի հետ կապ պահպանելու, նրանց ավելի լավ դաստիարակելու և նրանց աշխատանքին ավելի լավ վերահսկելու համար, ինչպես նաև կիՄ-ի հրատարակչական գործունեությունը զեկավարելու համար, Գործկոմն իրավունք ունի համապատասխան քնարգավառներում ստեղծել հատուկ քարտուղարություններ, վորոնք աշխատում են նրա զեկավարությամբ և վերահսկողությամբ։ Գործկոմն իրավունք ունի՝ նայած կիՄ-ի պահանջ-

ներին, ստեղծել նրա գործունեյության համար ան-  
հրաժեշտ ապարատ:

26. ԿիՄ-ի և կոմինտերնի Գործկոմները պետք ե  
գտնվեն միևնույն վայրում:

#### IV. ԿԻՄ-Ի ՍԵԿՏԻԾՆԵՐԸ

26. ԿիՄ-ի սեկցիաների կենտրոնական կոմիտե-  
ները պարտավոր են Գործկոմին ինֆորմացիա տալ ի-  
րենց զործունելության վերաբերյալ բոլոր հարցերի  
մասին, ուղարկել նրան իրենց նիստերի բոլոր ար-  
ձանագրությունները և միության վերաբերյալ բոլոր  
այլ նյութերը, ընթացիկ գրականություն վարել նրա  
հետ և սիստեմատիկաբար՝ առնվազն յերկու ամիսը մի  
անգամ, հաշիվ տալ նրան:

27. Կոմիերիտմիության համագումարները կարող  
են հրավիրվել կենտրոնական կոմիտեյի կողմից՝ մի-  
միայն Գործկոմի համաձայնությամբ։ Կենտրոնական  
կոմիտեները պարտավոր են նաև հաղորդել Գործկո-  
մին կե-ի այն բոլոր պլենար նիստերի և ազգային  
կոնֆերենցիաների մասին, վոր հրավիրում են ի-  
րենք։ Բացի դրանից, կենտկոմները պարտավոր են  
ժամանակին Գործկոմին ուղարկել այդ նիստերի բո-  
լոր նախապարաստական նյութերը, վորպեսզի Գործ-  
կոմը կարողանա իր կարծիքը հայտնել նախապար-  
աստվող վորոշումների մասին, իր ցուցումները տալ  
կոմյերիտմիության և ուղարկել ներկայացուցիչներին։

28. ԿիՄ-ի առանձին՝ մանավանդ հարեան սեկ-  
ցիաները, պետք ե կազմակերպչական և ինֆորմա-  
ցիոն սերտ կապ հաստատեն փոխադարձաբար։ Այդ

կապը կարելի յե իրականացնել կոնֆերենցիաներին կամ կոնգրեսսներին փոխադարձաբար ներկաւացուցիչներ ուղարկելով, մի շարք յերկրներում քաղաքական այս կամ այն առթիվ կոնֆերենցիաներ դումաբելով՝ ԿԻՄ-ի զեկավարությամբ ճառախոսների և զեկավար ուժերի փոխանակությամբ, փոխագարձ հաշվեավություններով, պատանեկական որեր կազմակերպելով և սիստեմատիկ կապ հաստատելով առանձին կոմյերիտմիությունների արտադրական բջիջների միջև։ Սակայն վերոհիշյալ բոլոր ձեռնարկումները կարող են կիրառվել միմիայն Գործկոմի համաձայնությամբ, նրա զեկավարությամբ և վերահսկողությամբ։

29. ԿԻՄ-ի մի շարք սեկցիաներ, միասին աշխատանք կազմակերպելու շահերից զրդված (որինակ՝ Բալկանական միությունները) կամ զործնական ու քաղաքական նկատառումներով, կարող են, ԿԻՄ-ի Գործկոմի համաձայնությամբ, կտղմել ֆեղերացիա, վորոնաշխատում և ԿԻՄ-ի Գործկոմի զեկավարությամբ և վերահսկողությամբ։

30. Անհրաժեշտ դեպքում կոմյերիտմիությունները պարտավոր են շարունակել իրենց գործունեյությունը նաև անլեզարկել կերպով։ Այդ մոմենտի համար նրանք պետք ե ժամանակին պատրաստվեն։ Գործկոմը պետք ե սիստեմատիկաբար վերահսկի իր սեկցիաների համապատասխան աշխատանքին և իր կողմից ամեն տեսակ ոգնություն ցուցի տա այդ նախապատրաստական աշխատանքին։

31. Կոմյերիտմիության անդամները կարող են այլ յերկիր փոխազրկել միմիայն իրենց կենարոնական կոմիտեի համաձայնությամբ։ Կոմյերիտմիության այն

անդամները, վորոնք կփոխադրվին առանց կենտրոնական կոմիտեյի թուլլտվության և մանդատի, չպետք ե ընդունվեն կիՄ-ի մի ալլ սեկցիա։ Իրենց բնակատեղը փոխողները պետք ե արձանագրվեն համապատասխան յերկրի կոմիերիտմիության մեջ։

## V. ՄԻԶԱԳԴԵՑԻՆ ԿՇՄՄՀԻՆԻՍՏԵԿԵՆ ՊԵՏԵՆԵԿԵԿԵՆ ՅԵՐԺՈՒՄ

32. Պրոլետարիատի յերեխաներին կոմմունիստական դաստիարակություն տալու համար, աշխատավորների յերեխաների շահերի ու պահանջների համար պայքար մղելու և նրանց ամբողջ բանվոր դասակարգի պայքարին մասնակից դարձնելու նպատակով յերիտասարդության կոմմունիստական միությունները բոլոր յերկրներում ստեղծում են կոմմունիստական պատանեկական կազմակերպություններ, վորոնք աշխատում են տվյալ յերկրի կոմիերիտմիության ղեկավարությամբ։

33. Գործադիր կոմիտեն կոմմունիստական պատանեկական կազմակերպությունների գործունեյությունը զեկավարում ե Գործկոմին կից կազմված Միջազգային Պատանեկական Բյուրոյի միջոցով։

## VI. ԿԻՄ-Ի ՓԻՆԸՆԸՆԵՐԸ

34. ԿիՄ-ի դրամական միջոցները կազմվում են՝ անդամավճարներից, հրատարակությունների յեկամուտներից, հտտուկ ժողովարարություններից և նվիրատվություններից։ Այդ միջոցները ծախսվում են՝ կիՄ-ի կազմակերպչական տպապարագը պահելու վրա,

ազիտացիայի և ուսմունքի, նաև թուլ սեկցիաներին ոժանդակելու գործի վրա:

35. Կոմիերիտամիությունները պարտավոր են ամեն տարի մուծել անդամավճար՝ ամերիկյան 5 ցենտ իրենց լուրաքանչյուր անդամի համար։ Սեկցիաները, կիՄ-ի Գործկոմի հետ միասին պետք է հոգան այդ վճարի մուծման մասին և հավաքված գումարն ամեն տարի հանձնեն կիՄ-ի Գործկոմին։

36. ԿիՄ-ի դրամական միջոցները գտնվում են կիՄ-ի Գործկոմի տրամադրության տակ։ ԿիՄ-ի Գործկոմի և նրան յենթակա քարտուղարությունների, հրատարակչությունների ու առանձին սեկցիաների գրամական գործերին վերահսկում ե Համաշխարհային կոնֆրեսսի կողմից ընտրված Միջազգային Վերսատուգիչ Հանձաժողովը։

## VII. ՄԻՋԱԶԳԻԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊՐ

37. Համաձայն 1915 թ. Բերնի պատանեկական կոնֆերենցիայի և կիՄ-ի առաջին կոնֆրեսսի վորոշություններին, ամեն տարի սետպեմբերի առաջին կիրակին անց ե կացվում Միջազգային Պատանեկական Որը։ Միջազգային Պատանեկական Որվա քաղաքական լոգունգները և միջազգային հրատապ լոգունգներն ամեն անգամ տալիս ե կիՄ-ի Գործկոմը։

ԿիՄ-ի բոլոր սեկցիաները պարտավոր են ջանալ վոր Միջազգային Պատանեկական Որը դառնա Ցերիտասարդության կոմմունիստական ինտերնացիոնալի մի հզոր ցույց և ոգտագործեն այն՝ իրենց անդամներին և բանվոր ցերիտասարդությանը ինտերնացիոնալ դաստիարակություն առլու համար։






## ՑԱՆԿ

b2

1. ԿիՄ.ի ծրագիրը . . . . .	3
2. ԿիՄ.ի կանոնագրությունը . . . . .	145





ԳԱԱ Հրանտարար գիլ. Գրադ.



FL0044780

(504)

A Г 8130

Программа и устав Ком. Интернационала  
Молодежи



4160 30 4.